

ՆԵԼԼԻ ՄԻՆԸՍՅԱՆ

ՄԻՆԵՂՈՒ ԼԿԱՆ
ՏԵՐՈՒԹՅԱՆ
ԿԸՕՍԱԿՆԻՆՈՒՄԻ,
ԵՎ ԼՆԿՈՒՄԻ,



9

5-71

Խ. ԱՔՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
 ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
 հ. Չ. ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ
 ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ
 ՄԵԹՈԴԻԿԱՅԻ ԱՄԲԻՈՆ

ՆԵԼԼԻ ՄԻՆԱՍՅԱՆ

**ՄՈՆԴՈԼԱԿԱՆ ՏԵՐՈՒԹՅԱՆ
 ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԱՆԿՈՒՄԸ**

Պատմության ֆակուլտետի պատմություն մասնագիտության
 բակալավրիատի ու մագիստրատուրայի ուսանողների համար

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՅՈՒԹԵՐ

5209

ԵՐԵՎԱՆ



ԻՐԱՏՐԱԿՈՇՊԵՆՆ

2015



ՀՏԴ 93/94 (042.4)

ԳՄԴ 63.3 ց7

Մ 710

**Հրատարակության և երաշխավորել
Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական
համալսարանի պատմության և իրավագիտության ֆակուլտետի
գիտական խորհուրդը**

**Խմբագիր՝ պ. գ. դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ռուբեն Սաֆրաստյան**

Մինասյան Նելլի

Մ 710 Մոնղոլական տերության կազմավորումը և անկումը:
Դասախոսությունների նյութեր / Ն. Մինասյան: ՀՊՄՀ: Պատմու-
թյան և իրավագիտության ֆակուլտետ. – Երևան: «Տիր» հրատ.,
2015. - 118 էջ:

Դասընթացը վերաբերում է համաշխարհային պատմության
մեջ ուրույն տեղ զբաղեցնող Չինգիզ խանին և Մոնղոլական տերու-
թյանը: Ներկայացված է Մոնղոլական տերության կազմավորման,
զարգացման և անկման պատմությունը, ինչպես նաև պետական
համակարգը և բանակը:

ՀՏԴ 93/94 (042.4)

ԳՄԴ 63.3 ց7

ISBN 978-9939-865-14-0



© Մինասյան Նելլի, 2015

Հայաստանի Հանրապետություն

- ա. Մոնղոլական ցեղերը ՄԴ-ՄԻ դարերում և նրանց ներդրումները
- բ. Մոնղոլական տերության կազմավորումը
- գ. Պեկինյան կայսր
- դ. Չինգիզական ցեղերի նվաճումները
- ե. Մոնղոլները և Վիվիլյան Հայաստանը
- զ. Մոնղոլական տերության արեւելք և արևմուտք
- է. Յուան սուլթանությունը Չինաստանում
- զ. Հարյուրամյակի պատերազմը Կենտրոնական Ասիայում
- ը. Իսկոնդր
- թ. Արտաշես Մինասյան

**NELLI ARTASHES MINASYAN
THE FORMATION AND DECLINE OF THE MONGOL EMPIRE**

Անցելի արտադրված էրանի արտոնին ներդրումների լավագույնը հիմն ընդունելով զուսարտադրանքը հիմնականորեն ընդգրկում էրանի արտադրանքը ցեղային կայսրը: Մոնղոլական տերության ընդունելը, արտոնին ու ընտանիքի ընդունելը, ինչպես նաև պարզինը հիմնականների ընդունելը կենտրոնի և մարտիքի, հարյուրամյակի պատերազմի ու ընդունելը արտադրվելով:

Դասախոսության սկզբում հարկավոր է էջել: Մոնղոլական տերության մասնավորապես Չինգիզ խանի բազմակի ընդունելը հիմնականում Ասիայի և Եվրոպայի ընդունելը արտադրանքը մեջ: Մոնղոլների նվաճումների արդյունքում տեղեկվում է Չինգիզական կայսրությանը, որն իր արտոնին ընդունելով, մարտիքի արտոնին համակարգում, ընդունելով և ընդունելով նշանակալի ընդունելով է մեծ ինչպես հիմ, այնպես էլ արդյուն հիմնարկային ընդունելով կենտրոնում:

- ա. Մոնղոլական ցեղերը VII-XII դարերում և նրանց հարևանները
- բ. Մոնղոլական տերության կազմավորումը
- գ. Պետական կարգը
- դ. Չինգիզյանների նվաճումները
- ե. Մոնղոլները և Կիլիկյան Հայաստանը
- զ. Մոնղոլական տերության տրոհումը և անկումը
 - ✓ Յուան արքայատունը Չինաստանում
 - ✓ Չաղաթայների պետությունը Կենտրոնական Ասիայում
 - ✓ Ոսկե Հորդա
 - ✓ Հուլավյաններն Իրանում
- է. Անփոփում

Անցնել առաջարկված ծրագրի առանձին ենթակետերի լուսաբանմանը՝ հիմք ընդունելով դասախոսության հիմնախնդրային բնույթը: Դասախոսության ընթացքում օգտագործել նախապես պատրաստված դիդակտիկ նյութերը. Մոնղոլական տերության քարտեզը, առանձին ուլուսների քարտեզները, ինչպես նաև պայդներ՝ նվաճումների, քոչվորական կենցաղի ու մշակույթի, հայտնի գործիչների, զինվորների ու զենքերի պատկերներով:

Դասախոսության սկզբում հարկավոր է նշել Մոնղոլական տերության, մասնավորապես Չինգիզ խանի բացառիկ դերը Կենտրոնական Ասիայի և քոչվորական քաղաքակրթության պատմության մեջ: Մոնղոլների նվաճումների արդյունքում ստեղծվում է մի հսկայածավալ կայսրություն, որն իր պատմությամբ, վարչապետական համակարգով, ռազմարվեստով և քոչվորական մշակույթով շարունակում է մնալ ինչպես հին, այնպես էլ արդի հետազոտողների ուշադրության կենտրոնում:



Մոնղոլական տերության քարտեզը

Թեմա 1. Մոնղոլական ցեղերը VII-XII դարերում և նրանց հարևանները

Կենտրոնական Ասիայում կազմավորված քոչվորական պետություններից ամենախոշորը Մոնղոլական տերությունն էր, որն իր ուրույն տեղն ունի համաշխարհային պատմության մեջ: Այն տիպիկ քոչվորական քաղաքակրթություն էր և իր վրա կրում էր տարածաշրջանի նախորդ նմանատիպ քաղաքակրթությունների ազդեցությունը, որոնք արտահայտվում էին վարչաքաղաքական, պետաիրավական և մշակութային կյանքի կազմակերպման բնագավառներում:

Մոնղոլների նախնիները հնագույն ժամանակներում բնակվել են ներկայիս Մոնղոլիայի, Արևելյան Միբիրի և Կենտրոնական Ասիայի հյուսիս-արևելյան շրջաններում: Այս տարածքները եղել են քոչվորների բնօրրաններ: Կենտրոնական Ասիայի այն հատվածը, որտեղ ստեղծվեց Մոնղոլական պետությունը, իր աշխարհագրական սահմաններով մեկուսացված էր ասիական մայրցամաքի մյուս մասերից: Արևմուտքում ձգվում էին Ալթայի և Տյան Շան լեռները, որոնք բնական պատնեշ էին արևմուտքից Մոնղոլիա մտնելու համար: Հարավից մեկ այլ բնական պատնեշ էր ստեղծում Գոբի անապատը: Հյուսիսում ձգվում էին Միբիրի լայնարձակ անտառները: Մոնղոլական բարձրավանդակը ծովի մակարդակից 1200-1800 մետր բարձրության վրա է և հարուստ է առանձին լեռնաշղթաներով: Մոնղոլիան ընկած է անտառների և տափաստանների միջև ու աչքի է ընկնում գետերով ու գետակներով: Կլիման չորային է, բացառությամբ հյուսիսային շրջանների, իսկ ջերմաստիճանի տարբերությունն ամռանն ու ձմռանը շատ մեծ է:

Եվրասիական տափաստանները միշտ բնակեցված են եղել քոչվորներով, որոնք, սովորաբար, պատկանել են նույն ազգային ու լեզվական հանրությանը՝ ալթայյան լեզվաընտանիքին: Նման քոչվոր ցեղերից են թյուրքերը, մոնղոլները և թանգուտները: Մոնղոլական ցեղերի մասին քիչ տեղեկություններ են պահպանվել, այն էլ հիմնականում չինական աղբյուրներում, ուստի Չինգիզ խանից առաջ մոնղոլների պատմությունը հնարավոր չէ ամբողջական և հավաստի

վերականգնել: Հայտնի է, որ մոնղոլական ցեղերը, ըստ զբաղմունքի, բաժանվում էին երկու խմբի՝ **անասնապահներ** և **անտառային-որսորդներ**: Նրանք զբաղվում էին որսորդությամբ, ձկնորսությամբ և անասնապահությամբ, մասնավորապես ոչխարաբուծությամբ և **ձիաբուծությամբ**: Այս ապրելակերպը ենթադրում էր անընդհատ քոչել մի վայրից մյուսը, ուստի մշտական բնակավայրեր չկային: Այս ցեղերը հաճախ էին պատերազմում միմյանց դեմ: Հիշատակվում է, որ անտառաբնակ ցեղերն ավելի ցածր մակարդակի վրա էին գտնվում, քան տափաստանաբնակները, քանզի վերջինները կրում էին իրենց անմիջական հարևանների՝ ույղուրների, կիդանների և չժուրչժենների, մշակութային ազդեցությունը:

Մոնղոլների պատմությունն անմիջականորեն աղերսվում է **Մեծ տափաստանի** պատմության հետ: Հնագույն հիշատակումների համաձայն քոչվորներն այստեղ բնակություն են հաստատել Ք. ա. III հազարամյակում: Այնուհետև Ք. ա. III-II հազարամյակներում քոչվորները տարածվում են ողջ տափաստանով և անգամ սկսում դուրս գալ դրա սահմաններից: Ք. ա. XII դ. քոչվորները նվաճում են Մեծ տափաստանի հյուսիսային հատվածը: Նրանք պատմությանը հայտնի են դառնում **խուննիներ** անվանումով: Փաստորեն այս շրջանից հիմք է դրվում Խուննիական կայսրությանը, որը, ամենայն հավանականությամբ, պայքար էր մղում տափաստանային ցեղերին միավորելու համար: Խուննիական կայսրությունն անընդհատ պատերազմներ էր մղում Չինաստանի դեմ, որի արդյունքում թուլանում է և անկում ապրում: Ստեղծված իրավիճակից օգտվում են խուննիների իշխանության տակ գտնվող մյուս ցեղերը և պայքար սկսում նրանց դեմ: Արևելքում խուննիների դեմ պայքարում էին **դունխու** ցեղերը, որոնք համարվում էին մոնղոլների նախնիները: Թեև խուննիներն սկսում են հարկ վճարել Չինաստանին, սակայն Ք. ա. III դ. վերջին կարողանում են պարտության մատնել դունխու ցեղերին, որից հետո վերջիններս բաժանվում են երեք ցեղի՝ **ուխուան**, **սյանբի** և **տոբա**: Խուննիական կայսրությունը տիպիկ քոչվորական էր, որը ձևավորվել էր ցեղային միությունների դաջինքի հիման վրա: Այն ղեկավարում էին առաջնորդները՝ կրելով **Շան-յու** տիտղոսը: Շան-յուի (նշանակում է ղեկավար, առաջնորդ) ենթակայության տակ էին

գտնվում այսպես կոչված «իմաստուն թագավորները», որոնք համարվում էին արևելյան՝ ձախ, և արևմտյան՝ աջ, գորամասերի գլխավոր հրամանատարներ: Հրամանատարների տիտղոսները փոխանցվում էին ժառանգաբար, իսկ ենթականերին տրվում էր առանձին հողակտոր: Բանակը բաժանված էր առանձին գորախմբերի՝ 10.000 հեծյալներով, որն էլ իր հերթին բաղկացած էր 1000-ական, 900-ական և 10-ական հեծյալներից: Ք. ա. մոտ 51 թ. Խուննիների պետությունը բաժանվում է երկու մասի՝ արևելյան մասն ընդունում է չինական կայսրերի գերիշխանությունը, իսկ արևմտյանը՝ հաստատվում է Կենտրոնական Ասիայում: 93 թ. խուննիները պարտություն են կրում Չինաստանի և սյանբի ցեղի միացյալ ուժերից, որից հետո այս պետությունը դադարում է գոյություն ունենալուց:

Մոնղոլ էթնոնիմը ժամանակակից Մոնղոլիայում և նրա հարակից շրջաններում ապրող ցեղերի ընդհանրական անվանումն է: Ինչպես բոլոր ժողովուրդների, այնպես էլ մոնղոլների առաջացման վերաբերյալ գոյություն ունեն մի շարք տեսակետներ: Առաջինի համաձայն մոնղոլ եզրույթը հիշատակվել է 1206 թ. Մեծ դուրուլթայի ժամանակ, երբ Չինգիզ խանը հայտարարում է Համամոնղոլական պետության ստեղծման մասին: Այս տեսակետի կողմնակիցները գտնում են, որ մոնղոլ հասկացություն մինչ այդ գոյություն չի ունեցել և որպես մեկ միասնական ժողովրդի անուն այն շրջանառվել է Չինգիզ խանի կողմից: Մյուս տեսակետի կողմնակիցները պաշտպանում են լեզվական ընդհանրության գաղափարը, այսինքն՝ մոնղոլներ նրանք են, ովքեր անկախ ցեղային պատկանելությունից խոսում են մոնղոլերեն: Երրորդ վարկածի կողմնակիցներն անդրադառնում են էթնիկ ծագումնաբանությանը, այսինքն՝ մոնղոլ են համարում **Ալան-Գոայի** սերունդներին, ով էլ համարվում էր մոնղոլների նախամայրը: Գոյություն ունի ևս մեկ տեսակետ, որը հիմնվում է չինական աղբյուրների վրա: VI դ. չինական տարեգրքում հիշատակվում է **Մեն-գու** (**Մեն-կու**) ցեղի անունը, որը շիվեյ ժողովրդի 12 ցեղերից մեկն էր: Նրանք հաստատվել էին Շիցզիան կամ Շիցզիանխե գետի ավազանում և անտառային կյանքից աստիճանաբար անցնում էին քոչվոր տափաստանային կենսաձևի:

Մոնղոլների ծագումնաբանական հարցերը տեղ են գտել նրանց **«Գաղտնի պատմություն»**-ում և **Ռաշիդ ադ-Դինի «Տարեգրությունների ժողովածու»**-ի տեքստերում: Ռաշիդ ադ-Դինը մոնղոլներին առանձին ժողովուրդ չի համարում, այլ նրանց ներկայացնում է թյուրքական էթնոսում որպես տոհմ: Ժամանակի ընթացքում այս ցեղերը բաժանվում են տարբեր տոհմերի, որոնցից յուրաքանչյուրն ստանում է նոր անուն: Այդպիսի գործընթացների արդյունքում թյուրքական ցեղերից առանձնանում են նաև մոնղոլները: Ռաշիդ ադ-Դինն իրական մոնղոլ էր համարում **դարլեկիներին**, որոնք Չինգիզ խանի ժամանակաշրջանում իրենց մեջ ներառում էին 100 և ավելի ցեղեր ու տոհմեր: Մոնղոլ-դարլեկիները համարվում էին Ալան-Գոայի նախնիները: «Գաղտնի պատմության» մեջ որպես Չինգիզ խանի նախնի հիշատակվում է ուն **Բորսե-Չինս**, ում կինն էր **Գոա-Մարալը**: Նույն աղբյուրում թվարկվում է նրանց սերունդների անունները մինչև Դոբուն-Մերգենում, ով Ալան-Գոայի ամուսինն էր: Եթե հաշվենք Բորսե-Չինսի և Գոա-Մարալի ծննդյան տարեթվերը, ապա կհասնենք VI դ., երբ չինական տարեգրքում նշվում է ժողովուրդների տեղաշարժի մասին, որտեղ էլ հիշատակվում է Մեն-գու անունով ցեղախումբը:

Մոնղոլների ծագումնաբանությունը ներկայացված է նաև նրանց **ավանդագրույցում**, որտեղ Ալան-Գոայի հայրը՝ Խորիլարտայ-Մերգենան, սերում էր հյուսիս մոնղոլական հորի-թումաթ ցեղից, որն անտառային որսորդ ցեղերից էր և բնակվում էր մերձբայկալյան տարածաշրջանում: Խորիլարտայ-Մերգենան վիճում է ցեղակիցների հետ և քոչում է հարավ՝ դեպի **Բուրխան-Նալդուն** լեռան մոտ Օնոն գետի ձախ ավազ: Նրա դուստրը՝ Ալան-Գոան, ամուսնանում է Դոբուն-Մերգենումի հետ, ով Բորսե-Չինսի ժառանգներից էր: Այս ամուսնությունից ծնվում է երկու տղա, սակայն շուտով Դոբուն-Մերգենումը մահանում է: Այստեղից սկսվում է բուն առասպելը, երբ Ալան-Գոան ունենում է ևս երեք որդի: Նրա ավագ որդիների և ողջ տոհմի մոտ հարց է առաջանում, թե ումից են այդ երեխաները, քանի որ ամուսնու մահից հետո Ալան-Գոան այլևս չէր ամուսնացել: Վերջինս պատմում է ամեն գիշեր իր վրան մտած շեկ մազերով տղամարդու մասին, որի ծագումն աստվածային էր, քանի որ ոչ ոք, բացի

Ալան-Գոայից, նրան չէր տեսել: Այստեղից էլ հետևություն է արվում, որ նրա երեք որդիներն ունեին աստվածային ծագում: Ցեղակիցները հավատում են Ալան-Գոայի այս պատմությանը, որը, ամենայն հավանականությամբ, հորինվել էր նրա կողմից: Նրա կրտսեր որդու՝ **Բողոնչարայի**, սերունդներից առանձնանում են թայջիուտները, ուրտուները, թանգուտները, ջաջիրաուտները և կիատ-բորջիզանները:

Մոնղոլական ցեղերը և նրանց հարևանները: Մինչև Չինգիզ խանի պատմության թատերաբեմ իջնելը մոնղոլական հայտնի ցեղեր էին համարվում **կերեխուները** և **նայմանները**: Կենտրոնական Մոնղոլիայում Մելենգա գետի միջին հոսանքից մինչև վերին Կերուլեն և Օնոն բնակվում էին կերեխուները: Նրանք ունեցել են թյուրքական արմատներ, սակայն ենթարկվել են մոնղոլական ազդեցության: Կերեխուները մոնղոլական ցեղերից առաջինն էին, որոնք 1000 թ. (հիշատակվում է նաև 1007 թ.) ծանոթացել են քրիստոնեությանը՝ նեստորականության դավանանքով: Կերեխուներից արևմուտք ապրում էին նայմանները, որոնք այս ժամանակ զգալի հզորություն և ազդեցություն ունեին: Կարծիք կա, որ նրանք կարող էին լինել մոնղոլացած թյուրքեր: Նայմանները բազմաքանակ էին, սակայն զբաղեցնում էին համեմատաբար փոքր տարածք: Նրանք հաստատվել էին ներկայիս Մոնղոլիայի հյուսիս և հյուսիս-արևելյան շրջաններից մինչև Օնոն և Կերուլեն գետերի ավազանը: Հավանաբար հարավում նրանց տարածքները հասել են մինչև Քարա Իրտիշ գետը, որտեղից էլ կարելի է ենթադրել, որ նայմանները կրում էին իրենց հարավային հարևանների՝ ուլդուրների, մշակութային ազդեցությունը:

Արդեն XII դ. վերջին զգալի ուժ էին ներկայացնում նաև **մերկիտներն** ու **թաթարները**: Մերկիտները բնակվում էին Մելենգա գետից ներքև և Բայկալ լճի հարավ-արևելյան շրջաններում: Նրանք անտառաբնակ որսորդ ցեղեր էին և աչքի էին ընկնում ռազմատենչությամբ ու անհնազանդությամբ: Մերկիտներից արևելք և հարավ-արևելյան տարածքներում բնակվում էին թաթարները, որոնց էթնիկական պատկանելությունը մինչև այժմ հստակեցված չէ, սակայն նրանց հաճախ դասում են որպես մոնղոլական ցեղեր: VIII-XII դդ. թաթարները ձեռք էին բերել մեծ ազդեցություն և ուժ ու հաճախ էին պատերազմում Չինաստանի դեմ: Քիչ հավանական է, որ նշված

շրջանում այս բոլոր ցեղերը խոսեին մոնղոլերենով: Նրանց բոլորին սովորաբար անվանում էին նաև թաթարներ: Թաթար անունն սկսում է պարբերաբար շրջանառվել, երբ մոնղոլները՝ Չինգիզ խանի գլխավորությամբ, սկսում են հզորանալ: Եվրոպացի ճանապարհորդները ևս օգտագործում էին թաթար էթնոնիմը, սակայն նկատի ունեին միայն մոնղոլներին: Ժամանակակից պատմագիտական գրականությունը, հանգրվանելով ավանդականության վրա, սովորաբար շրջանառում է կամ առանձին անվանումներ (մոնղոլ, թաթար) կամ դրանք օգտագործում է միասնական՝ մոնղոլ-թաթարներ:



Մոնղոլական ցեղերի քարտեզը VII-XIII դդ.

XIII դ. սկզբին դեռևս մեծ դերակատարում չունեին **դրղոները** և **օիրատները**: Առաջինները թյուրքական ցեղեր էին: X դ. նրանք կիդաններից պարտություն են կրում և հաստատվում Ենիսեյի վերին շրջա-

նում: Բայկալ լճի արևմուտքում բնակվում էին օիրատները: XII-XIII դդ. դրանք փոքր ցեղեր էին և առանձնակի կարևորություն չէին ներկայացնում: Սակայն Չինաստանում Յուան դինաստիայի կործանումից հետո նրանք Արևելյան Մոնղոլիայում դարձան տիրապետող ցեղեր:

Հայտնի ցեղերից էին նաև **ուևգիրատները**, որոնք բնակվում էին Բույուր-Նորից հարավ-արևելք: Սելենգա և Օնոն գետերի միջև ընկած տարածքներում բնակվում էին **ջալաիրները**, որոնք թյուրքական ցեղեր էին, սակայն ենթարկվել էին մոնղոլների ազդեցությանը: Գոբի անապատի հարավում՝ Հյուսիսային Չինաստանի հարևանությամբ, բնակվում էին **օնգուտները**, որոնք ևս թյուրքական ցեղեր էին: Չինաստանում նրանց սովորաբար անվանում էին սայիտակ թաթարներ: Օնգուտների մոտ ևս տարածված էր նեստորականությունը: Չնայած նրանք XIII դ. սկզբին մեծ ազդեցություն չունեին և բուն Մոնղոլիայում չէին բնակվում, սակայն ավելի ուշ մեծ դերակատարում են ստանձնում Մոնղոլական կայսրությունում:

Օնգուտներից ու թաթարներից արևմուտք՝ Գոբի անապատից հարավ, տարածվում էր **թանգուտների Սի-Սյա կայսրությունը**: Թանգուտներն ունեին տիբեթական ծագում և վարում էին նստակյաց կյանք: Թանգուտներից արևմուտք տարածված էին **թյուրք-ույղուրները**, որոնք 745 թ. բնակություն հաստատեցին այժմյան Մոնղոլիայի տարածքում: Այստեղ ույղուրները հիմնադրեցին խոշոր և ազդեցիկ պետություն, որը տարածվում էր Արևելյան Թուրքեստանում և Տիբեթում: Ույղուրները քոչվոր ցեղեր էին, սակայն փորձում են անցնել նստակեցության, ուստի ստեղծում են քոչվորական պետության իրենց տարբերակը, որը հետագայում մեծ ազդեցություն է թողնում Մոնղոլական կայսրության վրա: Ույղուրներն սկզբում դավանում էին մանիքեականություն, որը 763 թ. դառնում է պետական կրոն: X դ. ույղուրների մոտ տարածվում է բուդդայականություն և նեստորականություն, իսկ XI դ. երկրորդ կեսից մանիքեականությունն այլևս չի քարոզվում: X դ. ույղուրներն ստեղծում են **այբուբեն**, որը վերցրել էին սոգդիանցիներից (արևելյան իրանական ժողովուրդ, որն այստեղ հաստատվել էր Մամարդանդի ու Բուխարայի շրջաններից): Այս այբուբենն սկզբնապես սեմական էր և պատմու-

թյան մեջ հայտնի է ույղուրական ձեռագիր անունով: Ույղուրական այբուբենը Չինգիզ խանի ժամանակ տարածվում է նաև մոնղոլների մոտ և լայնորեն օգտագործվում: Մոտ 840 թ. ույղուրների թագավորությունը ոչնչացվում է դրոզների կողմից: Ստեղծվում է ույղուրական երկու փոքր պետություններ, որոնք երկար ժամանակ չէին կարող դիմակայել թշնամիներին: 1030 թ. արևելյան թագավորությունը նվաճվում է թանգուտների կողմից, իսկ արևմտյանը՝ շարունակում է իր գոյությունը մինչև XIII դ., երբ ընդգրկվում է Մոնղոլական կայսրության կազմում: Անհերքելի է ույղուրների մշակութային ազդեցությունը մոնղոլների, մասնավորապես նայմանների վրա: Ույղուրներից արևմուտք բնակվում էին **կարա-կիդանները**:

Մոնղոլների հեռու արևելյան հարևաններն էին **կիդաններն ու չժուրչժենները** (մանջուրներ), որոնց պատմությունը սերտորեն աղերսվում է մոնղոլների հետ: 907 թ. կիդանների առաջնորդ է դառնում **Ելու Ամբաղան**: Նրան հաջողվում է իրեն ենթարկել թունգուր-մանջուրական ցեղերին, պարտության է մատնում նաև մոնղոլներին և շարժվում դեպի Չինաստան: 907 թ. ստեղծվում է կիդանական **Լյաո պետությունը (907-1125)**, որը պատերազմների արդյունքում կարողանում է իր իշխանությունը հաստատել Չինաստանի հյուսիս-արևելյան շրջաններում: Կիդանական պետությունն անկում է ապրում 1125 թ., երբ չժուրչժենները, դաշնակցելով չինական **Սուև դինաստիայի (960-1279)** հետ, այն տապալում են: Չինաստանի մի մասում հաստատվում է **Ցզին դինաստիան (1115-1234)**: Մակայն չժուրչժենները շարունակում են հալածել կիդաններին և անգամ 1127 թ. հարձակվում են իրենց դաշնակից Սուևյան Չինաստանի վրա:

Մեն-գու կամ մեն-կու անունով ցեղերը հիշատակվում են Լյաոյի ժամանակագրություններում **թա-թա կամ թաթար** անվանումների հետ: Նրանց հիշատակում են որպես քոչվորների, որոնք սնվում էին մսամթերքով ու թթված կաթով՝ կումիկա, և անընդհատ արշավում էին Չինաստան: Ավելի ուշ շրջանի չինական աղբյուրներում նրանց սկսում են հիշատակել որպես վտանգավոր թշնամիների:



Ցզինյան կայսր **Թայ-ցզուն (1123-1134)** կարողանում է իրեն ենթարկել Մոնղոլիայի մեծ մասը, սակայն հետագայում չինացիները համաձայնության են գալիս մոնղոլների հետ: Արդյունքում բորջի-գանների տոհմից **Խաբուլ** խանն իր իշխանության տակ միավորում է որոշ մոնղոլական ցեղերի և ստեղծում մոնղոլական պետություն՝ **Դա մենկու գո** անունով: Սկզբում նա իրեն հայտարարում է գզինյան **Մի-ցզուն (1135-1149)** կայսեր վասալը, սակայն ավելի ուշ սկսում է պատերազմել նրա դեմ: Ի վերջո կնքվում է խաղաղություն և Խաբուլ խանը որոշում է հանձնվել, սակայն գզինյան արքունիքում նրան չեն հավատում և դեսպանություն են ուղարկում մոնղոլների մոտ: Խաբուլ խանն սպանում է չինական դեսպաններին և ռազմական գործողությունները վերսկսվում են, որի ժամանակ գզինյան արքունիքը մոնղոլների դեմ օգտագործում է թաթարներին: Պատերազմի ժամանակ Խաբուլ խանը մահանում է և նրա ժառանգորդն է դառնում **Ամբաղան**: Հաշտության բանակցությունների ժամանակ թաթարները գերի են վերցնում Ամբաղային ու հանձնում գզինյան իշխանություններին: Կայսեր հրամանով նրան մահապատժի են ենթարկում: Հաջորդ խան **Կուտուլայի** գլխավորությամբ մոնղոլները համագործակցում են մանջուրացի ապստամբների հետ և կրկին հարձակվում Ցզին պետության վրա: 1143 թ. կայսերական զորքը մեծ արշավանք է նախաձեռնում և, չնայած մոնղոլների հարձակումներին, կարողանում է իր վերահսկողության տակ վերցնել ռազմավարական նշանակության կարևոր տարածքներ: Ավելի ուշ Կուտուլյան զոհ է գնում երկպառակտչական կոիվներին և մոնղոլները կորցնում են իրենց ազդեցությունը: 1161 թ. Բույր-Նուր լճի մոտ տեղի ունեցած ճակատամարտում մոնղոլները պարտություն են կրում գզին-թաթարական միացյալ զորքից, որից հետո գզինյան կայսրությունն արևմուտքում՝ ընդհուպ մինչև կերեխների հողեր, վերականգնում է իր իշխանությունը: Եթե XII դ. երկրորդ կեսին տարածաշրջանում շարունակվում էր պայքարը

գերիշխանության համար, ապա միաժամանակ սկսվում է մոնղոլական տարբեր ցեղերի պայքարը համամոնղոլական պետության ստեղծման համար:

XII- XIII դդ. մոնղոլական հասարակության հիմնական միավորը տոհմն էր, որը բաժանվում էր ազգակցական կապերով կապված ենթատոհմերի: Տոհմում զգալի իրավունքներ ուներ առաջնորդը, օրինակ՝ նա կարող էր ազատություն շնորհել ցածր խավերի մարդկանց կամ շնորհել տիտղոսներ: Իրավունք էր դիտարկվում նաև այն, որ առաջնորդը կարող էր իրեն վերցնել ավարի զգալի մասը: Մոնղոլները հիմնականում զբաղվում էին քոչվորական անասնապահությամբ և որսորդությամբ: Նրանք պահում էին կովեր, ոչխարներ, այծեր, ձիեր և ուղտեր: Անշուշտ, առավել մեծ նշանակություն ուներ **ձիաբուծությունը**, քանի որ ձին քոչվոր մոնղոլի անբաժան ուղեկիցն էր: Մոնղոլներն, ինչպես նաև այլոս մյուս քոչվորները, հիմնականում սնվում էին մսամթերքով և կաթնամթերքով: Հացահատիկն ու բրինձն այնքան էլ տարածված չէին, քանի որ դրանք հարկավոր էր ներմուծել, իսկ ապրանքաշրջանառությունը և դրամական հարաբերությունները թույլ էին զարգացած: Առևտուրը հիմնականում գտնվում էր ույղուր ու մուսուլման առևտրականների ձեռքում: Մոնղոլների մոտ տարածված էր բազմակնությունը: Մոնղոլական հասարակությունում կանայք ունեին զգալի իրավունքներ: Կնոջ հիմնական պարտականությունն էր զբաղվել տնտեսությամբ և երեխաների դաստիարակությամբ: Բազմակնության պայմաններում ծնված որդիներն ունեին հավասար իրավունքներ, անգամ եթե նրանք ծնվել էին հարձերից: Մոնղոլներն ապրում էին **յուրդերում (մեծ վրան)**, որոնք հեշտությամբ հավաքում էին ու տեղափոխում: Այն ծածկում էին կենդանիների մորթիներով, որոնք պաշտպանում էին ցրտից ու շոգից: Վրանի վերևում գտնվում էր երդիկը: Որպես կանոն առաջնորդի վրանը գտնվում էր կենտրոնում, իսկ դրա շուրջ հերթականությամբ, ըստ տոհմում զբաղեցրած դիրքի, դասավորվում էին մյուս վրանները, որը հիշեցնում էր մատանու: Վրանների դրսի շարքի շուրջ պաշտպանական նպատակներով տեղավորում էին սայլեր և այլ հարմարանքներ: Այսպիսի բնակավայրը կոչվում էր **այիլ**:

Մոնղոլների հավատալիքները հարում էին **շամանականությանը**, որը լայնորեն տարածված էր Կենտրոնական Ասիայի քոչվորների շրջանում: Այս ուսմունքը չունեի զարգացած աստվածաբանություն ու դավանանք, ուստի պատահական չէ, որ քրիստոնյաներն ու մուսուլմաններն այն կրոն չէին համարում: Շամանականության սպասավոր շամանը նաև կախարդ էր, գուշակ ու բժիշկ: Ենթադրվում էր, որ նա միջնորդ էր հանդիսանում կենդանի ու անկենդան աշխարհների, նյութականի ու հոգևորի միջև: Մոնղոլները պաշտում էին Հողին, ոգիներին և նախնիներին: Գլխավոր աստվածն էր համարվում **«Հավերժական կապույտ Երկինքը»**: XII դարում մոնղոլական հասարակությունը բաժանվում էր ազատների ու կախյալների (հիմնականում ստրուկների): Ազատների դասին էին պատկանում հարուստ և ազդեցիկ մարդիկ, որոնք կազմում էին **նոյոնների** խավը և շարքային անասնապահները՝ **արաթները**:

XII դարի կեսերին բորջիգանների ցեղը քոչում էր ներկայիս Մոնղոլիայի հյուսիս, հյուսիս-արևելյան շրջաններից մինչև Օնոն և Կերուլեն գետերի ավազանը: Այս շրջանում բորջիգանների առաջնորդն էր **Եսուգեյ** բահաթուրը: Վերջինս փորձում էր իր իշխանությունը հաստատել մոնղոլական մյուս ցեղերի նկատմամբ, սակայն դա նրան չի հաջողվում: Նրան անվանում էին **բահաթուր** (բազատուր), որը նշանակում է զինվոր, հերոս: Եսուգեյն այս շրջանում ուներ անվիճելի հեղինակություն: Նա մի քանի հաղթանակներ է տանում թաթարների դեմ: Նրան օգնում էին կերեխոնները, որպեսզի իրենց գերիշխանությունը հաստատեին մոնղոլական և թյուրքական ցեղերի նկատմամբ: Սակայն դա հեշտ չէր, քանի որ կերեխոնները հարձակման էին ենթարկվում նայմանների կողմից, որոնք ևս ձրգտում էին համամոնղոլական իշխանության: Այս շրջանում Եսուգեյի հարաբերությունները վատանում են մերկիտների հետ, քանի որ նա փախցնում է մերկիտների ցեղից Էկե-Չիլեդուի հարսնացու **Օելունին** և ամուսնանում նրա հետ: Նրանց առաջնեկը **Թեմուչինն** էր, ում ծննդյան թվականը մինչև օրս հստակ չէ: Պարսիկ հայտնի պատմիչ **Ռաշիդ ադ-Ղինը (1247-1318)** գրում է, որ նա ծնվել է 1155 թ., իսկ չինական և մոնղոլական աղբյուրները հիշատակում են 1162 թ.: Առաջնեկը ծնվել է Օնոն գետի աջ ափին և անունն էլ պատահական չէր

ընտրված: Երբ երեխան ծնվում էր, Եսուգեյը վերադառնում էր թաթարների դեմ կատարած հերթական արշավանքից: Նա կարողացել էր պարտության մատնել թաթարներին և սպանել նրանց առաջնորդ Թեմուչին-Ուգեյին, ում պատվին էլ երեխային անվանում են **Թեմուչին**, որը նշանակում է դարբին: Բոլոր սկզբնաղբյուրները վկայում են, որ ծնվելու պահին Թեմուչինի աջ բռունցքում եղել է արյան գունդ: Դեռևս մանուկ հասակից մոնղոլ երեխաներն սկսում էին ծանոթանալ ռազմական արվեստին: Նրանք երեք տարեկանից սկսում էին ձիավարել, իսկ 4-5 տարեկանից սովորում են նետահարել: Երբ Թեմուչինն ինը տարեկան էր, ըստ մոնղոլական ավանդույթի, հոր հետ գնում է հարսնացու փնտրելու: Նա որպես հարսնացու ընտրում է ունգիրաստ ցեղի առաջնորդ Դայ-Սեչենի դստերը՝ **Բորտեյին**: Մոնղոլական ավանդույթներով տղան պետք է երեք տարի մնար հարսնացուի ուլուսում և ծայտեր նրանց: Սակայն սա կարճ տևեց, քանզի Եսուգեյ բահաթուրը տուն վերադարձի ճանապարհին հանդիպում է թաթարներին, ընդունում նրանց հյուրասիրությունը և երեք օր անց մահանում: Եսուգեյի մահվամբ նրա ուլուսը քայքայվում է, բոլոր նուբերները հեռանում են, իսկ կինը՝ Օելունը, փոքր երեխաների հետ բնակություն է հաստատում Բուրխան-Հալդուն լեռան ստորոտում: Թեմուչինի կյանքի այս հատվածի վերաբերյալ մեր ունեցած տեղեկությունները սակավ են և վիճելի: Հայտնի է, որ նա գերի է ընկնում թայջիուտների մոտ, սակայն կարողանում է փախչել և վերադառնալ Բուրխան-Հալդուն լեռան ստորոտ: Եսուգեյի մահվանից հետո մոնղոլական ցեղերի շրջանում առաջնորդությունը բորջիգաններից անցնում է թայջիուտներին:

Երիտասարդ Թեմուչինն աստիճանաբար սկսում է իր շուրջ համախմբել հավատարիմ մարդկանց՝ հիմնադրելով սեփական ուլուսը (ռազմատնտեսական միավոր): Նա սկսում է կազմակերպել սեփական տնտեսությունը՝ մեծ տեղ հատկացնելով ձիաբուծությանը: Թեմուչինի կյանքում այս ժամանակ տեղի է ունենում մի կարևոր իրադարձություն՝ նա ընկերանում է ջաջիրատների ցեղից **Ջամուխայի** հետ: Մոնղոլական ավանդույթով նրանք խառնում են արյունները և դառնում եղբայրներ: Ջամուխան ուներ ազնվականական ծագում և շուտով դառնում է ջաջիրատների առաջնորդը: Հետագա-

յում նախկին ընկերների միջև սկսվում է մրցակցություն՝ համամոնղոլական պետություն ստեղծելու համար: Այս նույն ժամանակ Թեմուչինը ծանոթանում է **Բորչու** անունով մի երիտասարդի հետ, ով նրան օգնում է հետ բերել զոդացված ձիերին և դառնում է ապագա խանի առաջին նուբերը: Ժամանակն էր մտածել նաև ամուսնության մասին և Թեմուչինը գնում է իր հարսնացուի հետևից: Նրանք ամուսնանում են, և Բորտեն՝ որպես օժիտ, բերում է մորթյա մի վերարկու, որը Թեմուչինի համար դառնում է ճակատագրական: Հագնելով այն՝ Թեմուչինը հասկանում էր, որ իր դիրքերի ամրապնդման համար հարկավոր է ուժեղ հովանավոր: Նա որոշում է այցելել հոր արյունակից եղբորը՝ կերեխոների առաջնորդ **Թորգուլ խանին** և նվեր է տանում վերոնշյալ վերարկուն: Թորգուլ խանն ընդունում է Թեմուչինին ու նվերները և նրան օգնում է գլխավորել բորջիգաններին: Կարևոր էր նաև երկրորդ նուբերի հայտնվելու փաստը: Դա **Ջելմեն** էր՝ Սուբեդեյի ավագ եղբայրը, հետագայում նրանք դառնում են Չինգիզ խանի ամենամոտ դաշնակիցները և լավագույն զորավարները: Աստիճանաբար Թեմուչինը դառնում է խորհրդանշական կենտրոն, ուր ձգտում էին մոնղոլական մյուս ցեղերի առաջնորդներից դժգոհ ու ընդդիմադիր ուժերը: Հատկապես երիտասարդների ձգտումը համախմբվել նրա անձի շուրջ նոր հնարավորություն էր ստեղծում հասնել մոնղոլների հզորացմանը: Թեմուչինի նկատվող հզորացմանը փորձեցին խոչընդոտել մերկիտները և անսպասելի հարձակվեցին նրա ուլուսի վրա՝ փախցնելով Բորտեյին: Թեմուչինը վերադասավորում է ուժերը, հակահարձակման է անցնում, հետ բերում կնոջը և շուտով ծնվում է նրանց առաջնեկը՝ **Ջուչին**: Այս արշավանքի ժամանակ Թեմուչինին աջակցեց Ջամուխան, ով արդեն ստացել էր **«սեչեն»** պատվանունը, ինչը նշանակում էր իմաստուն: Նա ուներ զգալի ռազմական ուժ և մոնղոլների մեջ վայելում էր մեծ հեղինակություն: Դաշնակիցները պարտության են մատնում մերկիտներին և կես տարի տափաստանում հաստատվում է խաղաղություն: Այս դաշինքը մեծ ուժ էր ներկայացնում, քանի որ երկու երիտասարդ և ռազմատենչ առաջնորդներին հետևում էին բազմաթիվ ուլուսներ ու տոհմեր, բացի այդ մեծ թիվ էին կազմում հավատարիմ կողմնակիցները: Սակայն երկու առաջնորդների հայացքնե-

րի ու գործողությունների միջև կային զգալի տարբերություններ: Նրանք երկուսն էլ ձգտում էին համամոնղոլական գերիշխանության, ուստի նրանց միջև մրցակցությունը վաղ թե ուշ գլուխ էր բարձրացնելու: 1184/1185 թ. զարնանը Թեմուչինի և Ջամուխայի միջև համամոնղոլական պետություն ստեղծելու շուրջ տեղի ունեցած զրույցներից հետո Թեմուչինն իր հավատարիմ մարդկանցով հեռանում է: Շուտով նրան են միանում հայտնի գորավարներ և Թեմուչինի շուրջ սկսում է ձևավորվել ուժեղ ու մարտունակ միություն, որը ձգտում էր համամոնղոլական ազդեցության: Այս միությունը Թեմուչինի համար ապահովեց բարձր դիրք ու հեղինակություն, այսինքն՝ նա հավասար մակարդակի վրա էր գտնվում Ջամուխայի ու կերեխոների խան Թորգուլի հետ: 1186 թ. զարնանը Թեմուչինը հռչակվեց խան: Նա համաձայնեց դառնալ խան, եթե դաշնակիցները նրան հավատարմության երդում տան, ինչը և կատարվեց: Օգտագործելով խանի կարգավիճակը՝ Թեմուչինը պաշտոնները հանձնում էր ոչ թե նոյններին, այլև հավատարիմ և խելացի մարդկանց:

Թեմուչինի և Ջամուխայի միջև նախկին փոխհարաբերությունները վերականգնել այլևս հնարավոր չէր, ընդհակառակը՝ սկսվեց առճակատում: Պատերազմի սկսման համար առիթ հանդիսացավ հետևյալ դեպքը: Ջամուխայի կրտսեր եղբայր Թայչարը դժգոհ էր այն փաստից, որ իր եղբորը հավատարիմ մարդիկ անասունների հետ գաղտնի հեռանում և միանում են Թեմուչինին: Նա փորձում է շտկել իրավիճակը և գնում է Թեմուչինի ուլուս՝ փորձելով հետ տանել ձիերի երամակը: Սակայն սպանվում է և Ջամուխան պատերազմ է սկսում Թեմուչինի դեմ՝ վրեժխնդիր լինելու համար: Ճակատամարտը տեղի է ունենում **Ղալան-Բայջուտախ** կոչված վայրում, որտեղ Թեմուչինը պարտություն է կրում: Սա լուրջ հարված էր նրա հեղինակությանը և, որ ամենակարևորն էր, տուժում է ռազմական ուժը:

1196 թ. Ցզին կայսրությունը որոշում է ռազմական արշավանք կազմակերպել թաթարների դեմ, որոնք շատ էին հզորացել և լուրջ վտանգ էին ներկայացնում: Ցզինյան արքունիքը նախապատրաստվել էր այս արշավանքին և դաշինք կնքեց Թեմուչին ու Թորգուլ խաների հետ: Միացյալ ուժերը կարողանում են պարտության

մատնել թաթարներին, ինչի արդյունքում Թեմուչինը ձեռք է բերում մեծաքանակ հպատակներ և հարուստ ավար: Այս հաղթանակի համար չինացիները Թորգուլին շնորհեցին «**Վան**» տիտղոսը (այսուհետև Թորգուլն աղբյուրներում հիշատակվում է **Վան խան** անունով), իսկ Թեմուչինին՝ «**ջաուտհուրի**» կոչումը, որը բառացիորեն նշանակում է «հանձնակատար սահմանի վրա»: Քոչվոր մոնղոլների համար այս կոչումները մեծ նշանակություն ունեին, քանի որ խորհրդանշում էին Չինական կայսրության կողմից այս երկու առաջնորդներին լայն իրավունքներով օժտելու մասին: Երբ Թեմուչինը զբաղված էր թաթարների դեմ պատերազմով, նրա ուլուսի վրա են հարձակվում յուրկինսները: Թեմուչինն անմիջապես հետապնդում է նրանց և Կերուլեն գետի ափին ջախջախում: Թեմուչինն սկսում է ամրապնդել իր իշխանությունը՝ նախնառաջ ընդարձակելով ու հզորացնելով բանակը:

XIII դ. նախաշեմին Մոնղոլական տափաստանում Թեմուչինը դարձավ կարևորագույն դեմքերից մեկը: 1201 թ. հրավիրված դուրուլթային եկել էին մասնակցելու մոնղոլական այն ցեղերը և անգամ հարևան ցեղերի առաջնորդները, որոնք անհանգստացած էին Թեմուչինի հզորացումից: Դուրուլթային մասնակցում էին մերկիտները, թաթարները, օյրատները և նայմանները, իսկ քննարկվող միակ խնդիրը Թեմուչինի աճող հզորությունն էր: Ջամուխայի գլխավորությամբ վերոնշյալ ցեղերը դաշինք են կնքում ընդդեմ Թեմուչինի, որը վերջինիս համար լուրջ վտանգ էր ներկայացնում: Թեմուչինը միայնակ անկարող էր հաղթել նման հզոր ուժի, ուստի դիմեց Թորգուլ (Վան) խանին, ով էլ համաձայնեց օգնել նրան: Հակառակորդների գորքերը հանդիպեցին **Կոյտենի** մոտ: Արյունալի ճակատամարտում կողմերից ոչ մեկը մյուսի նկատմամբ առավելության չհասավ: Շուտով անսպասելի փոթորիկ է սկսվում, որն էլ նպաստում է Թեմուչինի հաղթանակին: Թորգուլ խանն սկսում է հետապնդել Ջամուխային, իսկ Թեմուչինը՝ թաջիուսներին: Վերջինները Թեմուչինին անսպասելի դիմադրություն են ցույց տալիս Օտոն գետի ափին: Չնայած Թեմուչինը վիրավորվում է, սակայն կարողանում է ճակատամարտը հասցնել հաղթական ավարտին: Ճակատամարտից հետո Թեմուչինը հանդիպում է **Ջիրգուադա** անունով մի մարդու, ով

քառորդ դար՝ մինչև իր մահը, դառնում է նրա ուղեկիցը: Խանը գերի ընկածներին հարցնում է իր ձիուն նետահարողի անունը: Ջիրգոադան համարձակորեն պատասխանում է. «Ես եմ նետահարել, կարող եք ինձ կախել, բայց եթե ներքե խոստանում եմ հավատարմորեն ծառայել ձեզ»: Ջիրգոադայի քաջությունից հիացած Թեմուչինը նրան նշանակում է տասնորդական գորամասի հրամանատար և տալիս **Ջեբե** անունը, որը մոնղոլերենով նշանակում է նետ:

Արդեն **1201 թ.** Թեմուչինը հաղթել էր իր բոլոր թշնամիներին և իրեն կարող էր կոչել մոնղոլների խան: Սակայն նա իր համար սահմանեց նոր ու հեռագնա նպատակ՝ ստեղծել համամոնղոլական պետություն: Այս նպատակի իրականացման համար նա ուներ բազում թշնամիներ, որոնց շարքում առաջին տեղն էին զբաղեցնում թաթարները: Դեռևս 1196 թ. Թեմուչինն իր դաշնակիցների հետ պարտության էր մատնել թաթարների հյուսիս-արևելյան ճյուղին, սակայն նրանք թաթարական ցեղերի մեջ փոքրամասնություն էին կազմում: Տափաստանում հզոր ուժ էին կազմում թաթարների հարավային ցեղերը, որոնք լուրջ հաջողությունների չէին կարողանում հասնել անմիաբանության պատճառով: Միասնական պետություն ստեղծելու հարցում Թեմուչինին խանգարում էին նաև մերկիտները, ինչպես նաև նայմանները և կերեխոնները: Նրա դաշնակից կերեխոնների առաջնորդ Թորգուլ խանն արդեն ծեր էր և իշխանությունն իր ձեռքն էր վերցրել նրա որդին՝ **Նիլխա-Սանգումը**, որն այնքան էլ բարյացակամ չէր տրամադրված Թեմուչինի նկատմամբ, քանզի փորձում էր մոնղոլական ցեղերը միավորել կերեխոնների գլխավորությամբ: Կերեխոնների առաջնորդի տիտղոսի համար պայքարում էր նաև Թորգուլ խանի եղբայրը՝ Ջագամբուն, ով Թեմուչինի բարեկամն էր: Շուտով Թեմուչինն իր հովանավորության տակ է վերցնում Ջագամբունին, ում շուրջն էլ սկսում են հավաքվել կերեխոնների մեծ մասը: Սա, անշուշտ, նպաստում է Թեմուչինի դիրքերի ամրապնդմանը, ինչի արդյունքում էլ նա 1202 թ. գարնանը կարողանում է կանխել մերկիտների ասպատակությունները: Նույն տարվա աշնանը նա արշավանք է կազմակերպում թաթարների դեմ: Թեմուչինը հրամայում է ոչնչացնել բոլորին, բացի երեխաներից, որով և վրեժ է լուծում հոր համար: Այս իրադարձությունից հետո թաթարների մա-

սին այլևս չի հիշատակվում: Թեմուչինի հաջորդ հարվածն ուղղվում է նայմանների դեմ, որոնք համարվում էին Մեծ տափաստանի արևելյան շրջանի ամենաուժեղ ցեղերը: Սակայն նրանք միայնակ անկարող էին դիմակայել մոնղոլ-կերեխոական միացյալ բանակին, ուստի նահանջում են Ալթայի լեռները: 1202-1203 թթ. նայմանները լուրջ վտանգ էին ներկայացնում կերեխոնների համար և Թորգուլ խանն օգնության խնդրանքով դիմեց Թեմուչինին: Վերջինս գորքն ուղարկեց նրանց օգնության: Թեմուչինը որոշեց ռազմաքաղաքական համագործակցությունն ամրապնդել երկկողմանի ամուսնությամբ (իր ավագ որդու՝ Ջուչիի, համար խնդրեց Վան խանի դստեր՝ Չաուրբեգի ձեռքը և իր ավագ դստեր ձեռքն առաջարկեց Նիլխա-Սանգումին), որը ձախողվեց և ավելի սրեց իրավիճակը: Ստեղծված իրավիճակից օգտվում է Ջամուխան՝ փորձելով համախմբել դժգոհ ուժերին: Նրան է միանում նաև Թորգուլ խանի որդին՝ Նիլխա-Սանգումը, իսկ Թորգուլ խանը որոշում է չմիջամտել: Դաշնակիցները որոշում են, ամուսնության պատրվակն օգտագործելով, գերի վերցնել Թեմուչինին, սակայն վերջինս տեղեկանում է դավադրության մասին և հեռանում: Ի վերջո Թեմուչինն ստիպված է լինում ճակատամարտ տալ, որտեղ կողմերից որևէ մեկը չի հաղթում: Սակայն, հասկանալով իրավիճակի ծանրությունը, Թեմուչինը որոշում է նահանջել: Այս նահանջը շատ ծանր էր նրա համար, քանի որ շատ զինվորներ նրան լքում են, և երբ նա կանգ է առնում Բալչունական ճահիճներում և հաշվառում է անցկացնում, պարզվում է, որ ունի ընդամենը 2600 զինվոր: Այս զինվորները նրա հավատարիմ մարդիկ էին և հետագայում այս խումբն ստանում է «**Բալչունտու**» անվանումը և մոնղոլական բանակում սրանից բարձր կարգավիճակ ունեցող գորամիավորում չկար:

1203 թ. գարնանը Թեմուչինն իր գորքը շարժում է դեպի Խալխին-գոլ գետը: Նա բանակը բաժանում է երկու մասի, որի նպատակն էր վերահսկողություն հաստատել գետի երկու ափերին: Այս շրջանում Թեմուչինին հաջողվում է իրեն միացնել օնգիրատների ցեղին, որի հետևանքով նա կարողանում է բարձրացնել բանակի թվաքանակը և մարտունակությունը: 1203 թ. աշնանը նա արդեն պատրաստ էր պատերազմել կերեխոնների դեմ՝ տափաստանում

վերջնական իշխանության հասնելու համար: Նա անակնկալի է բերում Թորգուլ խանին՝ շրջապատելով նրա ուլուսը: Կռիվները տևում են երեք օր, որից հետո կենդանի մնացածները հանձնվում են: Թորգուլ խանը և Նիլխա-Սանգումը փախչում են, սակայն շուտով սպանվում են: Կերեխոների ուլուսն անցնում է Թեմուչինին:

Թեմուչինի հակառակորդներն էին շարունակում մնալ նայմանները: 1204 թ. նրանց առաջնորդ Տայան խանը որոշում է արշավել Թեմուչինի դեմ: Վերջինս, տեղեկանալով այս մասին, որոշում է նախահարձակ լինել և 1204 թ. գարնանն արշավանք է կազմակերպում արևմուտք: Ամռան կեսերին նայմանական գործն անցնում է Օրխոն գետը և շարժվում մոնղոլական Ալթայի ուղղությամբ, որտեղ էլ հանդիպում են հակառակորդների բանակները: Այստեղ գտնվում էր նայմանական գործի մի մասը, իսկ հիմնական գործը գտնվում էր Նախու-գունա լեռան ստորոտում: Թեմուչինին հաջողվում է պարտության մատնել նայմաններին, Տայան խանն սպանվում է, իսկ Ջամուխան հավատարիմ մարդկանց հետ հեռանում է և այլևս չի հիշատակվում Մոնղոլական պետության կազմավորման գործընթացներում: 1204-1205 թթ. Թեմուչինը հաղթում է նաև մերկիտներին, որոնց մի մասին ոչնչացնում է, իսկ մյուսներին՝ հանձնում ստրկության: Արդյունքում 1205 թ. վերջին ամբողջ Արևելյան տափաստանն արդեն ենթարկվում էր Թեմուչինին:

Թեմա 2. Մոնղոլական տերության կազմավորումը

1206 թ. մարտին հրավիրվում է Մեծ դուրոյթայ, որի ժամանակ Թեմուչինը նոյնների կողմից հռչակվում է տափաստանի ժողովուրդների Մեծ խան՝ **Չինգիզ խան**: Ղուրոյթայի ժամանակ նա հայտարարում է Համամոնղոլական պետության ստեղծման ավարտի մասին: Մոնղոլիայում իր իշխանությունը հաստատելուց հետո՝ նա որդեգրում է ակտիվ նվաճողական քաղաքականություն, որի նպատակն էր մոնղոլների ազդեցությունը հաստատել հարևան և հեռավոր տարածաշրջաններում: Չինգիզ խանն առաջինը հայացքն ուղղում է դեպի արևելք՝ Չինաստան: Քոչվորների համար հարուստ Չինաստանը միշտ եղել է ուշադրության կենտրոնում, ուստի նրանք առաջին իսկ հնարավորության դեպքում փորձում էին գրավել այն: Այս շրջանում Չինաստանը բաժանված էր երկու քաղաքական միավորների՝ **Ցզին**, որը տարածվում էր երկրի հյուսիսային մասում և **Սուև**, որը գտնվում էր հարավում: Չինգիզ խանի երազանքն էր գրավել Ցզին կայսրությունը, որի համար հարկավոր էր ապահովել իրեն մյուս քոչվորների հարձակումներից և շրջափակել կայսրությունը հյուսիսից:

1207 թ. Չինգիզ խանն իր ավագ որդուն՝ Ջուչին, ուղարկում է կովելու սահմանամերձ օրհասների, բուրյատների, դրդգների ու թումեթների դեմ և այս բոլոր ցեղերն ընդունում են մոնղոլների գերիշխանությունը:



1209 թ. սկսվեցին Չինգիզ խանի աշխարհակալ նվաճումները: Մոնղոլիայից հարավ՝ ներկայիս Գանսու նահանգի տարածքում, տարածվում էր **Մի Սյա** (Արևմտյան Սյա) պետությունը (1038-1227), որն ընկած էր Չինաստան տանող ճանապարհին: Մի Սյա պետությունը հիմնադրվել էր Չինաստանում Թան դինաստիայի (618-907) կործանումից հետո տիրեթցի քոչվոր թանգուսների կողմից, որոնք ընդունել էին բուդդայականություն և գտնվում էին չինական մշակույթի

ազդեցության տակ: Մոնղոլական գորքը շարժվում է դեպի մայրաքաղաք **Չժունսի** (Էրիկայա), սակայն հանդիպում է համառ դիմադրության: Ցզինյան կայսրը հրաժարվում է օգնել թանգուտական տիրակալ **Լի Անչուանին**՝ պատճառաբանելով, որ թանգուտները բավարար չափով հավատարիմ չեն եղել իրեն: Երկար պաշարումից հետո 1210 թ. թանգուտները հանձնվում են: Չինգիզ խանն արևմուտքում փորձում է նվաճել նաև կարակիդանների պետությունը, որն անվանվում էր **Մի Լյաո** կամ Արևմտյան Լյաո (1124-1218): Մի Լյաո պետության մայրաքաղաքը Բալասագուն էր, որի տիրակալները կրում էին թյուրքական «գուրխան» տիտղոսը: Բնակչության մեծամասնությունը կազմում էին թյուրքերը, իսկ վերնախավը դավանում էր բուդդայականություն՝ չինական դավանանքով, և արքունիքում պահպանում էր չինական մշակույթը: Մոնղոլական արշավանքների շրջանում այս պետությունը գտնվում էր քաղաքական ու տնտեսական խորը ճգնաժամի մեջ, ինչից էլ օգտվեցին մոնղոլները: Ճգնաժամն ավելի է խորանում, երբ 1209 թ. ապստամբում է թյուրք-ույղուրական առաջնորդ Բարչուկը և դաշնակցում Չինգիզ խանի հետ: Չինգիզ խանի հետ համաձայնության են գալիս նաև թյուրք-կառլուկների խան Արսուանը և Ալմալիկի տիրակալ Բուզարը, որի արդյունքում մոնղոլական գորքը հնարավորություն է ստանում ուղուրների տարածքով առաջ շարժվելու: Այս արշավանքների կարևորագույն ձեռքբերումներից էր նաև այն, որ Չինգիզ խանի մոտ ծառայության են անցնում ուղուր կրթված ազնվականության ներկայացուցիչները, որոնք իրենց վրա են վերցնում պետության կառավարման համակարգը և հոգևոր միջավայրը կազմակերպելու գործառույթները:

Չինական արշավանքը: Այն կազմակերպելու համար Չինգիզ խանին հաջողվում է զգալի քանակությամբ ուղտեր ձեռք բերել և Գոբի անապատով սկսել արշավանքը դեպի Հյուսիսային Չինաստան: Ցզին կայսրությունն ուներ զգալի ռազմական ուժ՝ նրա բանակը բաղկացած էր 500000 զինվորից, այդ թվում 120000 հեծյալներ, որոնք հիմնականում քոչվոր չժուրջժեններն էին: Չինաստանն ուներ պաշտպանական ամրություններ, այդ թվում Մեծ պատը: Կայսրության մայրաքաղաք **Չժունդուն** (ներկայիս Պեկինի տարածքում) ևս

ուներ պաշտպանական խոշոր ամրություններ ու պատնեշներ: 1211 թ. Չինգիզ խանը շարժվում է Չինաստան: Նրա գորքը բաղկացած էր երեք թումեններից: Առաջինը ղեկավարում էին նրա որդիները՝ Չադաթայը, Ջուչին և Ուզեդեյը, և շարժվում էին Ցզինչժոու: Նրանցից արևելք գտնվում էին մյուս երկու գորամիավորումները՝ Չինգիզ խանի ու նրա լավագույն հրամանատարների ղեկավարությամբ, որոնք շարժվում էին Խուանչժոու:

Անցնելով չինական Մեծ պարիսպը՝ մոնղոլական գորքը բաժանվում է առանձին խմբերի: Առաջին խոշոր ճակատամարտը տալիս է Ջեբեն, որտեղ մոնղոլները հաղթում են: Մոնղոլական մեկ այլ գորաբանակ գրավում է Շանսի նահանգից հյուսիս գտնվող շրջանները: Ջեբեն կարողանում է գրավել նաև Ցզյու Յուն Գուան ամրոցը՝ փակելով Չժունդու տանող հիմնական ճանապարհը: Նման պայմաններում Չինգիզ խանը կարող էր գրավել Լունխուդայ քաղաքը, որը Չժունդուից 25 մղոն հեռավորության վրա էր: Ջեբեին չի հաջողվում գրավել մայրաքաղաք Չժունդուն, սակայն գրավում է արևելյան մայրաքաղաք **Դունցզին**:

1212 թ. մոնղոլական գորքը վերսկսում է ռազմական գործողությունները, սակայն ճակատամարտերից մեկի ժամանակ Չինգիզ խանը վիրավորվում է և մոնղոլական գորքը հարկադրված նահանջում է: 1213 թ. մոնղոլներն սկսում են հարձակումը մայրաքաղաքի ուղղությամբ և կարողանում են գրավել շրջակա ամրոցները: Արդյունքում մոնղոլները պաշարման մեջ են վերցնում Չժունդուն և մի շարք խոշոր քաղաքներ: Ցզին կայսրությունում քառսային իրավիճակ էր, քանի որ գորքը ստիպված էր ճնշել ապստամբությունները: Ամենուր տարածվում է սովը, հիվանդությունները, իսկ մոնղոլների գրաված տարածքները վերածվել էին ավերակների կույտերի:

Մոնղոլների հաջողությունը պայմանավորված էր կիդանների ապստամբությամբ, ինչպես նաև չինական ազնվականների դավաճանությամբ: 1213 թ. մայրաքաղաքում կազմակերպվում է պետական հեղաշրջում՝ կայսր **Վեյշաո Վանը** (1209-1213) սպանվում է և գահ է բարձրանում **Սյուան-ցզուն** (1213-1223): Այս շրջանում մոնղոլական երեք բանակները տարբեր ուղղություններով մոտենում են չինական մայրաքաղաքին, որը գրավելն այնքան էլ հեշտ չէր: Չին-

գիզ խանն առաջարկում է հանձնվել և Սյուան-ցգու կայսրը համաձայնվում է: Ձեռք բերված համաձայնագրով՝ Սյուան-ցգուն Չինգիզ խանին էր հանձնում Վեյշաո Վանի դստերը՝ Գունչժու-խաթունը դառնում է Չինգիզ խանի չորրորդ կինը: Մակայն շուտով կայսրը որոշում է մայրաքաղաքը տեղափոխել **Ղայան**, իսկ այս քայլը Չինգիզ խանը դիտում է որպես դաշինքի խախտում: 1215 թ. մոնղոլական զորքը պաշարում է Չժունդուն. նրանք կարողանում են պաշարվածներին ամբողջությամբ զրկել որևէ օգնությունից, և սուվն ստիպում է բացել քաղաքի դարպասները: Մոնղոլներն ավերում ու կրակի են մատնում ցզինյան մայրաքաղաքը, բնակչության մի մասը սպանվում է, իսկ մյուս մասն էլ ստրկացվում: Մայրաքաղաքի նվաճումից հետո Չինաստանի մյուս վայրերում ռազմական գործողությունները դեռևս շարունակվում էին: Մանջուրիայում վերջ է դրվում Ցզին իշխանությանը և անգամ Կորեան սկսում է մոնղոլներին հարկ վճարել: 1217 թ. Չինգիզ խանը Չինաստանում կառավարիչ է նշանակում իր լավագույն զորահրամանատարներից **Մուկայլին** և վերադառնում է Մոնղոլիա:

Նախքան Չինգիզ խանը նախապատրաստվում էր արևմուտք արշավանքներ ձեռնարկելուն, Չինաստանում ռազմական գործողությունները շարունակում էր Մուկայլին: Վերջինս իր տրամադրության տակ ուներ 70000-ի հասնող զորք, որի կեսը կազմում էին կիդաններն ու չինացիները: Մոնղոլները նրանց օգտագործում էին պաշարողական գործողությունների ժամանակ: Մոնղոլական զորքը շարժվում էր հիմնականում լեռնային վայրերով և մեկը մյուսի հետևից գրավում ու ավերում չինական քաղաքներն ու բնակավայրերը: Մուկայլիի գլխավորությամբ գլխավոր արշավանքն սկսվեց **1217 թ. աշնանից**, որի նպատակն էր վերջնականապես հնազանդեցնել ողջ Չինաստանը: Մոնղոլները ռազմական գործողություններն իրականացնում էին մի քանի ուղղություններով՝ արևելքում շարժվում են դեպի Խուբեյ ու Շանդուն, իսկ արևմուտքից՝ Շանսի: Ցզինյան զորքը կենտրոնացված էր Խուբեյում և 1218 թ. մոնղոլներին հաջողվում է մի քանի լուրջ հարվածներ հասցնել նրանց ու գրավել **Շանսին**: Մուկայլին ծրագրել էր Մունի զինվորների հետ լայնամասշտաբ ռազմական գործողություններ սկսել և գրավել Ցզինի արևմտյան

մասը: Չնայած Մուկայլին լքում են թանգուտական զորքերը, սակայն նա կարողանում է ցզինյան երկու զորաբանակների նկատմամբ հաղթանակներ տանել: 1223 թ. հերթական ճակատամարտերից մեկի ժամանակ Մուկայլին վախճանվում է: Նրա հաջորդ է նշանակվում որդին՝ **Բորուն**, որը շարունակում է ռազմական գործողությունները: 1228 թ. Բորուն ևս մահանում է՝ ավարտին չհասցնելով Ցզին պետության ամբողջական նվաճումը: Մակայն մոնղոլները չեն հրաժարվում Չինաստանը նվաճելու ծրագրից և այն շարունակում էր մնալ արտաքին քաղաքականության օրակարգում:

1217-1218 թթ. մոնղոլները գրավում են **Քաշգարն** ու **Արևելյան Թուրքեստանը** և նախապատրաստվում ողջ Կենտրոնական Ասիայի նվաճմանը:

Պատերազմ Խորեզի դեմ: 1216 թ. Չինգիզ խանը, վերադառնալով Մոնղոլիա, նպատակ ուներ կարգուկանոն հաստատել Հյուսիս-արևմտյան Մոնղոլիայում և նվաճել կարակիդանների տարածքները: Ապստամբություններն ու երկպառակտչական կոիվներն անկման էին հասցրել կարակիդանական պետությունը, որը նպատավոր գործոն էր մոնղոլական նվաճումների համար: 1217 թ. Ջեբեն 20000 զորքով շարժվում է արևմուտք և, օգտագործելով նպատակահարմար իրադրությունը, կարողանում է նվաճել կարակիդանական տարածքները: Արդյունքում մոնղոլական պետության սահմանները հասնում են մինչև **Պամիր** և **Սիր-Դարյա**, այսինքն՝ սահմանակից է դառնում Խորեզմի պետությանը:

Այն հիմնադրել էր 1097 թ. թյուրքական ծագմամբ **Էկինչի իբն Քոչկարը**: Խորեզմշահերն ստիպված էին երկար ժամանակ պայքարել սելջուկների դեմ: **Թաջ ադ-Դին իլ-Արալանի** (1156-1172) օրոք հաջողվում է ազատվել սելջուկյան գերիշխանությունից, իսկ նրա հաջորդ **Ալա ադ-Դին Թեքեշը** (1172-1200) Կենտրոնական Ասիայից դուրս է քշում սելջուկներին ու գրավում է Ամու-Դարյայից հյուսիս ընկած հողերը և Խորասանը: Թեքեշը հրաժարվում է կարակիդանների հետ պատերազմելուց, սակայն 1200 թ. գահ բարձրացած **Ալա ադ-Դին Մուհամմեդ II-ը** (1200-1220) հակառակ քաղաքականությունն է որդեգրում: Նա հետևում էր կարակիդանների պետությունում տեղի ունեցող իրադարձություններին և, օգտվելով ստեղծված

իրավիճակից, պատերազմ է սկսում: Մուհամմեդն իր պետությանն է միացնում Աֆղանստանի մեծ մասը և Հյուսիսային Հնդկաստանը: XIII դ. սկզբին Խորեզմի պետության մեջ էր ներառված նաև ողջ Իրանը, բացի Խուզիսթանից և իսմայիլիթների տիրոջություններից: Մուհամմեդի արշավանքների արդյունքում թեև ընդարձակվեց պետության սահմանները, սակայն իրականում այն թուլացավ: Պետության հետագա անկմանը նպաստում էր Մուհամմեդի և նրա մոր՝ դփչադական թագուհի Թուրխան-խաթունի, թշնամական հարաբերությունները:

1215 թ. ասիական երկու տերությունների (Մոնղոլիայի և Խորեզմի) միջև սկզբնավորվում են առաջին դիվանագիտական փոխհարաբերությունները, որոնց նպատակն էր պահպանել խաղաղությունը և կանոնակարգել առևտուրը: Խորեզմի դեմ պատերազմ սկսելուն խանգարում էր այն, որ այս շրջանում ակտիվացել էին մերկիսները, ուստի 1216 թ. աշնանը Չինգիզ խանը Ջուչիի և Մուրեդեյի գլխավորությամբ մեծաքանակ զորք է ուղարկում արևմուտք, որի խնդիրն էր մինչև վերջին մարդը ոչնչացնել նրանց:

Անշուշտ, Մոնղոլական տերության և Խորեզմի միջև բարեկամական ու դաշնակցային հարաբերություններ երկար գոյություն ունենալ չէին կարող, քանի որ երկու տիրակալներն էլ աշխարհակալ ձգտում ունեին: Պատերազմին նախապատրաստվելու համար ժամանակ շահելու նպատակով 1218 թ. Չինգիզ խանը դեսպանություն է ուղարկում Մուհամմեդի մոտ՝ պայմանագիր կնքելու համար: Երկրի ներսում առկա քաղաքական անկայունությունն ստիպում է Մուհամմեդին ստորագրել պայմանագիրը, սակայն Չինգիզ խանից կախվածությունը խոցում էր նրա հպարտությունը: Շուտով Չինգիզ խանն իրենց քարավաններով (450 մարդով) արևմուտք է ուղարկում չորս մուսուլման վաճառականների: Սակայն սահմանային **Օտրաք** քաղաքում քարավանները թալանում են, իսկ վաճառականներին՝ մահապատժի ենթարկում: Չինգիզ խանը պահանջում է Մուհամմեդից իրեն հանձնել մեղավորներին, սակայն մերժում է ստանում: Կողմերի միջև խաղաղություն պահպանելն անհնար է դառնում, ուստի նրանք պատրաստվում են պատերազմի:

Որպես կանոն Չինգիզ խանը հիմնավորապես էր պատրաստվում արշավանքներին: Ռազմական գործողություններին նախորդում էր թշնամու ուժերի և առհասարակ տվյալ երկրի հետախուզումը, որը կատարվում էր լրտեսների և մոնղոլների մոտ ծառայության մտած մահմեդական առևտրականների միջոցով: Ռազմական գործողություններին նախորդում էր նաև դիվանագիտական նախապատրաստությունը: Այսպես, Չինգիզ խանը Խորեզմի շահ Ալա ադ-Դին Մուհամմեդի մոտ ուղարկում է մի քանի դեսպանություններ, որոնց հանձնարարված էր բանակցություններ վարելու պատրվակով այդ պետության վերաբերյալ ստույգ տեղեկություններ հավաքել: Նման կերպ նախապատրաստվելուց հետո 1219 թ. Չինգիզ խանն Իրտիշի ափերից մեծ բանակ ուղարկեց խորեզմշահի դեմ: Ջորքի թիվը հասնում էր 150000, որոնք բոլորն էլ հեծյալներ էին: Մուհամմեդն ուներ 300000-ի հասնող զորք, սակայն նա վախենում էր իր զորահրամանատարների դավաճանությունից, ուստի զգուշանում էր զորքին մի վայրում հավաքելուց: Փոխարենը խորեզմշահը գերադասում էր ամեն քաղաքում կայազոր թողնել, իսկ ինքն էլ գնում է Բալխ՝ ավելի հավաստարիմ զորք հավաքելու նպատակով:

1219 թ. աշնանը մոնղոլները մոտենում են Կենտրոնական Ասիայի սահմաններին: Մոնղոլական հիմնական ուժերը կենտրոնանում են սահմանային Օտրաք քաղաքի մոտ: Քաղաքը վերցվում է պաշարման մեջ, որը տևում է մինչև 1220 թ. փետրվար: Ի վերջո այն գրավում և ավերում են, իսկ բնակչության հետ դաժան հաշվեհարդար տեսնում: Չինգիզ խանն առաջ շարժվելով մոտենում է **Նուք** քաղաքին, որի բնակչությունը հանձնվում է առանց դիմադրության: Հերթը **Բուխարային** էր, ուր բնակչությունը տեսնելով զորքի պարտությունը, պաշարումից տասներկու օր հետո՝ 1220 թ. փետրվարին, հանձնվում է: Քաղաքն ավերվում է, իսկ բնակչության մի մասը կոտորվում, մյուսը՝ ստրկացվում: 1220 թ. մարտին մոնղոլները մոտենում են **Մամարղանդ** քաղաքի մատույցներին և դաժան կոնվենքից հետո՝ ապրիլին, այն ևս գրավում: Քաղաքի մի մասը հիմնահատակ ավերվում է, բնակչության մեծ մասին ստրկացնում են, այդ թվում 30000 արհեստավորների տեղափոխում են Մոնղոլիա: Այս

պիսով, Խորեզմի պետության կարևորագույն քաղաքները և ռազմական հենակետերն անցնում են մոնղոլների ձեռքը:

Խորեզմշահ Մուհամմեդը, չկարողանալով մոնղոլներին դիմադրություն ցույց տալ, դիմում է փախուստի: Չինգիզ խանը փախչող Մուհամմեդի հետևից ուղարկում է երեք ռազմական ջոկատ՝ Ջեբե նոյնի, Մուբեդեյ բահաթուրի և Տոկուչարի գլխավորությամբ: Մուհամմեդը փախչելով Իրան փորձում է գորք հավաքել, սակայն ապարդյուն: Այնուհետև նա հայտնվում է Կասպից ծովի հարավային ափին գտնվող Աբեսկուն կղզում, որտեղ էլ 1220 թ. մահանում է՝ իրեն հաջորդ թողնելով **Ջալալ ադ-Դինին (1220-1231)**: Վերջինս հոր մահից հետո մեկնում է Խորեզմ, սակայն, հանդիպելով տեղական ազնվականության թշնամական վերաբերմունքին, ստիպված վերադառնում է արքունի Ղազնի քաղաքը, որտեղ էլ կարողանում է հսկայական գորք հավաքել:

Մոնղոլներին հաջողվում է գրավել Ամու-Դարյայի ափին ընկած խորեզմյան վերջին քաղաք **Գուրգանջը**, որտեղ Ջալալ ադ-Դինը որոշ ժամանակ դիմադրություն է ցույց տալիս, սպա գաղտնի փախչում է: Քաղաքը գրավելուց հետո մոնղոլներն անխնա կոտորում են բնակչությանը, բացի արհեստավորներից, երեխաներից ու երիտասարդ կանանցից, որոնց թիվը հասնում էր մոտ 100000-ի: Քաղաքի գրավումով մոնղոլների առջև ճանապարհ է բացվում Աֆղանստան և Խորասան: Շուտով մոնղոլական առաջապահ գորքը հասնում է մինչև Արևելյան Իրան: 1220-1223 թթ. մոնղոլները նվաճում են ողջ **Խորասանը**՝ նրա խոշոր քաղաքներ Մերվը, Բալխը, Հերաթը, Թուսը, Լիշապուրը:

1221 թ. Ջալալ ադ-Դինը հաստատվում է Հինդուկուշից հարավ՝ Ղազնիում, և նախապատրաստվում է դիմակայել մոնղոլներին: Քարուլից ոչ հեռու՝ **Փերվանի** տափաստանում, տեղի ունեցած ճակատամարտում Ջալալ ադ-Դինի 90000 բանակին հաջողվում է հաղթանակ տանել մոնղոլական զորավար Շիգի Կուտուկույի նկատմամբ: Սակայն դրանից հետո խորեզմշահից հեռանում են գուրերն ու աֆղանները: Շուտով մոնղոլական նոր բանակը՝ անձամբ Չինգիզ խանի գլխավորությամբ, շարժվում է Ջալալ ադ-Դինի դեմ: Շարժվելով լեռնային վայրերով՝ մոնղոլները ոչնչացնում են բազմա-

թիվ բնակավայրեր, այդ թվում բուրդայական հայտնի կենտրոն **Բամիյան**: 1221 թ. նոյեմբերին Ինդոս գետի ափին՝ Փեշեվարի մոտ, Ջալալ ադ-Դինի գորքի և մոնղոլների միջև տեղի է ունենում վճռական ճամատամարտ, որտեղ խորեզմշահը պարտություն է կրում և փախչում Փենջաբ: Նրա կողմնակիցներն ապստամբություններ են բարձրացնում Հերաթում, Մերվում և Բալխում, որոնք մոնղոլները դաժանությամբ ճնշում են: Սկզբնաղբյուրներում պահպանված տեղեկությունների համաձայն՝ Մերվում սպանվում է մոտ կես միլիոն մարդ, իսկ Բալխում մնացել էին միայն թափառական շները: 1223 թ. աշնանը Չինգիզ խանը հասնում է Մամարղանդ և Մերվում կառավարիչ է նշանակում իր որդուն՝ Չաղաթային: Այսպիսով, Խորեզմի պետությունը դադարում է գոյություն ունենալուց, իսկ նրա տարածքները ներառվում են Մոնղոլական տերության կազմում:

Մոնղոլները Կովկասում և Ռուսիայում: Դեռևս 1220 թ. ամռանը Չինգիզ խանը հրամայել էր հետապնդել փախուստի մեջ գտնվող խորեզմշահ Ալա ադ-Դին Մուհամմեդին, ինչպես նաև ծանոթանալ Հյուսիսային Իրանում ու Այսրկովկասում տիրող իրավիճակին: Շուտով մոնղոլները տեղեկանում են, որ Մուհամմեդը վախճանվել է, սակայն Չինգիզ խանը հրամայում է իր զորքերին նվաճել խորեզմշահի տիրույթները՝ Պարսկական Իրաքը, Ատրպատականը, Աղվանքը և Շիրվանը: 1220 թ. դեկտեմբերի առաջին կեսին մոնղոլական զորքը ներխուժում է Պարսկական Իրաք և Ատրպատական՝ գրավելով ու ավերելով ճանապարհին ընկած մեծ ու փոքր բնակավայրերը: Նրանք պաշարում են Թավրիզը, սակայն քաղաքի կառավարիչը կարողանում է համաձայնության գալ մոնղոլների հետ և քաղաքը հանձնում է նրանց: Այնուհետև մոնղոլներն անցնում են Հյուսիս-արևմտյան Իրան, գրավում են Ղազվինը և որոշում են 1220-1221 թթ. խստաշունչ ձմեռն անցկացնել մեղմ կլիմա ու փարթամ բուսականություն ունեցող **Մուղանի դաշտավայրում**: Մուղան շարժվելու ճանապարհին՝ մոնղոլներն անցնում են **Ջաքարյան Հայաստանի** մաս կազմող Արցախ-Խաչենի հարավ-արևելյան սահմանագլխով: Վրաց թագավոր **Գեորգի Լաշան (1207-1222)** փորձում է դիմակայել մոնղոլներին: 1220 թ. դեկտեմբերի վերջին կամ 1221 թ. հունվարի սկզբին Արցախ-Խաչենի հարավ-արևելյան սահմանագլ-

խին տեղի ունեցած ճակատամարտում հայ-վրացական զորքը պարտվում է ու դիմում փախուստի: Ճակատամարտից հետո մոնղոլները շարժվում են Մուղան և բանակում Պարտավի ու Բայլականի միջև ընկած Բեղամեջի շրջանում: Վրաց արքունիքը փորձում է մոնղոլների դեմ միասնական ճակատ ստեղծել, սակայն Գերոգի Լաշային դա չի հաջողվում: Տեղեկանալով այս մասին՝ մոնղոլները 1221 թ. հունվարի երկրորդ կեսին ներխուժում են Ջաքարյան Հայաստան: Մոնղոլներն առաջանում են Պարտավ-Տիդիս ուղղությամբ: 1221 թ. հունվարին **Կոտմանի** դաշտում տեղի է ունենում ճակատամարտ, որտեղ հայ-վրացական զորքերը պարտություն են կրում: Ստեղծված իրադրությունից խիստ տուժում է նաև Ջաքարյան Հայաստանը, քանզի մոնղոլներն այս անգամ բուն Վրաստան չեն մտնում: 1221 թ. գարնանը նրանք վերսկսում են ռազմական գործողությունները և ապրիլ-նոյեմբեր ամիսներին գրավում, ավերում ու կողոպտում Մարաղան, Նախիջևանը, ինչպես նաև Ատրպատականի մի շարք քաղաքներ: Թավրիզը փրկագին է վճարում և ավերածությունների չի ենթարկվում: Այնուհետև մոնղոլները պաշարում են Գանձակ քաղաքը, սակայն լուր ստանալով, որ վրաց արքունիքը նախապատրաստվում է վերսկսել ռազմական գործողությունները, դադարեցնում են պաշարումը և Գանձակ-Շամխոր ուղղությամբ շարժվում Տիդիս: Ճակատամարտը տեղի ունեցավ 1221 թ. վերջին հայ-վրացական սահմանագլխին գտնվող **Հունարակերտ** (Խունան) քաղաքի շրջակա դաշտավայրում: Հայ-վրացական բանակը պարտություն է կրում՝ տալով մեծ կորուստներ: 1222 թ. սկզբին մոնղոլները կրկին ներխուժեցին Ջաքարյան Հայաստան՝ նպատակ ունենալով հասնել Վրաց թագավորության կենտրոնական շրջանները: Այս անգամ ևս վրաց արքունիքը մտածում էր բուն Վրաստանի անվտանգության մասին: Մոնղոլական զորքը, պարտության մատնելով մի քանի գորախմբերի, ավերելով ու կողոպտելով հայկական բնակավայրերը, հետ է վերադառնում: Հարավային Կովկասում ստեղծված նման իրավիճակում, երբ Ջաքարյանների Հայաստանն ու Վրաստանը փորձում էին վերակազմակերպել ուժերը, հայտնվում է մի նոր հակառակորդ՝ Ջալալ ադ-Դինը, որն սկսում է ասպատակել, ավերել ու կողոպտել այս երկրները, ինչի արդյունքում խո-

րանում է տնտեսական ու քաղաքական ճգնաժամը: Հետագա տեղաշարժերի ժամանակ մոնղոլները մտնում են Շիրվան և պաշարում մայրաքաղաք Շամախին, որը գրավելուց ու ավերակների վերածելուց հետո անցում են Դերբենդը և մտնում Հյուսիսային Կովկաս: Մոնղոլներն ասպատակում են ալանների ու դիչաղների (կիպչակներ) երկրները և շարժվում առաջ՝ նպատակ ունենալով հետախուզել սլավոնական հողերը:

Հաղթելով դիչաղներին ու ալաններին՝ մոնղոլները հասնում են **Ուկրաինա ու Ղրիմ** և 1222-1223 թթ. ձմեռն անցկացնում այստեղ: Գարնանը նրանք տեղեկանում են, որ ռուսները **Մստիսլավ Գալիցկու** գլխավորությամբ նախապատրաստվում են ճակատամարտի: Ռուսներին հաջողվել էր հսկայական զորք հավաքել, նրանց օգնության պետք է գար նաև դիչաղական 10000 հեծելազորը: Մստիսլավի զորքերն անցնում են Դնեպրը և հարձակվում մոնղոլների վրա՝ չսպասելով օգնական ուժերի ժամանմանը: **1223 թ. մայիսի 31-ին Կալկա** գետի մոտ տեղի ունեցած ճակատամարտում ռուսական զորքը պարտություն է կրում: Ամռանը, հավաքելով անհրաժեշտ տեղեկություններ, Ջեքեն ու Մուբեդեյը որոշում են վերադառնալ Մոնղոլիա: Մոնղոլական թումենները, անցնելով բուլղարների հողերով, հայտնվում են ծուղակի մեջ: Ջեքեն զոհվում է, իսկ Մուբեդեյը կարողանում է զորքի մի մասի հետ փրկվել ու միանալ Ջուչիին: Կովկաս և Ռուսիա կատարած հետախուզական արշավանքների հավաքած տեղեկությունների հիման վրա մոնղոլական արքունիքը մշակեց առաջիկայում դրանք նվաճելու ծրագրեր:


Թանգուտյան արշավանքը: Խորեզմի նվաճումից հետո Չինգիզ խանը դարձյալ հայացքն ուղղեց դեպի Սի Սյա պետություն: Թանգուտների առաջնորդ **Աշագամբուն** կարողանում է հավաքել հսկայական բանակ, որին միանում են նաև տիրեթցիներն ու ցզինցիները: Աշագամբուն, հետևելով խորզմշահ Մուհամմեդի օրինակին, որոշում է մոնղոլների հետ բաց դաշտում մարտի չբռնվել, փոխարենը՝ ուժերը կենտրոնացնում է լավ ամրացված քաղաքներում: 1226 թ. գարնանը Չինգիզ խանը 10000 զորքով անցնում է Կերուլեն գետը և չնայած դժվարություններին՝ առաջ է շարժվում և Սի Սյա թագավորության սահմաններում գլխովին ջախջախում տիրեթցիներ-

րի ու թյուրքերի միացյալ զորքին: Չինգիզ խանը հարձակվում է թագավորության արևմտյան և հյուսիսային շրջանների վրա ու ոչնչացնում խոշոր քաղաքներն ու ամրությունները: 1226 թ. սեպտեմբերին Խուանխեն գետի ափին Չինգիզ խանը հանդիպում է Աշագամբուի զորքին: Ճակատամարտում մոնղոլները հաղթանակ են տանում և հետապնդում են Աշագամբուին մինչև Ալաշան, որտեղ էլ նրան գերում են և մահապատժի ենթարկում: 1226 թ. դեկտեմբերին պաշարվում է Չժունսին մայրաքաղաքը, որը գրավվում է հաջորդ տարվա գարնան: Այսպես ավարտվում է թանգուտական պետության նվաճումը: 1227 թ. սկզբին հիվանդությունից մեռնում է Ջուչին և նրան փոխարինում է իր որդի **Բայթուն**: Չինգիզ խանը ևս հիվանդանում է և հասկանում, որ իր վախճանը մոտ է: Նա իրեն հաջորդ է նշանակում որդուն՝ Ուգեդեյին, իսկ մինչև դուրովթայի հրավիրումը ժամանակավոր խնամակալ է նշանակում Բորտեյին:

Դեպ էղև մեռանիլ նմա, և յառաջ քան զվախճանն՝ կոչեաց զգորսն ամենայն և զերիս որդի իւր, զոր ուներ, և ասէ զգորսն. «Ես աւափիկ մեռանիմ. Ձմի յորդոց աստի իմոց՝ զոր կամիք, ընտրեցէք ձեզ թագաւոր, փոխանակ իմ»: Եւ նոքա ետուն պատասխանի. «Ձոր միանգամ կամք քո ընտրեսցեն, նա լիցի մեր թագաւոր, և նմա ծառայեսցուք միամտութեամբ»: Յայնժամ ասէ ցնոսա. «Ես ասեմ ձեզ զբարս և զգործս որդոց իմոց երեսունց: Այս անդրանիկ որդիս իմ Չաղատայ. Սա այր պատերազմող է և զօրասէր, բայց հպարտ է բնութեամբ և մեծ քան զպատահեալ բախտն: Իսկ երկրորդ որդիս իմ, նմանապէս յաղթող է ի պատերազմունս, բայց ուշտ է բնութեամբ: Իսկ կրտսեր որդի իմ, շնորհաւոր է ի մանկութենէ իւրմէ, և առատ բարոյիք, և մեծատուր ի ձիրս, և յորմէ հետէ ծնաւ սա ինձ, օր ըստ օրէ յաւելաւ փառք իմ և մեծութիւն: Արդ ահա ասացի ձեզ զամենայն ստուգութեամբ, ում և կամիք, պագէք երկիր յերեսունց աստի»: Եւ նոքա մատուցեալ երկրպագեցին կրտսերոյն, որում անուն էր Հոքթա խաղան, և հայրն էր զթագն ի գլուխ նորա և մեռաւ: (Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, Երևան, 1961, էջ 232-233):

Չինգիզ խանը մահանում է 1227 թ. **օգոստոսին**: Նրա պահանջով իրեն թաղում են Բուրխան-Հալդուն լեռան լանջին, սակայն ցայսօր տեղը հայտնի չէ: Չինգիզ խանի անձը պաշտամունքի առարկա է դարձել մոնղոլների համար, քանզի նրա շնորհիվ նրանք հայտնի դարձան ամբողջ աշխարհում՝ ստեղծելով ամենամեծ աշխարհակալ տերությունը: Չինգիզ խանի մահվան պահին այն իր մեջ ներառում էր Հյուսիսային Չինաստանը, կարակիդանների պետությունը և Կենտրոնական Ասիան:

Չինգիզ խանի արքայատոհմը



Թեմա 3. Պետական կարգը

Չինգիզ խանը ստեղծեց Համամոնղոլական պետություն, որը տարբերվում էր խանությունից և դասվում քոչվորական կայսրությունների շարքին: Այն կազմավորվեց պատերազմների արդյունքում, ուստի նրա կազմակերպման մեջ գերակշռում էր ռազմական հատկանիշը, որը հետագայում էլ պահպանեց իր առաջնությունը: Մոնղոլական պետականությունը ձևավորվում էր նոր սկզբնավորվող ֆեոդալական հարաբերությունների շրջանակներում, ուստի հասարակության կազմակերպման ցեղային հատկանիշների մի մասը վերացան, իսկ մյուսները փոխարինվեցին և հարմարվեցին նոր պայմաններին:

Ղեռնա 1204 թ. Չինգիզ խանը կատարում է ռազմական բարեփոխումներ, իսկ 1206 թ. դրանք ընդլայնում է: Ըստ էության, բանակը համարվում էր Չինգիզ խանի իշխանության միակ իրական հենարանը և նրա ստեղծած քոչվորական տերության ռազմական հիմքը: Ռազմական բնագավառում կատարված ամենակարևոր բարեփոխումը վերաբերում էր խանի անձնական թիկնազորի՝ **քեշիկի**, ստեղծմանը և նրա գործառույթների ճշգրտմանը: Քեշիկը ձևավորելիս ամենակարևոր հանգամանքն այն էր, որ խանն ամբողջությամբ հրաժարվում է նրա հավաքագրման ու համալրման տոհմացեղային սկզբունքներից: Քեշիկը կազմվում էր մոնղոլ նոյոններից և ազատ մարդկանցից, որոնցից քեշիկ էին ընտրվում խելացիներն ու ֆիզիկապես ուժեղները: 1000-ական զորք ունեցող նոյոնի որդին պետք է իր հետ քեշիկ բերեր 10-ական զինվոր, 100-ական զորք ունեցողինը՝ 5-ական զինոր, իսկ զինվոր-բահաթուրի որդին՝ 3-ական: Այս համակարգը, որին խիստ հետևում էին, խանին հնարավորություն էր տալիս ավելացնել քեշիկի զինվորների թիվը: Այսպես՝ 1206 թ. քեշիկի թիվը հասնում էր 10000 զինվորի: Նախկին թիկնազորի 150 զինվորները ձևավորում են քեշիկի հրամանատարական կազմը: Փաստորեն, այսպես ստեղծվում է առաջին ռազմավարչական միավորը, որի կարևոր առանձնահատկություններն էին. այն հնարավորություն էր տալիս խանին ամրապնդել իր ռազմական և անձնական իշխանությունը՝ հին տոհմացեղային առաջնորդների նկատմամբ:

Նման պայմաններում ցանկացած անհնազանդության կամ դժգոհության դեպքում քեշիկը հակակշռում էր ինչպես ամբողջ բանակին, այնպես էլ նուբերների առանձին ռազմական ուժերին: Երկրորդ. Մոնղոլական տերության մեջ քեշիկը դառնում է մի յուրահատուկ կենտրոն, որտեղ առանձնացնում էին առավել ուժեղներին ու խելացիներին, որոնց մի մասին սովաբաբար տրվում էր ռազմավարչական առավել բարձր պաշտոններ: Երրորդ. Չինգիզ խանն ստեղծում է այնպիսի մասնագիտացված ռազմական ուժ, որը յուրաքանչյուր պահին կարող է կատարել անվտանգության ցանկացած գործառույթ: Քեշիկի բացարձակ նվիրվածությունն ապահովելու ու նրան ցեղային առաջնորդների ու նոյոնների ազդեցությունից հեռու պահելու նպատակով խանը նրանց տալիս է զգալի արտոնություններ: Քեշիկում պահպանվում էր երկաթյա կարգապահություն, անգամ խաղաղ ժամանակ նրանք ապրում էին ռազմական կանոնների համաձայն: Մոնղոլական հասարակության մեջ հատուկ կարգավիճակ ունեին **քեբուտուկները**, որոնք առավել մոտ էին կանգնած խանին: Լինելով զինվորականներ՝ նրանք հիմնականում պատասխանատվություն էին կրում դատական համակարգի համար և ունեին Յասայի նորմերի պահպանողի գործառույթներ: Մովորաբար քեբուտուկներն ունեին տարաբնույթ պարտականություններ, ուստի հաճախ դժվար է նրանց դասել զինվորականների շարքին: Մեկ անձի մեջ ամփոփված էր ինչպես զինվորականի, այնպես էլ քաղաքացիական պաշտոնյայի գործառույթներ, քանզի քոչվորական քաղաքակրթության կազմակերպման շրջանակներում ռազմական և քաղաքացիական իշխանությունները տարանջատված չէր: Չինգիզ խանի հրամանով նրանք պատասխանատվություն էին կրում նաև խանական տիրույթների բնականոն գործունեության համար:

Չինգիզ խանի տերությունը կազմակերպված էր ռազմական հատկանիշների վրա և, ըստ էության, քաղաքացիական ու ռազմական գերատեսչությունները համակցված էին և դրանց առնձնացնել հնարավոր չէ: Մյուս կողմից, Չինգիզ խանը քոչվորական քաղաքակրթության կրող էր, հետևաբար դա անտեսել չէր կարող: Նա փորձում էր մոնղոլների համար ստեղծել այնպիսի պայմաններ, որ նրանք ինքնաբավ լինեին: Այդ խնդրի լուծման միակ եղանակը նվա-

ճումներն էին: Այս դեպքում քոչվորները հայտնվում էին ավելի բարձր կազմակերպված քաղաքակրթական միջավայրում, որն ազդում էր նրանց հետագա կազմակերպման վրա: Անհրաժեշտ էր ձևավորել այնպիսի համակարգ, որտեղ քոչվորական քաղաքակրթության հիմնական սկզբունքների առաջնության պայմաններում հնարավոր էր կիրառել ոչ քոչվորական մշակութային հատկանիշները: Քոչվորական քաղաքակրթության կրողների ռազմական գերակայությունը պահպանելու մտորումների արդյունքում խանը մոնղոլներին բաժանեց տասն հազարյակների (թումաններ), հազարյակների (մինգաններ), հարյուրակների (յաուններ) և տասնյակների (աբբաններ): Այս միավորների գլուխ կանգնած էին նոյոնները: «**Նոյոն**» հասկացությունը ռազմական կոչում չէր, այլ խոշոր ֆեոդալական տիրույթ: Համապատասխանաբար նշանակվեցին բյուրապետներ, հազարապետներ, հարյուրապետներ և տասնապետներ, որոնց պաշտոնները և կոչումները փոխանցվում էին ժառանգաբար: Այս բաժանումը պահպանվում էր թե՛ պատերազմական և, թե՛ խաղաղ ժամանակ, ուստի դրանք ռազմավարչական և հարկային միավորներ էին: Նոյոնների մոտ ևս պահպանվում էր խիստ ենթակարգություն: Տեղափոխությունը մեկ նոյոնից մյուսի մոտ չէր թուլատրվում և պատժվում էր մահապատժով: 1206 թ. Մեծ դուրուլթայում Չինգիզ խանը բանակը ստորաբաժանում է հազարների՝ նրանց հրամանատարներ նշանակելով 95 նոյոնների, որոնք հիմնականում իրեն հավատարիմ մարդիկ էին:

Հետագայում Չինգիզ խանը բանակը բաժանում է երեք մասի՝ կենտրոնը, որը նրա կենդանության օրոք ղեկավարում էր Կայան, ձախ թևը կամ արևելյան կողմը ղեկավարում էր Մուկալին, իսկ աջ կամ արևմտյան կողմը՝ Բորչուն: Քոչվորների համար նորություն չէր բանակի բաժանումը հազարների, հարյուրների և տասնյակների, բայց նորություն էր, որ խանն այս սկզբունքը կիրառեց նաև մոնղոլական ողջ հասարակության համար: Այս բաժանումը վերահսկվում և պահպանվում էր խստագույնս, ուստի պատահական մարդիկ չէին կարող զինվորագրվել բանակին: Կենտրոնական Ասիա կատարած արշավանքից հետո բանակում կատարվում են որոշակի վերակառուցումներ. թումենը, որպես ամենամեծ ռազմական միա-

վոր ձևական բնույթ է ստանում, քանի որ կարևոր ռազմական գործողությունների համար ստեղծվում են առավել խոշոր ռազմական միավորներ, որոնք ներառում էին 2-3 թումեն:

Չինգիզ խանն անցկացրեց մի շարք բարեփոխումներ, որոնք ուղղված էին տերության **վարչաքաղաքական** համակարգի ձևավորմանը և ամրապնդմանը: Նա կայսրությունների կազմակերպման երկու սկզբունքից՝ **ռազմաքաղաքական** և **մշակութային**, նախապատվություն տվեց առաջինին: Քոչվորական քաղաքակրթությամբ այս սկզբունքին բնորոշ էր էթնոտարածքային հատկանիշներով առանձնացված միավորները, որոնց հիմքում ընկած էր եվրասիական տափաստաններում մինչ այդ լայնորեն տարածված **թևերի համակարգը**: Նրա ձևավորման վերաբերյալ գոյություն ունեն մի քանի տեսակետներ: Դրանցից մեկի համաձայն պետության տարածքի բաժանումը երկու թևի ծնվել է ռազմական կազմակերպական անհրաժեշտությունից, երբ ցեղերին ներառել են աջ և ձախ թևերում: Որպես կանոն պարտված ցեղերը միավորվում էին ավելի թույլ ուլուսի մեջ՝ ձախ թևում, իսկ հաղթանակած ցեղերն ու նրանց դաշնակիցները սովորաբար կազմում էին աջ թևը: Պետք է նշել, որ պետության տարածքի բաժանումն իրականացվող նվաճումների պայմաններում ուղղակի անհրաժեշտություն էր, քանի որ միայն կենտրոնն ի վիճակի չէր կառավարել հեռավոր և անընդհատ փոփոխվող սահմանամերձ տարածքները: Անշուշտ, հաշվի են առնվում նաև դինաստիական պայքարը և զահաժառանգման խնդիրները, վերջապես նման բաժանման համար որոշակի դեր էր խաղում նաև աշխարհագրական գործոնը: Միապետության պայմաններում երկթևային համակարգը, կարծես թե ենթադրում էր երկիշխանություն: Այս երևույթը կարելի է բնութագրել համակառավարում հասկացությամբ, որը նշանակում է տերության տարբեր թևերի կառավարիչներն իրենց տարածքում օժտված էին ինքնակալ իշխանությամբ, բայց ընդունում էին Մեծ խանի գերագահությունը: Չինգիզ խանի կողմից թևերի համակարգի կիրառումը նորություն չէր: Այն կիրառվել էր տարածաշրջանի մինչմոնղոլական քոչվորական պետություններում, մասնավորապես ժուժանական, հինթյուրքական և կարախանյանների կազանատներում: Սովորաբար քոչվորական կայսրություններում վարչա-

տարածքային կազմակերպման սկզբունքներն ընդհանուր էին՝ օրինակ, տարածքի բաժանումը երկու թևերի, համակառավարման համակարգը գլխավոր կազանի գերակայությամբ, արևմտյան մասի ենթարկումն արևելյանին և այլն: Սակայն թևի շրջանակներում երկրորդական բաժանումը բնորոշ է միայն առավել խոշոր կայսրություններին, ինչպիսիք էին հին թյուրքականը և մոնղոլականը: Այսինքն՝ թևերի համակարգը և համակառավարումը քոչվորական ավանդական կազմակերպման հատկանիշներից էին, որոնք ժառանգել էին մոնղոլները: Չինգիզ խանը հետևելով քոչվորական քաղաքակրթության ավանդույթներին՝ իր պետությունը ևս բաժանեց **արևմտյան և արևելյան թևերի**, ուր արևմտյան մասի կառավարիչները ենթարկվում էին արևելյանին: Արևմտյան թևի կառավարիչները հավաքում էին հարկերը և այստեղ հավաքագրված զորքի գլխավոր հրամանատարներն էին, սակայն գանդ ժառանգելու իրավունք չունեին: Վարչաքաղաքական բարեփոխումների արդյունքում Չինգիզ խանն իր տերությունը բաժանեց կենտրոնի, երկու թևի՝ աջ (բարունգար) և ձախ (ջունգար), և ուլուսների, ընդ որում աջ թևը ենթարկվում էր ձախին:

Աջ թևի ենթարկվելը ձախին հետևյալ կերպ է ներկայացնում 17-րդ դարի պատմիչ Աբուլ-Ղազին. «Մոնղոլների պատկերացմամբ ձախ կողմը գերադասելի է աջից, քանի որ պետության մարմնում սիրտը թագավորն է, իսկ աստված սիրտը տեղավորել է ձախ կողմում»: (Родословное древо тюрков, Сочинение Абуль-Гази, хивинского хана, Пер. и предисл Саблукова Г. С., Казан, 1906, с. 163).

Չինգիզ խանը հատուկ կարգավիճակ էր տվել **կենտրոնին** (գոլ), որը նրա անձնական տիրույթն էր («հազարյակը»): Կենտրոնը տարածքային նշանակություն ուներ. Չինգիզ խանը տերությունը թևերի բաժանելուց հետո առանձնացրեց նրանց միջև ընկած մեկ թումեն, որն ընդգրկում էր Օնոնի, Կերուլենի և Թուուլի ավազանները: Կենտրոնը՝ **Գոլան ուլուսը** («հայրենի վրանը»), համարվում էր

արքայական տիրույթ (դոմեն), որը ժառանգեց Չինգիզ խանի փոքր որդին՝ Թուլուն, որը բնավ չէր նշանակում, թե կրտսեր արքայազնը դառնում էր կայսրության գորքերի գերագույն հրամանատարը, քանի որ կենտրոնի կառավարիչն առանց Մեծ խանի տիտղոսի իրական իշխանություն չուներ: Ըստ էության, գոլը (կենտրոն) այնքան էլ մեծ տարածք չէր ընդգրկում: Ուզեդեյի թագադրման ժամանակ (1229 թ.) Գոլան ուլուսի ղեկավարումը հանձնվում է նրան: 13-րդ դարի 60-ական թթ. Մոնղոլական կայսրության ներսում ձևավորվեցին չորս խոշոր ուլուսներ, որոնք Չինգիզ խանը հանձնել էր իր չորս որդիներին՝ Ջուչի, Չաղաթայ, Ուզեդեյ, Թուլու: Խանը Ջուչիին տվել էր Խոբեզմը և Արևելյան Դեշտ-ի Ղիչաղը (ներկայիս Ղազախստանը), ինչպես նաև ռուսական հողերը, որոնք նրա մահից հետո բաժանվեցին նրա երկու որդիների՝ Բաթուի և Հորդա-Էջենի միջև՝ հիմք դնելով Կապույտ Հորդային և Սպիտակ Հորդային: Չաղաթայի ուլուսն ընդգրկում էր Կենտրոնական Ասիան և Հյուսիսային Իրանը: Ուզեդեյը ժառանգեց Մեծ խան տիտղոսը, իսկ նրա ուլուսն ընդգրկում էր Արևելյան Ասիան, ներառյալ Չինաստանը: Այս տարածքների վրա հետագայում ձևավորվում է Յուան արքայատունը: Բուն մոնղոլական տարածքները, այսինքն՝ ներկայիս Մոնղոլիան, բաժին ընկավ Թուլույին, որն իր տարածքով ամենափոքրն էր:

Չինգիզ խանը որոշակի բարեփոխումներ կատարեց նաև իրավական համակարգում: Նրա հրամանով կազմված օրենքների ժողովածուն հայտնի է **«Մեծ Ցասա»** կամ **«Չինգիզ խանի Ցասա»** անունով, որը երկար ժամանակ կարգավորում էր մոնղոլական հասարակության իրավական հարաբերությունները: Ամենայն հավանականությամբ Ցասան հրապարակվել է 1206 թ. դուրուլթայում: Հետագայում Ցասայում որոշակի փոփոխություններ են կատարվել, որպեսզի այն կիրառվի նաև նոր նվաճված երկրներում: Այդպիսիք եղել են 1218 թ.՝ Խոբեզմի դեմ կատարված արշավանքից առաջ, և 1225 թ.՝ թանգուտական արշավանքից առաջ: Ցասային համարժեք գործում էր նաև **«Բիլիկը»**, որն իր մեջ ամփոփում էր Չինգիզ խանի երկխոսությունները, պատգամները և պատվիրանները, որոնք մոնղոլները փոխանցում էին սերնդե-սերունդ: Ցասայի ամբողջական տեքստը մեզ չի հասել, այլ տարբեր սկզբնաղբյուրներում պահպան-

վել են առանձին հատվածներ: Մակայն այսքանով էլ հնարավոր է պատկերացում կազմել օրենսգրքի բովանդակության և գործառույթների մասին: Յասան գրի է առնվել **ույդուրական այբուբենով**, Չինգիգ խանի հովանավորությամբ, որն անգամ գրել չցիտեր: Այն իր մեջ ներառում է ինչպես սովորության, այնպես էլ Չինգիգ խանի կողմից մշակված իրավանորմերը: Յասան սովորեցնում էր՝ պատվել առաքինիներին ու անմեղներին, հարգել ցանկացած ժողովրդի իմաստուններին ու ուսուցիչներին, սիրել միմյանց, կիսվել հացով, չգողանալ, չստել, չդավաճանել, պաշտպանել ծերերին ու աղքատներին, հարգել բոլոր կրոնները և այլն: Յասայում ամրագրված էր, որ Մեծ խանն Աստծո ընտրյալն է և պետք է նվաճի բոլոր հողերը: Ուստի մոնղոլներին դիմադրություն ցույց տալն ընկալվում էր որպես ընդվզում Աստծո դեմ: Որպես կանոն այն ժողովուրդները, որոնք առանց դիմադրության հանձնվում էին մոնղոլներին նրանց նկատմամբ ավելի բարյացակամ վերաբերմունք էր ցուցաբերվում: Իսկ երբ դիմադրություն էին ցույց տալիս մոնղոլները պատասխանում էին այսպես. «Որտեղից և ինչպե՞ս մենք իմանանք. միայն հավերժական Աստվածը գիտի, թե ինչ կլինի ձեր հետ»: Յասան խիստ պատիժներ էր սահմանում հանցագործությունների և անգամ թեթև զանցանքների համար: Այսպես՝ պատիժ էր նախատեսվում սպանության, մարմնական վնասվածքների, գողության, ամուսնությունը չհարգելու, հասարակական կարգը խախտելու և արդարադատություն չիրականացնելու համար: Բազմաթիվ իրավախախտումների համար սահմանված էր մահապատիժ: Այսպես, օրինակ՝ ով երեք անգամ պարտք էր վերցնում ու սննկանում, ապա դատապարտվում էր մահվան, ով թույլ կտար ստրուկի կամ բանտարկյալի փախուստը ևս դատապարտվում էր մահվան: Լուրջ հանցագործություն էր համարվում ռազմական կարգապահության խախտումը, ստրուկին կամ ռազմագերուն թաքցնելը, տուգանք վճարելուց հրաժարվելը և այլն: Եթե հանրագումարի բերենք Յասայի գործառույթները, ապա.

1. Այն պետք է կարգավորեր մոնղոլական հասարակությունում ձևավորված ֆեոդալական հարաբերությունները:
2. Մոնղոլական պետության կազմավորմանը զուգահեռ ցեղային սովորույթները պետք է իրենց տեղը զիջեին համապետական օրենսդրությանը,

քանզի մոնղոլական հասարակությունն այլևս ցեղային հատկանիշներով չէր կազմակերպվում: 3. Յասայի որոշ իրավանորմեր սկսեցին կիրառել նաև Մոնղոլական տերության տարբեր շրջաններում:

Անհրաժեշտ է նշել, որ Չինգիգ խանի բարեփոխումները պետական համակարգի ոչ բոլոր բնագավառներին էին վերաբերվում: Նա լուրջ և հետևողական քայլեր չձեռնարկեց **տնտեսական** կյանքի կարգավորման համար, իսկ հարկային համակարգը երկար ժամանակ որոշյալ օրենքներով չէր կարգավորվում: Մոնղոլների համար եկամտի հիմնական աղբյուրը՝ ավարն ու կողոպուտը, չէր կարող այդպիսի հսկայական տերության պետական գանձարանի ֆինանսավորման մշտական աղբյուր հանդիսանալ: Ի վերջո մշակում են հարկային համակարգ, որը սովորաբար կիրառվում էր նվաճված ժողովուրդների նկատմամբ: Նրանք գանձում էին ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի մի շարք հարկեր: Ուղղակի հարկերն էին հողահարկը, գլխահարկը, գույքային հարկը, անասնահարկը և այլն, իսկ անուղղակի հարկերն էին այն ամենը, ինչը վերցնում էին պարտադիր հարկերը գանձելուց հետո:

Նորաստեղծ տերությանն անհրաժեշտ էր նոր մայրաքաղաք, ուստի Չինգիգ խանի կարգադրությամբ սկսվեց **Կարակորումի** շինարարությունը, որն էլ դարձավ կայսրության տնտեսական, քաղաքական ու մշակութային կենտրոնը: Մայրաքաղաքը հիմնադրվել է **1220 թ.**, իսկ անունն ստացել է համանուն գետից: **1234 թ.** Ուզեդեյն ավարտում է մայրաքաղաքի հիմնական կառուցապատումը, որից հետո այն դառնում է նաև Գույուք ու Մունկե խաների նստավայրը: Քաղաքն ընկած էր Խանգան լեռան հարավային լանջին՝ Օրխոնի աջ ափին: Կարակորումը որպես կայսրության մայրաքաղաք կարողացավ միավորել մոնղոլական, չինական ու կենտրոնասիական մշակույթները, որը մեծ ազդեցություն ունեցավ մոնղոլական հասարակության հետագա կազմակերպման ու զարգացման համար:

Թեմա 4. Չինգիզյանների նվաճումները

Դեռևս իր կենդանության օրոք Չինգիզ խանը մոնղոլական տերությունը բաժանեց իր որդիների միջև, իսկ գահաժառանգ նշանակեց երրորդ որդի Ուգեդեյին, որն օժտված էր ռազմական և քաղաքական կյանքը կառավարելու ունակություններով: Չինգիզ խանը առանձնացրել էր նաև որդիների տիրույթները: Այսպես՝ Ջուչին ստացել էր տերության հյուսիս-արևմուտքը՝ Ալթայից մինչև Ուրալ լեռնաշղթան և հարավը՝ Ամու-Դարյա գետից մինչև Արալ լիճը: Չաղաթայի տարածքները ներառում էին Թուրքեստանը, Աֆղանստանը, Իրանը և Կովկասը: Ուգեդեյին բաժին հասավ Մոնղոլիայի արևմտյան հատվածը, Արևելյան Թուրքեստանը և Ջունգարիան, իսկ Թոլույին բաժին է հասնում նայմանների հողերը, Մոնղոլիայի արևելյան շրջանները, թանգուտների հողերը, ինչպես նաև Ցզին կայսրության գրավյալ շրջանները: Ուգեդեյի եղբայրներն այս հողերը կառավարում էին որպես խանի տեղապահներ (փոխարքա):



Ուգեդեյ (1229-1241): 1229 թ. հրավիրված դուրոթայում Մեծ խան ընտրվեց Ուգեդեյը: Դուրոթայում քննարկվում է երեք կարևոր խնդիր, որոնք պետք է իրականացնեին Չինգիզ խանի ժառանգները՝ Հյուսիսային Չինաստանի վերջնական գրավումը, Ջալալ ադ-Դինի առաջադրած կասեցումը և դեպի Եվրոպա արշավանքի կազմակերպումը: Փաստորեն Չինգիզ խանի ժառանգներն իրենց ստացած տարածքների սահմանները պետք է

ընդարձակեին համապատասխան ուղղություններով: Ուգեդեյի նվաճումների ճանապարհը լի էր լուրջ խոչընդոտներով: այսպես՝ Իրանում կրկին հանդես էր եկել Ջալալ ադ-Դինը՝ նպատակադրվելով վերականգնել թագավորությունը: Կուլգայի ափին հարկավոր էր նվաճել բուլղարներին, իսկ հյուսիս-արևմուտքում մոնղոլների համար դեռևս վտանգ էին ներկայացնում ռուսական իշխանությունները,

որոնք թեև մասնատված էին, սակայն մեծ ուժ էին ներկայացնում: Այս խնդիրների շարքում մոնղոլների համար առավել կարևորվում էր Հյուսիսային Չինաստանի վերջնական նվաճումը, ուստի Ուգեդեյն առաջին հարվածն ուղղեց Ցզին կայսրության դեմ: Երբ կայսրությունը խաղաղություն հաստատելու առաջարկ արեց, Ուգեդեյը մերժեց, ուստի զգինցիներն սկսեցին նախապատրաստվել պատերազմի և ամրացրին Խուանխե գետի պաշտպանական ամրությունները, որտեղ տեղակայեցին 100000 զինվոր: Ցզինյան 200000-ը հիմնական գորքը տեղակայված էր Լոյանից մինչև Պեյչժոու: 1230 թ. մոնղոլները հարձակվեցին Գանսու նահանգի արևելյան շրջանների վրա, սակայն հանդիպեցին համառ դիմադրության: Ուգեդեյը որոշեց կիրառել հոր ռազմավարությունը՝ Ցզինի վրա հարձակվել Մունի տարածքից: Մունի կառավարությունը թույլատրեց, որպեսզի մոնղոլական զորքն անցնի իր տարածքով: Թոլույին հաջողվեց գրավել երկու անցակետեր, որոնք Վեյի հովտից տանում էին արևելք, իսկ Ուգեդեյը հարավից հարձակվեց Շանսիի վրա: 1232 թ. Գուանչժոուի մոտ տեղի ունեցած ճակատամարտում մոնղոլները ջախջախեցին զգինյան 150000-ը բանակին: Ցզինցիներն ստիպված էին ժառանգ գորքը կենտրոնացնել Դայյան քաղաքի պաշտպանության համար: 1232 թ. ամռանը Սուբեդեյի զխավորությամբ մոնղոլներն սկսեցին պաշարումը: Այս ընթացքում Ուգեդեյը հիվանդանում է, իսկ Թոլուն՝ մահանում, ուստի հրամանատարությունն ամբողջությամբ անցնում է Սուբեդեյին: Վերջինս Մունից օգնական զորք է խնդրում և շուտով սունյան կայսրը 20000-ը զորք է ուղարկում՝ Մենխունի գլխավորությամբ: Պաշարվածների մոտ տարածվում են հիվանդություններ ու սով և բնակչությունն ստիպված է լինում հանձնվել: 1233 թ. քաղաքը գրավելուց հետո Ցզինյան վերջին կայսր Այցգուն փախչում է արևելք, սակայն շուտով գերվում է և տանջանքներից խուսափելու համար ինքնասպանություն գործում: 1235 թ. չժուրջ-ժենների դինաստիան ու «Ոսկե» կայսրությունը վերջնական պարտություն են կրում: Այսպիսով, մոնղոլներին հաջողվեց նվաճել Ցզին կայսրությունը և տերությունը սահմանակից դարձավ Մուն պետության հետ: Մունյան կայսր Լի Ցզուն (1224-1264) փորձում էր իր իրավունքները հաստատել զգինյան այն տարածքների նկատմամբ,

որոնք ցզինցիները գրավել էին նախկինում: Մոնղոլները, անշուշտ, նման նախաձեռնությանը դեմ էին, քանի որ ծրագրում էին նվաճել Մուն պետությունը: 1235 թ. հրավիրված դուրովթայում Ուզեդեյը ծրագիր է ներկայացնում Մունը, Կորեան, Իրանը, Բաղդատի խալիֆայությունը և ռուսական իշխանությունները նվաճելու վերաբերյալ, որը դատնում է Մոնղոլական տերության արտաքին քաղաքականության հիմնական առանցքը:

Կորեան ձևականորեն նվաճվել էր դեռևս 1218 թ., սակայն հակամոնղոլական տրամադրությունները ժամանակ առ ժամանակ ստիպում էին մոնղոլական զորքերին ասպատակել Կորեան: 1231 թ. մոնղոլները դարձյալ արշավեցին Կորեա, քանի որ այս անգամ կորեական կառավարությունը հրաժարվեց հարկերը վճարելուց: Երկիրը ենթարկվեց ավերածությունների ու կողոպուտի: Այս արշավանքից հետո Ուզեդեյն ուշադրությունը կենտրոնացրեց մեկ այլ խնդրի լուծմանը և Կորեայի վերջնական նվաճումը որոշ ժամանակով հետաձգվեց:

Խորեզմշահ Մուհամմեդի մահից հետո մոնղոլների դեմ պայքարը շարունակում էր նրա որդին՝ **Ջալալ ադ-Դինը**: Վերջինիս նպատակն էր կանխել մոնղոլների առաջխաղացումը և վերականգնել Խորեզմի պետությունը: Ջալալ ադ-Դինն սկզբում հեռանում է Հնդկաստան, սակայն այնտեղ երկար չի մնում և 1224 թ. անցնում է Իրանի հարավային շրջաններ: Արդեն 1225 թ. նա զգալի թվով հետևորդներ ուներ Քերմանում, Շիրազում, Խորասանում և Մազանդարայում և կարողանում է նվաճել Խուզիսթանի մի մասը:

1225 թ. հուլիսին Ջալալ ադ-Դինը գրավում է Թավրիզ քաղաքը, ապա՝ Ատրպատականը, որտեղից էլ օգոստոսին արշավում է Հայաստան ու գրավում Դվինը: Ջալալ ադ-Դինը ծրագրել էր ստեղծել նոր հզոր պետություն և կանգնեցնել դեպի Արևմուտք շարժվող մոնղոլներին: Վրաց **Ռուսուդան** թագուհին (1222-1245) հայ-վրացական միացյալ զորք է ուղարկում Ջալալ ադ-Դինի դեմ՝ **Իվանե Զաքարյանի** գլխավորությամբ: 1225 թ. օգոստոսի վերջերին կամ սեպտեմբերի սկզբներին Գառնիի մոտ տեղի է ունենում խոշոր ճակատամարտ, որտեղ հայ-վրացական միացյալ զորքերը մեծ կորուստներ են կրում և նահանջում: Այս հաղթանակից հետո Ջալալ ադ-

Դինն սկսեց ավերել ու կողոպուտել հայկական բնակավայրերը: Նրա բանակն անցնելով Արարատյան դաշտը և Փամբակի լեռնաշղթան՝ շարժվեց Տփղիսի (Թիֆլիս) ուղղությամբ: 1226 թ. մարտին խորեզմշահը գրավեց Տփղիսը, այնուհետև արշավեց դեպի Էրզրում: Այստեղ նա ուժեղ դիմադրության հանդիպեց Եգիպտոսի **Էյուբյանների** (Այյուբյանների, 1169-1252) կողմից: 1227-1228 թթ. հայ-վրացական կողմին հաջողվեց հետ վերցնել զգալի տարածքներ, այդ թվում ագատագրեցին Տփղիսն ու Դվինը: 1228 թ. մոնղոլական հինգ թումեն հասնում է Իրան և Սպահանի մոտ ճակատամարտում Ջալալ ադ-Դինի բանակի դեմ: Մոնղոլները կոտորում են թշնամու զորքի մի մասին, սակայն իրենք էլ մեծ կորուստներ են կրում, ուստի որոշում են առժամանակ հեռանալ Իրանից: Փրկված Ջալալ ադ-Դինը կրկին զորք է հավաքում՝ նպատակադրվելով վերստին նվաճել Հայաստանն ու Իրաքը: 1225թ. մահանում է խալիֆ **Ահմադ ան-Նասիրը (1180-1225)** և գահ է բարձրանում **Ալ-Մուսթանսիրը (1226-1242)**, որը ճանաչում է Ջալալ ադ-Դինի իրավունքներն Իրանի նկատմամբ, իսկ վերջինս հրաժարվում է Իրաքի նկատմամբ ունեցած հավակնություններից:

Այս ընթացքում Ռուսուդան թագուհին կարողացավ հավաքել նոր բանակ, որի կազմում էին, բացի վրացիներից ու հայերից, նաև Կովկասի ժողովուրդներն այդ թվում նաև դիչաղները: Վճռական ճակատամարտը տեղի է ունենում 1229 թ. գարնանը **Բոլնիսի** մոտ՝ **Մինդորի** վայրում: Այս ճակատամարտում ևս խորեզմշահը հաղթանակ տարավ, գրավեց մի շարք բերդեր և ձեռնարկեց Խլաթ քաղաքի երկրորդ պաշարումը: Քաղաքն ութ (որոշ տվյալներով տասն) ամսվա պաշարումից հետո գրավվեց: Այս դեպքից հետո խորեզմշահի հարաբերությունները սրվեցին Ռումի սելջուկյան սուլթան **Քեյ-Քուբադ I-ի (1219-1237)** հետ: Վերջինիս և նրա դաշնակից Այյուբյանների միացյալ զորաբանակի ու խորեզմշահի բանակի բախումը տեղի ունեցավ **1230 թ. օգոստոսի 11-ին Երզնկայի** մոտ և ավարտվեց Ջալալ ադ-Դինի ծանր պարտությամբ, որից նա այդպես էլ ուշքի չէկավ: Խորեզմշահը նախ մեկնեց Խլաթ, ապա՝ Խոյ, որտեղ էլ տեղեկացավ, որ մոնղոլները Չարմաղանի գլխավորությամբ շարժվում են իր դեմ: Նա անգամ դիմադրության փորձ չարեց և փախավ:

Ձմեռը հանգիստ անցկացնելուց հետո մոնղոլները 1231 թ. սկզբին նոր եռանդով սկսեցին հետապնդել խորեզմշահին: Արդյունքում վերջին խորեզմշահը ջախջախվեց և շուտով իր մահը գտավ **Ամիդի** (Դիարբեքիթ) մոտակայքում՝ սպանվելով տեղացի քրդերի ձեռքով: Ջալալ ադ-Դինի ասպատակությունները փոխեցին տարածաշրջանի ռազմաքաղաքական ուժերի դասավորվածությունը, որը կանխորոշեց մոնղոլական հետագա արշավանքները և Հայաստանի նվաճումը:

1231 թ. Չարմաղան նոյինը Ջալալ ադ-Դինին վերջնականապես պարտություն մատնելուց հետո գրավեց Ատրպատականը և ձմեռեց Մուղանում: Հաջորդ տարվա վաղ գարնանը նրանք շարժվում են Մուղանի դաշտից հյուսիս-արևմուտք և պաշարում **Գանձակը**, որը գրավում են ու հիմնահատակ ավերում: 1236 թ. Չարմաղանի գլխավորած բանակը ձեռնամուխ է լինում Հայաստանի ու Վրաստանի նվաճմանը: Մոնղոլները վատահ էին, որ ոչ մի վայրում կազմակերպված դիմադրության չեն հանդիպի, ինչպես նաև նկատի ունենալով տեղանքի կտրվածությունը, իրենց զորքը բաժանեցին առանձին զորաջոկատների և սկսեցին հայկական ու վրացական տարածքների գրավումը: Ռուսուղան թագուհին երկրի ուժերը միավորելու փոխարեն գերադասեց որդու՝ Դավիթի, հետ ապաստանել անվտանգ Արևմտյան Վրաստանում: Նա այս քայլով Ջաքարյան Հայաստանը հանձնեց թշնամու ողորմածությանը: Մոնղոլներն առաջինը գրավեցին **Շամխոր** քաղաքը, որը կողոպտեցին ու հրկիզեցին, իսկ բնակչությանը գլխովին կոտորեցին: Մոնղոլական զորաջոկատը Մուլար նոյինի գլխավորությամբ գրավում է նաև Տավուշը, Կաժարեթ, Նոր Բերդ բերդերը, ապա՝ նաև Վահրամյանների իշխանանիստ Գագ ամրոցը: Մոնղոլական մյուս զորաբանակը շարժվելով հարավ-արևմուտք գրավում է Տերունական, Երզնանք, Մաձնաբերդ և Վահրամյաններին պատկանող մյուս բերդերը*։ Գրավված վայրե-

* 1236 թ. հուլիսի 6-ին Մուլար նոյինի զորախումբը պաշարում է նաև Տավուշ բերդի հարավկողմում գտնվող Վանական վարդապետի քարայրը, որտեղ մեծ ուսուցչապետի և նրա աշակերտների հետ ապաստանել էին նաև շրջակա գյուղերի հոծ բնակչությունը: Վանական

րում վերակացուներ նշանակելով Մուլար նոյինը ձմեռելու համար վերադառնում է Մուղան:

Ավագ Ջաքարյանին ենթակա Էլիկում Օրբեյանին պատկանող Մյունիքի գրավումը պետք է իրականացներ Ասլան նոյինը: Վերջինս Էլիկումին առաջարկում է հանձնվել՝ խոստանալով բարյացակամ վերաբերմունք ցուցաբերել: Էլիկումն օգնության հույս չունենալով՝ հանձնվում է մոնղոլներին և պահպանում իր տիրույթները: Խաչենի և շրջակա բնակավայրերի գրավումն իրականացնում է Չարմաղանի եղբայր Ջուլան: Չաղաթայի գլխավորած զորաբանակը հարձակվեց Շահնշահ Ա Ջաքարյանի նստավայր **Լոռե** բերդաքաղաքի վրա: Մինչև 1236 թ. հոկտեմբերը մոնղոլները գրավում են Լոռի գավառի բոլոր ամրությունները: Այնուհետև նրանք Լոռե-Դմանիս-Շամշուղե-Տփղիս ճանապարհով շարժվելով՝ գրավում են Դմանիսը, Շամշուղեն և Տփղիսը: Ջաքարյան իշխանական տան առաջնորդ **Ավագ Ջաքարյանն** ամրացել էր իր նստավայր Կայան բերդում և միայնակ չկարողանալով դիմադրել՝ հնազանդություն է հայտնում մոնղոլներին, որոնք նրան վերադարձնում են գրաված տիրույթները, փոխարենը՝ դառնում է հարկատու և զորքով ծառայում նրանց: Ավագի ջանքերի շնորհիվ 1240 թ. Ուզեդեյի հրամանով իշխանական տիրույթների մի մասը ևս վերադարձվում են նախկին տերերին:

Ջաքարյան Հայաստանի արևելյան ու հյուսիսային լեռնային գավառների գրավումից հետո մոնղոլներն սկսեցին մնացած շրջանների նվաճումը: Ռազմական գործողություններն անմիջապես դեկավարում էր **Չարմաղանը**: Մոնղոլական զորքերը պաշարում են Անին և 12-օրյա հուսահատ դիմադրությունից հետո, ամենայն հավանականությամբ 1236 թ. սեպտեմբերին, քաղաքը հանձնվում է: Այստեղից մոնղոլները շարժվում են Կարս, որի բնակչությունը քաջատեղյակ լինելով Անիի դեպքերին, քաղաքի բանալիները հանձ-

վարդապետի միջնորդությամբ մոնղոլները բնակչությանը չեն կոտորում, սակայն գերում են Վանականին ու նրա աշակերտներին, այդ թվում Կիրակոս Գանձակեցուն: Գագ բերդի բնակիչները 80 դահեկանով փրկագնում են Վանականին, իսկ Կիրակոս Գանձակեցուն հաջողվում է փախչել մոնղոլական զերությունից:

նում է նվաճողներին: Սակայն մոնղոլները Կարսը ևս արժանացրին Անիի ճակատագրին՝ բնակչության մի մասին կոտորեցին, իսկ մնացածին գերեվարեցին: Փաստորեն 1236 թ. ձմեռնամուտին Ջաքարյան Հայաստանն ամբողջությամբ անցնում է մոնղոլների տիրապետության տակ: Միաժամանակ մոնղոլները նվաճում են նաև Արևելյան Վրաստանը:

Մոնղոլները ձեռնամուխ եղան Հայաստանի ու Վրաստանի մնացած շրջանների նվաճմանը, քանի որ նրանց նպատակը Միջերկրական ծովի արևելյան շրջաններ հասնելն էր: 1242 թ. սկզբներին Մեծ խանի հրամանով համրացած Չարմաղանին փոխարինում է **Բաչու նոյինը**, որը փորձառու ու հմուտ զորավար էր: Նա ձեռնամուխ է լինում Ռուսի սելջուկյան սուլթանության կազմի մեջ մտնող Հայաստանի արևմտյան շրջանների և Հարավային Հայաստանի նվաճմանը: 1242 թ. գարնանը մոնղոլները պաշարում են ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող **Կարին** (Էրզրում, Թեոդուպոլիս) քաղաքը: Քաղաքի բնակչությունը երկամսյա համառ դիմադրություն է ցույց տալիս, սակայն մոնղոլները գրավում են այն և ենթարկում ահավոր ավերածության: Մոնղոլների հետագա առաջխաղացման դեմ կանգնած էր Ռուսի սելջուկյան սուլթանությունը, ուստի նրանց միջև բախումն անխուսափելի էր: 1243 թ. գարնանը **Բաչուն** իր զորքով, որի կազմում էին նաև հայ-վրացական զորքերը, արշավանք է սկսում դեպի Ռուսի սելջուկյան սուլթանություն: Վճռական ճակատամարտը տեղի է ունենում **1243 թ. հուլիսի 3-ին Չանկեստուկ** (Քյուե-դաղ) գյուղաքաղաքի մոտ, որն ընկած էր Կարինի և Երզնկայի միջև: Սելջուկյան զորքը գլխավորում էր սուլթան **Ղիաս աղ-Դին Քեյ Խոսրև II-ը (1237-1246)**: Ճակատամարտը տևեց մինչև ուշ երեկո և կողմերից ոչ մեկն առավելության չհասավ, սակայն Ղիաս աղ-Դինը հասկանալով, որ որոշ ամիսներ փորձում են մոնղոլների հետ համաձայնության գալ, դիմում է փախուստի: Հաղթանակը բաժին է ընկնում մոնղոլներին և հետագա նվաճումների համար ճանապարհն ազատ էր:

Շուտով մոնղոլները պաշարում են **Երզնկան**, որի բնակչությունը թեև դիմադրություն է ցույց տալիս, սակայն քաղաքը գրավվում է, ավերվում ու կողոպտվում: Երզնկայում վերակացուներ նշա-

նակելով՝ մոնղոլները շարժվում են **Մեքաստիա**, որի բնակչությունը հանձնվում է և փրկվում կոտորածներից: Հերթը Կեսարիա քաղաքին էր, որի բնակչությունը ևս դիմում է ինքնապաշտպանության: Սակայն մոնղոլներին հաջողվում է խորամանկությամբ գրավել քաղաքը և շրջակա բնակավայրերը, որոնք ևս ավերվում են, իսկ բնակչությունը՝ գերեվարվում: Այնուհետև մոնղոլները գրավում են Տիվրիկը, Իկոնիան, Ատտալիան և այլ քաղաքները: Արդեն 1243 թ. աշնանը մոնղոլները գրավել էին Ռուսի սելջուկյան սուլթանության կազմում գտնվող հայկական գավառները:

1244 թ. գարնանը մոնղոլները ձեռնամուխ են լինում Հայաստանի նվաճմանը: Նրանք գրավում են Խլաթն ու Բաղեշը: Այնուհետև շարժվելով հարավ՝ ասպատակում են Ամիդը, Ուռհան և Մծբինը: Այսպիսով, մինչև 1244 թ. վերջերը մոնղոլները նվաճեցին համարյա ամբողջ Հայաստանը:

Մոնղոլները նպատակադրվել էին վերջնականապես նվաճել նաև **Վրաստանը**: Ռուսուդան թագուհին հեռացել էր երկրի խորքերը և փորձում էր դիմադրություն կազմակերպել: Մոնղոլներն Ավագ Ջաքարյանի միջոցով թագուհուն կոչ արեցին հնազանդվել: Վերջինս, հաշվի առնելով ձևավորված իրավիճակը, ստիպված էր գնալ զիջումների: Մոնղոլները խոստացան ճանաչել նրա իրավունքները, եթե թագուհին հնազանդվի: Ի վերջո Ռուսուդանը Ոսկե Հորդայի տիրակալ Բաթուի հետ բանակցելուց հետո հպատակվեց մոնղոլներին: Ռուսուդանի որդի Դավիթը 1244 թ. կեսերին մեկնեց Բաթուի մոտ՝ մոր հետ գահակից ճանաչվելու համար: Այդ ժամանակ Վրաստանում գահի համար պայքարում էին **Ռուսուդանի որդի Դավիթը** և **Գեորգի Լաշայի որդի Դավիթը**: Վրացական ռազմաքաղաքական վերնախավը պառակտվել էր երկու մասի: 1246 թ. օգոստոսին Մեծ խան ընտրված Գույուքը երկու Դավիթների գահակալական վեճը լուծում է ըստ մոնղոլական սովորության իրավունքի: Նա երկուսին էլ ճանաչեց թագավոր՝ Գեորգի Լաշայի որդի Դավթի ավագությամբ, որից հետո նա կոչվեց **Ուլու** (Ավագ, Մեծ) **Դավիթ (1247-1270)**, իսկ Ռուսուդանի որդին՝ **Նարին** (Կրոսեր) **Դավիթ (1247-1293)**:

Ուզեղեյի կառավարման շրջանում սկսվում է նաև **Հին Ռուսիայի** նվաճումը: Նշված ուղղությամբ արշավանքները պետք է իրա-

կանացնէին Ջուչին ու նրա ժառանգները, քանի որ նրանց ժառանգության մաս պետք է կազմէին Վոլգայից արևմուտք նվաճված հողերը: Ջուչիի մահից հետո արշավանքը գլխավորում է նրա որդին՝ Բաթուն: Արշավանքին մասնակցում էր նաև տարածաշրջանին քաջ ծանոթ Սուբեդէյը:

1236 թ. սկսվում է արշավանքը բուլղարների ու ռուսական իշխանությունների հարևանությամբ բնակվող մյուս ժողովուրդների դեմ: Վաղ գարնանը մոնղոլներն Իրտիշից և Արևմտյան Ալթայից շարժվում են դեպի Ուրալ-կասպյան դարպասներ, որտեղից էլ հասնում են Վոլգա: 1237 թ. մոնղոլական հիմնական բանակը՝ Սուբեդէյի գլխավորությամբ, ռազմական գործողություններ սկսեց **բուլղարների** դեմ, իսկ մյուս զորաբանակը՝ Մունկեի գլխավորությամբ, հարձակվեց **պոլովեցների** (կումաններ) վրա:

1237 թ. ձմռանը նվաճումների արդյունքում մոնղոլների իշխանությունը տարածվում էր Կասպից և Ազովի ծովերից մինչև ռուսական հողերի հարավային սահմանները: 1237-1238 թթ. ձմռանը մոնղոլները գրավում են **Ոչյազանը, Կոլուման, Մոսկվան, Վլադիմիրը, Սուգդայը, Ռոստովը, Յարոսլավը, Տվերը** և այլ քաղաքներ: Գարնանը նրանք շարժվում են **Նովգորոդ**, սակայն տեղ չհասած փոխում են արշավանքի ուղղությունը դեպի հարավ: Մոնղոլական թումենները միավորվում են և որոշում են դադար առնել Դոն գետի ավազանում: Այս ժամանակ մոնղոլական արքունիքում նկատվում են քաղաքական խմորումներ, մասնավորապես Բաթուի դեմ հանդես է գալիս Գույուքը: Վերջինիս Ուզեդէյը շուտով կանչում է Մոնղոլիա, սակայն Մեծ խան ընտրվելուց հետո էլ Գույուքը շարունակում է թշնամությունը Բաթուի հետ: 1238 թ. պոլովեցների խան Կուրգանը հունգարական թագավորից թույլտվություն է ստանում իր ցեղակիցների հետ հաստատվել Հունգարիայում: Բաթուն այս շրջանում չէր կարող զբաղվել պոլովեցների խնդրով, քանի որ պատերազմում էր Ռուսիայի հարավում և Ղրիմում, ուստի բավարարվում է նախագգուշացնելով հունգարական թագավորին չեղյալ հայտարարել ընդունված որոշումը: 1240 թ. մոնղոլները Մունկեի գլխավորությամբ հասնում են Կին: Շուտով նրանց է միանում Բաթուն և միացյալ ուժերով դեկտեմբերին գրավում են քաղաքը: Այնուհետև մոնղոլներն

առաջանում են մինչև Կարպատներ և ավարտում ռուսական հողերի նվաճումը:

Մոնղոլներն արշավում են նաև **Լեհաստան ու Հունգարիա**: 1241 թ. Բաթուն ու Սուբեդէյը շարժվում են Հունգարիա և կարճ ժամանակում իրենց վերահսկողության տակ վերցնում կարևորագույն ճանապարհներն ու քաղաքները: Մոնղոլական մյուս բանակը **Կայդուի** գլխավորությամբ հաղթանակ է տանում լեհերի դեմ: Այնուհետև մոնղոլական զորաբանակներից մեկն ասպատակում ու ավեր է սփռում Լիտվայում ու Արևելյան Պրուսիայում: Մոնղոլական առաջխաղացումը կանգնեցնելու նպատակով Սիլեզիայի, Լեհաստանի և Մորավիայի միացյալ զորքը **Վալշտադուի** մոտ ճակատամարտ են տալիս, սակայն պարտություն են կրում: Չհանդիպելով կազմակերպված լուրջ դիմադրության՝ մոնղոլները կարճ ժամանակահատվածում գրավում են ողջ Հունգարիան: Փաստորեն մինչև 1241 թ. Բաթուն գրավում է **Լեհաստանը, Չեխիան, Հունգարիան, Խորվաթիան, Դալմաթիան, Բոսնիան, Սերբիան և Բուլղարիան**: Մոնղոլական հետագա արշավանքներն Ավստրիա ու Բոհեմիա ընդհատվում են, քանի որ Բաթուն ստանում է Ուզեդէյի մահվան լուրը: Նա մահացավ **1241 թ. դեկտեմբերի 11-ին** և ավանդույթի համաձայն Բաթուն ևս պետք է մասնակցեր Մեծ խանի ընտրությանը, ուստի վերադառնում է Մոնղոլիա: Ընդունված է համարել, որ Ուզեդէյի մահն Արևմտյան Եվրոպան փրկում է մոնղոլական ավերիչ արշավանքներից:

Ուզեդէյի կառավարման շրջանում դեռևս պահպանվում էին ներքին ու արտաքին քաղաքականության Չինգիզ խանի մշակված սկզբունքները: Սակայն մոնղոլական հասարակության կազմակերպման հիմնական սկզբունքների շրջանակներում նկատելի էին արդեն որոշ փոփոխություններ ու զարգացումներ: Այսպես՝ Ուզեդէյի օրոք արդեն նկատվում է, որ Մեծ խանը ռազմական առաջնորդի կարգավիճակը լրացնում է քաղաքացիական իշխանությամբ: Մյուս կողմից, սովորաբար նվաճված երկրներում մոնղոլները հաստատում են իրենց կարգերը, սակայն ի տարբերություն Չինգիզ խանի (որը դա անում էր առանց զիջումների)՝ Ուզեդէյը դրանք զուգակցում էր տեղական օրենքների ու սովորույթների հետ: Նրա օրոք

Մոնղոլական կայսրության մեջ միավորված էին Եվրասիական տափաստանի բոլոր քոչվորները, որը ևս իր ազդեցությունը թողեց պետական կառավարման վրա: Մոնղոլներն սկսեցին հաշվի առնել նվաճված տարածքների զարգացման աստիճանները և ըստ այդմ էլ ռազմաքաղաքական կարգավիճակը կենտրոնի հետ փոխհարաբերություններում: Քոչվորական միջավայրում քաղաքացիական ու ռազմական իշխանությունը գրեթե չէր առանձնացվում և առաջնայինը երկրորդն էր, մինչդեռ երկրագործական շրջաններում առաջնային էր քաղաքացիականը, որը կազմակերպում էին **դարուգաչիները**, որոնք հավաքում էին հարկերը և հետևում կարգուկանոնին: Քաղաքացիական իշխանության կազմակերպման բնագավառում կարևոր էր **կայսերական փոստային ծառայության դերը**: Այն ուներ իր կայանները, որտեղ միշտ գտնվում էր սպասարկու անձնակազմը և ձիեր՝ տեղաշարժն արագ կազմակերպելու համար: Մա կարևոր էր, քանի որ հնարավորություն էր տալիս տերության ծայրամասերից տեղեկատվությունը հնարավորինս արագ հասցնել կենտրոն և հակառակը:



Գույուք (1246-1248): Ուզեդեյն իրեն հաջորդ էր նշանակել թոռանը՝ Շիրամունին, սակայն նրա կինը՝ Թորեգենեն, ամուսնու մահից հետո՝ մինչև 1246 թ., տերության ղեկավարումը վերցրեց իր ձեռքը: Նրա ջանքերի շնորհիվ 1246 թ. դուրուլթայում Մեծ խան է ընտրվում նրանց որդին՝ Գույուքը: Ընտրությանը դեմ էին մոնղոլական ռազմաքաղաքական շրջանակների շատ ներկայացուցիչներ, որոնց թվում նաև Բաթուն, որը գերա-

դասում է հեռանալ իր նվաճած տարածքները, որոնք ստացան «Ոսկե Հորդա» անվանումը: Իսկ մայրաքաղաքը Սարայն էր: Բաթուն ձևականորեն ենթարկվում էր կենտրոնին, սակայն երբեք հավատարմության երդում չտվեց Գույուքին:

Գույուքի կառավարման օրոք ևս շարունակվում էր կայսրության սահմանների ընդարձակման քաղաքականությունը: Մոնղոլները շարունակում են պատերազմել Մուն պետության դեմ՝

նպատակ ունենալով նվաճել Հարավային Չինաստանը: Այնուհետև մոնղոլները նվաճում են Կովկասի հարավ-արևելքը և Կորեայի մի մասը: Մոնղոլներին հաջողվում է լուրջ հաղթանակ տանել Ռումի սելջուկյան սուլթանության դեմ, որը դառնում է նրանց հարկատու: Արդյունքում Մոնղոլական կայսրության սահմանները հարավ-արևմուտքում հասնում են մինչև Միջերկրական ծովի ափերը:

Գույուքի օրոք աշխուժանում են դիվանագիտական շփումները եվրոպացիների, մասնավորապես պապականության ու մոնղոլական արքունիքի միջև: Խաչակրաց Արևելքում շարունակվում էր քրիստոնյա-մահմեդական առճակատումը և Արևմտյան Եվրոպան փորձում էր մոնղոլներին ներգրավել խաչակրաց նոր արշավանքի մեջ: Այդ ժամանակ մեծ տարածում ուներ մոնղոլների քրիստոնյա (նեստորական) լինելու առասպելը, ուստի գտնում էին, որ հարկավոր է ջանքեր գործադրել նրանց հետ դաշնակցելու ծրագրեր մշակելու համար: Մոնղոլների հետ ռազմաքաղաքական միությունը դիտվում էր նախապայման Մերձավոր Արևելքում քրիստոնեության հաղթարշավի համար:

Իննոկենտիոս IV (1243-1254) պապը մոնղոլների մոտ չորս պատվիրակություն է ուղարկում, որոնցից երկուսը գլխավորում էին ֆրանցիսկյան միաբանության անդամները, իսկ երկուսը՝ դոմինիկյանները: Առաջին պատվիրակությունը, որն ուղևորվեց Մոնղոլիա, գլխավորում էր **Պլանո Կարպինին** (1245-1247): Նա Գույուքին է հանձնում պապի նամակը և պատասխան նամակով վերադառնում Եվրոպա: Սակայն կողմերի ծրագրերը խիստ տարաբնույթ էին, ուստի դաշինքի կնքումը ձախողվում է: Եթե Իննոկենտիոս պապն առաջարկում էր միավորել ուժերն ընդդեմ մահմեդականների, ապա մոնղոլները պահանջում են անվերապահորեն ենթարկվել իրենց, քանի որ մտադիր էին նվաճել ողջ Եվրոպան:

Պլանո Կարպինիի դիվանագիտական առաքելությանը զուգահեռ, Իննոկենտիոս IV պապը 1245 թ. մոնղոլներին ենթակա Այսրկովկաս և Իրան ուղարկեց մի այլ պատվիրակություն **Ասցելին (Էցցելին) Լուրբարդացու** գլխավորությամբ, որի վերջնական նպատակը Բաջուին հանդիպելն էր: Անցնելով Կիլիկիայի, Բկոնիայի, Մեքաստիայի, Կարսի և Թիֆլիսի վրայով՝ պատվիրակությունը հասնում է

Բաշուի նստավայր: Այստեղ մնում են երկու ամիս: Ասցելինի բանակցությունները մոնղոլների հետ ունեցան մասնակի հաջողություն: Առաջին անգամ մոնղոլները ռազմական դաշինք կնքելու նպատակով Արևմուտք են ուղարկում հատուկ պատվիրակություն՝ Այբեգի և նեստորական Սարգիսի գլխավորությամբ: Սակայն բանակցությունների արդյունքների մասին տեղեկություններ չեն պահպանվել:

Անդրե դե Լոնժյումեն ուներ այլ հանձնարարություն. Ասորիքի ու Միջագետքի վրայով հասնում է Թավրիզ և հանդիպում հայտնի նեստորական եկեղեցական քաղաքական գործիչ Միսեոն Ռաբբան Աթայի հետ: Լոնժյումեն պապից նամակ էր բերել Ռաբբանին, որով պապը խնդրում էր աջակցել քրիստոնյաների միավորմանը: Ռաբբան եղել էր Չինգիզ խանի մերձավորներից և մեծ հեղինակություն էր վայելում մոնղոլների ու նեստորականների շրջանում: Սակայն նա դրական պատասխան չի տալիս՝ պատճառաբանելով, որ Երուսաղեմի խաչակրաց թագավորության անկումն ավելի տրոհեց քրիստոնյաներին և առանց քաղաքի գրավման անհնարին է քրիստոնյաների միավորումը:

Ֆրանսիայի Լյուդովիկոս IX արքան (1226-1270), նախապատրաստվելով խաչակրաց նոր արշավանքի, փորձում էր համագործակցել մոնղոլների հետ: Վերջիններս ծրագրել էին գրավել Բաղդադը, Ասորիքը և Եգիպտոսը: Եթե խաչակիրները հարձակվեին Եգիպտոսի վրա Այյուբյանները չէին կարողանա օգնության հասնել Բաղդադին: Այս ծրագրի իրականացման համար մոնղոլները 1248 թ. երկու նեստորականների (Դավիթ և Մարկ) գլխավորությամբ պատվիրակություն են ուղարկում, որը Լյուդովիկոս IX-ին պետք է սպասեր Կիպրոս կղզում՝ Նիկոսիայում: Սակայն այս ծրագրին վիճակված չէր իրականանալ՝ կապված Գույուք խանի մահվան հետ: Մյուս կողմից, Եգիպտոսի դեմ ուղղված յոթերորդ խաչակրաց արշավանքը (1248-1254) ևս անհաջողությամբ է ավարտվում, իսկ Լյուդովիկոս IX-ը գերի է ընկնում:

1248 թ. Գույուքն արշավանք է սկսում Ոսկե Հորդայի դեմ, սակայն Թուլույի կինը՝ Սուրկուկտենը, այդ մասին տեղեկացրել էր Բաթուին և վերջինս հսկայական զորքով շարժվում է արևելք: Մոն-

ղոլական բանակները դեռևս չէին հանդիպել, երբ ծանր հիվանդ Գույուքը վախճանվում է:



Մունկե (1251-1259): Գույուքի մահից հետո կրկին սրվում է ժառանգորդի ընտրության հարցը, քանզի այն իրավանդումերով կանոնակարգված չէր: Տերության խնամակալն է դառնում Օղուլ-Գայմիշը, իսկ Թուլույի կին Սուրկուկտենն իր որդիներով ու համախոհներով հեռանում է Բաթուի մոտ՝ պաշտպանելով նրա թեկնածությունը: Այստեղ հրավիրվում է ղուրուլթայ, որտեղ առաջարկում են Մեծ խան

ընտրել Բաթուին: Վերջինս հրաժարվում է վերադառնալ Մոնղոլիա և Մեծ խան է կարգում Թուլույի որդուն՝ Մունկեին (Մանգու): Որոշումը հաստատվում է 1251 թ. հրավիրված ղուրուլթայում:

Մունկեն ուժեղ և խստապահանջ տիրակալ էր: Նա ուշադրություն դարձրեց մոնղոլական ավանդույթների ու սովորույթների պահպանմանը, կարգավորեց հարկային համակարգը՝ ավելի հստակեցնելով ու կանոնակարգելով այն: Մունկեն իր ժամանակի համար բավականին բարձր կրթություն էր ստացել և որոշակի պատկերացումներ ուներ ոչ մոնղոլական մշակույթների վերաբերյալ: Ինչպես հիշատակում են մոնղոլական արքունիքում գտնվող օտարերկրյա պատվիրակները, նա իրեն շրջապատել էր կրթված ու խելացի մարդկանցով և հաղորդակցությունը հեշտացնելու համար պահանջել էր որպեսզի պարսկական, ույղուրական, չինական, թանգուտական և տիբեթական պաշտոնյաներն իրենց լեզուներով բառարաններ ստեղծեն: Մունկեի պալատում հավաքվել էին տարբեր երկրների դեսպաններ ու մոնղոլներին հայտնի մշակույթների ներկայացուցիչներ և խանը հաճախ նրանց հետ քննարկում էր տարբեր հարցեր: Որպես մոնղոլական ռազմաքաղաքական վերնախավի ներկայացուցիչ Մունկեն շարունակում է արտաքին նվաճողական քաղաքականությունը: Նրա նպատակն էր Չինաստանում գրավել Մուն կայսրությունը, իսկ արևմուտքում՝ վերջնականապես հաստատվել Իրանում, Բաղդադի խալիֆայությունում և նվաճել Ասորիքն ու Եգիպտոսը:

1251 թ. մոնղոլները նոր ծրագիր են մշակում Մուն կայսրությանը գրավելու համար, որի իրականացումը հանձնվում է Խուբիլային: Վերջինիս խանը նշանակել էր չինական տարածքների կառավարիչ և հանձնարարել դրանց վերջնական նվաճումը: Խուբիլայը համարվում էր խանի եղբայրներից ամենախելացին: Նա կրթվել ու դաստիարակվել էր չինացի կոնֆուցիական փիլիսոփաների մոտ և մեծ սեր ու հարգանք ուներ չինական մշակույթի նկատմամբ: Նա չինացի հայտնի մտածող **Չժաո Բիին** հանձնարարեց մոնղոլ երիտասարդությանը կրթել կոնֆուցիականության համակարգով և, չինարենից թարգմանություններ կատարելու համար, նրան ստիպեց սովորել մոնղոլերեն: Խուբիլայի նպատակն էր չինական մշակույթը ներառել մոնղոլական հասարակության կազմակերպման շրջանակներում՝ պահպանելով մոնղոլների ռազմաքաղաքական գերակայությունը:

1252 թ. Խուբիլայը սկսեց արշավանքը դեպի Չինաստան: Մոնղոլական զորքը Յանցզի գետի վերին հոսանքով շարժվեց արևմուտք և ճակատամարտում պարտության մատնեց **Դալիի** թագավորին, որը ստիպված ընդունեց իր վասալական կախվածությունը: Այնուհետև Խուբիլայը շարժվում է դեպի հյուսիս, իսկ մոնղոլական մեկ այլ զորաբանակ գրավում է Յանցզի գետի վերին հոսանքում ընկած շրջանները, որտեղ ապրում էին ման, տայ և շան ժողովուրդները: Մոնղոլներին հաջողվում է գրավել նախկին չինական **Ցզյաո-ցին** նահանգը, որն այդ ժամանակ անկախ էր, ինչպես և **Աննամ** պետությունը: Փաստորեն մինչև 1258 թ. Չինաստանի ողջ հարավ-արևմուտքն անցնում է մոնղոլների գերիխառության տակ, իսկ Մուն թագավորությունը պահպանվեց հարավ-արևելյան որոշ շրջաններում:

Այս ժամանակ Մունկեն ընդունում է մայրաքաղաքը տեղափոխելու որոշում, որը նրա օրոք այդպես էլ չի իրականացվում: Որոշումը պայմանավորված չէր խանի անձնական ցանկություններով: Բանն այն է, որ նվաճումների արդյունքում ձևավորված հսկայածավալ տերությունը ներառում էր տարաբնույթ ժողովուրդներ ու մշակույթներ, որոնց մի մասը զարգացման մակարդակով ավելի բարձր էին, քան մոնղոլականը: Մունկեն և նրա կողմնակիցները հասկանում էին, որ այն այլևս չի կարելի կառավարել քոչվորական ռազմա-

վարչական համակարգով, որի առանցքն առաջնորդ-տարածք սկզբունքն էր: Կարակորումը կառուցվել էր հիմնականում հաշվի առնելով այս սկզբունքը: Ուստի այն չդարձավ կայուն հատկանիշների վրա հանգրվանող կենտրոնական կառավարումն իրականացնող միջավայրը: Կայսրության կառավարման նոր համակարգի մշակման և ընդունման համար անհրաժեշտ էր ունենալ նոր կենտրոն: Նոր մայրաքաղաքի համար նպաստավոր վայրի ընտրությունը նա հանձնարարում է Խուբիլային, ով առաջարկում է մայրաքաղաքը տեղափոխել Չինաստան: Արքունիքում սկսում են Խուբիլային զրպարտել՝ չինական կողմնորոշում ունենալու մեղադրանքով: Մակայն նա վերադառնում է Կարակորում և խանն արդարացնում է նրան: Խուբիլայի որոշումը պարզորոշ ցույց է տալիս, որ ընտրությունը կատարվել է ոչ միայն աշխարհագրական՝ Չինաստանի և Մոնղոլիայի հարևանությունը, այլև մշակութային (պետականության չինական տիպը, հասարակության սոցիալական բաժանումը, կրթական համակարգը) գործոնները հաշվի առնելով:

Մունկեի օրոք մեծ ձեռքբերում էր նաև **Արևմտյան Ասիայի** նվաճումը: Նա իր եղբայրներից **Հուլավուին (Հուլադու)** հանձնարարում է ավարտել Փոքր Ասիայի, ինչպես նաև Ասորիքի և Եգիպտոսի նվաճումը:

1253 թ. Հուլավուն մեծ զորաբանակով դուրս է գալիս Մոնղոլիայից և շարժվում Բաղդատ: Նրա նպատակը ոչ միայն Աբբասյան խալիֆայության, այլև **ասսասիներ**ի (մահմեդական ռազմակրոնական միաբանություն) վերացումն էր, որոնց ոչ մեկին չէր հաջողվել հնազանդեցնել: Հյուսիսային Իրանում նրանք ստեղծել էին իրենց պետությունը և մայրաքաղաք **Ալամուտից** ղեկավարում էին 360 լեռնային բերդեր: 1256 թ. Հուլավուն կարողանում է գրավել ասսասիների հիմնական կենտրոնները, դաժանությամբ սպանում է բոլորին, անգամ երեխաներին, և ասսասիների մահմեդական միաբանությունն, ըստ էության, դադարում է գոյություն ունենալուց:

1257 թ. որոշում է կայացվում գրավել սունյան մայրաքաղաք **Լինանը** (ներկայիս Խանչժոու): Մոնղոլական զորքը գլխավորում էր անձամբ Մեծ խանը: Մոնղոլները որոշել էին մայրաքաղաքի վրա հարձակվել հարավից և հյուսիս-արևմուտքից: Մակայն նրանց հա-

մար անսպասելի սոււյան զորքը համառ դիմադրություն է ցույց տալիս: Մեծ դժվարությամբ մոնղոլներին հաջողվում է գրավել Չժունդուն: Սակայն Լինանի պաշարման ժամանակ Մունկեն հիվանդանում է և **1259 թ. օգոստոսի 11-ին** վախճանվում:

1257 թ. Հուլիսին արդեն պատրաստ էր Բաղդատ արշավելու համար: Նա առաջարկում է **Ալ-Մուսթասիմ (1242-1258)** խալիֆին հնազանդվել, սակայն վերջինս մերժում է: Խալիֆի բանակը Ֆաթիադ-Դին Իբն Քերրայի հրամանատարությամբ բանակել էր Տիգրիսի արևելյան ափին: Մոնղոլներին հաջողվում է ջախջախել նրանց և 1258 թ. սկզբին պաշարել Բաղդատը: **1258 թ. փետրվարի 10-ին** մոնղոլական զորքը ներխուժում է քաղաք, որն ավերվում է ու հրկիզվում: Հուլիսին հինգ օր շարունակ զորքին թողնում է թալանել ու կողոպտել քաղաքը: Խալիֆ Ալ-Մուսթասիմը գերի է ընկնում: Հուլիսին ստիպում է ցույց տալ թաքցրած գանձերի տեղը, որից հետո փետրվարի 20-ին մահապատժի է ենթարկում ընտանիքի հետ միասին: Աբբասյան խալիֆայությունը դադարում է գոյություն ունենալուց: Բաղդատի գրավումից հետո մյուս քաղաքները գրեթե առանց դիմադրության հանձնվում են մոնղոլներին: Հասնելով Ասորիք՝ մոնղոլները գրավում են Հալեպը, Դամասկոսը և գրեթե ողջ Ասորիքն անցնում է մոնղոլների իշխանության տակ: Հուլիսին նախապատրաստվում է արշավել Եգիպտոս, սակայն ստանում է Մունկեի մահվան լուրը և, դադարեցնելով առաջխաղացումը, ուղևորվում է Արևելք:

Մունկեի օրոք ևս շարունակվեցին դիվանագիտական հարաբերություններն Արևմտյան Եվրոպայի հետ: Բանակցությունների այս փուլում կարևոր դերակատարում ունեն **Վիլհելմ (Գիյոմ) Ռուբրուկը**, որն իր առաքելությունն ստանձնեց 1253 թ. Լյուդովիկոս IX-ի հանձնարարականով: Ռուբրուկը նախ ուղևորվում է Բաթուի մոտ, ապա՝ Կարակորում: 1254 թ. Ռուբրուկը հետ է վերադառնում և Լյուդովիկոս IX-ին հանձնում Մունկեի նամակը: Սակայն մոնղոլ-քրիստոնեական ռազմաքաղաքական դաշնակցությունն այս անգամ ևս չձևավորվեց, քանզի կողմերի նպատակները և հետաքրքրությունները խիստ տարբեր էին: Ռազմական հաջողություններով ոգևորված մոնղոլները ո՛չ պապականությանը և ո՛չ էլ Ֆրանսիայի չէին դիտում

որպես իրավահավասար կողմ և բանակցությունների ժամանակ միշտ պահանջում էին ընդունել Մեծ խանի գահերեցությունը: Արդյունքում ռազմաքաղաքական որոշակի որևէ ծրագիր այդպես էլ կյանքի չկոչվեց:

Թեմա 5. Մոնղոլները և Կիլիկյան Հայաստանը

1226 թ. Կիլիկյան Հայաստանում հաստատվում է **Հեթումյանների** արքայատունը, որի կառավարումը կարևոր նշանակություն ունեցավ երկրի ներքին ու արտաքին քաղաքական կյանքում: **Հեթում Ա-ի (1226-1269)** օրոք Մերձավոր Արևելքում տեղի էին ունենում ռազմաքաղաքական խոշոր իրադարձություններ: Պաղեստինում, Ասորիքում և Փոքր Ասիայում միշտ խաչաձևվում էին ռազմաքաղաքական տարաբնույթ հետաքրքրություններ, որոնք այս ժամանակ աղերսվում էին նաև Կիլիկյան Հայաստանի հետ: Խնդրո առարկա շրջանում Կիլիկյան թագավորության փոխհարաբերությունները թշնամաբար էին Այյուբյան, ապա նաև Մամլուքյան Եգիպտոսի և Ռումի սելջուկյան սուլթանության հետ: Սրանք համարվում էին նաև մոնղոլների ռազմաքաղաքական հակառակորդները, քանի որ նրանց նվաճողական ծրագրերի մաս էին կազմում: Մկզբնական շրջանում մոնղոլները լուրջ սպառնալիք էին նաև հայկական թագավորության համար: Մոնղոլական արշավանքներն Առաջավոր Ասիա փոխեցին Մերձավոր Արևելքի ոչ միայն ռազմաքաղաքական, այլև քրիստոնեության ու մահմեդականության միջև ձևավորված իրավիճակը: Հեթանոս մոնղոլների մուսոքն Առաջավոր Ասիա և նրանց որդեգրած հակախլամական քաղաքականությունը նպաստավոր պայմաններ ստեղծեցին, որպեսզի Մերձավոր Արևելքում քրիստոնեությունը կարողանա վերագտնել իր կորցրած դիրքերը: Մոնղոլները նախևառաջ զենքն ուղղեցին Ռումի սելջուկյան սուլթանության դեմ և 1242 թ. նախապատրաստվեցին արշավանքի: Ռումի սելջուկյան սուլթան Ղիաս ադ-դին Քեյ Խոսրև II-ը ևս պատրաստվում էր պատերազմի՝ փորձելով ստեղծել հակամոնղոլական լայն դաշինք և դիմում է նաև Կիլիկյան Հայաստանի օգնությանը: Սուլթանը կարողանում է հավաքել ժամանակի համար բավականին մեծ բանակ: Կեսարիա մեկնած Կոստանդին թագավորահայրը սուլթանին օգնության իրական խոստումներ չի տալիս, թեև ըստ 1220 թ. կնքած պայմանագրի պետք է մասնակցեր սելջուկների կազմակերպած արշավանքին: Հայոց արքունիքն ուշադիր հետևում էր ծավալվող իրադարձություններին, քանի որ ընտրված ճանապարհից էր

կախված Կիլիկյան հայկական թագավորության հետագա գոյությունը կամ գոնե քաղաքական կողմնորոշումը: Բացի այդ, Ռումի պարտությունը ձեռնառու էր հայերին, քանի որ տարածաշրջանում վերջ կդներ սելջուկների քաղաքական հզորությանը և կթուլացներ Կիլիկիայի կախվածությունն Իկոնիայից: Մյուս կողմից, եթե հայերը չօգնեին Ռումի սուլթանությանը, ապա մոնղոլների հաջորդ հարվածը կուղղվեր դեպի Կիլիկիա, իսկ հակառակ պարագայում երկիրը զերծ կմնար նրանց ավերիչ արշավանքներից և կշահեր նրանց բարեկամությունը: Մոնղոլները դեռևս չէին ընդունել իսլամ և հանդուրժողականություն էին ցուցաբերում դեպի քրիստոնեությունը: Մոնղոլների հետ չդաշնակցելը դեռևս երաշխիք չէր, որ Այյուբյանները և Ռումի սուլթանությունը կփոխեին իրենց վերաբերմունքը Կիլիկիայի նկատմամբ, քանի որ դիտում էին որպես քրիստոնեության հենարան Մերձավոր Արևելքում: Ստեղծված իրավիճակում խնդրի լուծման եղանակ չէր կարող լինել նաև չեզոքության պահպանումը, քանի որ կողմերի միջև առճակատումն անխուսափելի էր, իսկ հաղթանակող կողմը որոշակի պահանջներ և պայմաններ հաստատապես կունենար:

1243 թ. Չմանկատուկի ճակատամարտում սելջուկները ծանր պարտություն կրեցին մոնղոլներից, որի հետևանքով վերջ դրվեց Ռումի սուլթանության ռազմաքաղաքական հզորությանը: Ճակատամարտից հետո Կիլիկյան Հայաստանի և մոնղոլների միջև հաստատվեցին դիվանագիտական հարաբերություններ: Սակայն այն հեշտ չտրվեց, քանի որ մոնղոլները Հեթում Ա-ից պահանջեցին հանձնել Կիլիկիայում ապաստանած Խոսրև II-ի ընտանիքին, հակառակ պարագայում սպառնում էին արշավել Կիլիկիա: Հայոց արքան, երկիրը մոնղոլական ավերիչ արշավանքից զերծ պահելու համար, ստիպված էր կատարել նրանց պահանջը: Մա քաղաքական քայլ էր, քանի որ արքայի համար կարևոր էր հայոց թագավորության անկախության պահպանումը: Այս քայլով ավելի սրվեցին Կիլիկիայի ու Ռումի սուլթանության փոխհարաբերությունները և Հեթումին պատժելու համար սելջուկներն ավերիչ արշավանքներ ձեռնարկեցին Կիլիկիա:

Ձևավորվող հայ-մոնղոլական դաշինքը կողմերի երկուստեք շահագրգռվածության արդյունք էր: Մոնղոլների որդեգրած հակամահմեդական քաղաքականությունը և այն, որ Պաղեստինի, Ասորիքի ու Եգիպտոսի համար մղվող պայքարում նրանք վստահելի դաշնակցի կարիք ունեին, իսկ այդպիսին կարող էր լինել միայն Կիլիկյան Հայաստանը, հիմք հանդիսացան հայ-մոնղոլական մերձեցման համար: Կիլիկիան իր հերթին սեփական ուժերով չէր կարող պայքարել մոնղոլների դեմ, իսկ դաշինքը երկիրը զերծ կպահեր նրանց արշավանքներից: Փաստորեն հայ-մոնղոլական դաշինքը երկու կողմերի համար ռազմաքաղաքական անհրաժեշտություն էր:

Հեթում I-ը Կոստանդին թագավորահոր գլխավորությամբ, որին ուղեկցում էին թագավորի ավագ եղբայր **Սմբատ Սպարապետը** ու վարդապետ **Միմոն Ասորին**, պատվիրակություն է ուղարկում Բաչու խանի մոտ՝ առաջարկելով երկու երկրների միջև բարեկամություն հաստատել: Մոնղոլների և Կիլիկիայի պատվիրակության միջև բանակցություններն ընթանում էին Կեսարիայում 1243 թ.՝ Խաչենի իշխան Հասան Ջալալի միջնորդությամբ: Կողմերը եկան ընդհանուր համաձայնության, ըստ որի Կիլիկիան պարտավորվում էր մոնղոլական բանակին մատակարարել սննդամթերք ու ռազմամթերք, իսկ անհրաժեշտության դեպքում՝ զորք: Փոխարենը նրանք խոստանում էին զերծ մնալ Կիլիկիա արշավելուց և թշնամիների հարձակման դեպքում ցույց տալ անհրաժեշտ օգնություն: Միաժամանակ կողմերը պայմանավորվեցին, որ Հայոց թագավորն անձամբ մեկնեք Կարակորում և Մեծ խանի հետ կնքեք անհրաժեշտ պայմանագիրը:

Հայոց թագավորի այցելությունը Կարակորում և պայմանագրի տեքստը նախապատրաստելու նպատակով որոշում ընդունվեց դեսպանություն ուղարկել մոնղոլական արքունիք: Պատվիրակության ղեկավար նշանակվեց **Սմբատ Սպարապետը**՝ հայտնի դիվանագետ, զորավար պատմիչ և օրենսդիր: Պատվիրակությունը Մոնղոլիա ուղևորվեցին 1248 թ.:

«Արքայն հայոց Հեթում, որ ի Կիլիկիա առաքեաց զեղբայր իւր Սմբատ զօրաւարն առ Ղանն երևելի պա-

տարագօք, և նորա երքեալ խաղաղութեամբ զերկայնութիւն ճանապարհին, և յոյժ մեծարեալ ի նմանէ, դարձաւ երևելի փառօք, և հաւատարիմ հրովարտակօք տուեալ նմա զաւառս բազումս և բերդս յոլովս, զոր յառաջ լեալ էր Լևոնի արքայի, և զկնի մահուանն առ ի նոցունց Ալադին Սուլտանն Հոռումոց» (Կիրակոս Գանձակեցի, Պատմության Հայոց, Երևան, 1961, էջ 301-302):

Ինչպես վկայում են սկզբնաղբյուրները Գույուք խանը մեծ ընդունելություն է ցույց տալիս հայոց պատվիրակությանը, Սմբատին կնության է տալիս ազնվական տոհմի կանանցից մեկին և հայոց եկեղեցուն ազատում հարկերից: Հետ վերադարձի ճանապարհին Սմբատ Սպարապետը կանգ է առնում Արաքսի ափին գտնվող Բաչուի ճամբարում, որտեղ էլ քննարկվում է Լևոն I-ի (1187-1219) կողմի ճամբարում, որտեղ էլ քննարկվում է Լևոն I-ի (1187-1219) կողմից սելջուկներին զիջված բերդերը հայերին վերադարձնելու հետ կապված հարցերը: Ինչպես Սմբատ Սպարապետը, այնպես էլ Կարակորումում եղած ճանապարհորդները վկայում են մոնղոլական արքունիքում նեստորականության մասին, որը կարևոր գործոն էր քրիստոնյա երկրների հետ հարաբերությունների հաստատման համար: Մինչ Սմբատի այցը՝ 1246 թ., մայրաքաղաք Կարակորումում տեղի ունեցած դուրուլթայում մոնղոլներին իրենց հպատակությունն արդեն հայտնել էին Ռումի սուլթան **Ռուքն ադ-Դին Դիճ Արսլան IV-ը (1249-1265)** և Տրապիզոնի կայսր **Մանուիլ I Մեծ Կոմնենոսը (1238-1263)**:

Մոնղոլական տերության առաջին շրջանում ուլուսները դեռևս ամուր կապված էին կենտրոնի հետ և համարվում էին Մեծ խաներին պատկանող տարածքներ: Մոնղոլներին հպատակություն հայտնած թագավորներն ու իշխանները պետք է անձամբ ներկայանային Մեծ խանին, նրան մատուցեին պատշաճ ընծաներ, հայտնեին իրենց հավատարմությունը, դրանից հետո ճանաչվում էին վասալներ: Այսպես պետք է վարվեր նաև Հեթում Ա-ը, սակայն նրա այցելությունը Կարակորում ձգձգվում էր: Հայոց արքունիքը Հեթումի այցելության ուշացումը պատճառաբանում էր, որ Կիլիկիայի վրա անընդհատ հարձակվում են Ռումի սուլթանության զորքերը և մա-

հացել էր Ջաբել թագուհին (1252): Չմերժելով բերված փաստարկները՝ կարծում ենք, որ Հեթումի այցելության ձգձգման գլխավոր պատճառն այն էր, որ հայոց արքունիքն սպասում էր Մերձավոր Արևելքում ծավալվող ռազմաքաղաքական իրադարձությունների և դիվանագիտական պայքարի արդյունքներին, որպեսզի կարողանա ճիշտ ճանապարհ ընտրել ստեղծված իրավիճակից դուրս գալու համար: Վերջապես **1254 թ. գարնանը** Հեթում Ա-ը Կարակորում է մեկնում Մեծ խան Մունկեի հասուկ հրավերով: Այս ժամանակ մոնղոլական տերությունում գործում էր համակառավարման համակարգը, ուստի Հեթում Ա-ը նախ Ոսկե Հորդայում հանդիպում է Բաթու խանին և նրա որդի Սարտախին, ապա մեկնում է Կարակորում: **1254 թ. աշնանը** Հեթում Ա-ը և Մունկե խանը վավերացնում են **հայ-մոնղոլական դաշնագիրը**, որի տեքստը, ցավոք, ամբողջությամբ չի պահպանվել: Ի մի բերելով տարբեր սկզբնաղբյուրներում առկա տեղեկությունները՝ կարող ենք առանձնացնել հետևյալ հիմնական կետերը. 1. Մոնղոլները համաձայն են ընդունել քրիստոնեություն, սակայն դա պետք է կատարվի յուրաքանչյուրի բարի կամքով, «քանի որ հաւատքը բռնադատութիւն չի հանդուրժում»: 2. Քրիստոնյաների եւ մոնղոլների միջև հաստատվում է խաղաղություն և հարատև բարեկամություն, եթե քրիստոնյաները չխախտեն այն: 3. Քրիստոնեական բոլոր եկեղեցիներն ու եկեղեցու սպասավորներն ազատ են լինելու ամեն տեսակ հարկերից: 4. Մեծ խանի կամ նրա եղբայր Հուլավուի գլխավորությամբ մոնղոլներն ազատագրելու են քրիստոնյաների սուրբ երկիրը՝ Պաղեստինը: 5. Բաղդատը պետք է գրավվի և խալիֆայությունը վերացվի: 6. Բոլոր այն շրջանները, որ խլել են Կիլիկիայից սելջուկները կամ այլ թշնամիներ, պետք է վերադարձվեն: Կիլիկիային են անցնելու նաև այն տարածքները, որոնք կնվաճի հայոց թագավորը մահմեդականներին:

1254 թ. կնքված պայմանագրով Կիլիկյան Հայաստանի ստանձնած պարտավորությունների շարքում առանձնանում էին՝ ա. երկիրը պետք է ռազմական ու տնտեսական օժանդակություն ցույց տար մոնղոլներին, բ. Կիլիկյան Հայաստանի թագավորները գահը ժառանգելու էին Մեծ խանի հավանությամբ ու համաձայնու-

թյամբ: Ավելի ուշ այդ իրավունքն անցնում է Իրանում հաստատված Հուլավյաններին:

Հեթում արքան ընդունելով Կարակորում մեկնելու որոշումը և հպատակություն հայտնելով Մունկե խանին՝ այնուամենայնիվ չէր խախտում Կիլիկիայի Հայոց թագավորության ավանդական արևմտյան կողմնորոշումը: Կիլիկյան Հայաստանը գտնվում էր ռազմավարական ու տնտեսական կարևոր ճանապարհների խաչմերուկում, ուստի մշտապես ներքաշվում էր Արևելք-Արևմուտք հակամարտությունների մեջ: Հեթում արքան, հետապնդելով հեռագնա քաղաքական ծրագրեր, նպատակ ուներ ձևավորել քրիստոնեա-մոնղոլական ռազմաքաղաքական դաշինք: Այս դեպքում մոնղոլների հետ դաշնակցային հարաբերությունների հաստատումը չէր նշանակում, թե Կիլիկիան որդեգրել է արևելյան կողմնորոշում: Այս քայլով հայոց արքան ապահովում էր իր երկրի անվտանգությունը և միաժամանակ ձգտում էր Արևելքում ստեղծել հակախալսամական դաշինք:

Հայ-մոնղոլական դաշինքն ուժի մեջ մնաց երկար ժամանակ, սակայն Կիլիկյան Հայաստանի համար միշտ չէ, որ ուներ ռազմաքաղաքական այն կարևորությունը, ինչ սկզբնական շրջանում: Այն մեծ նշանակություն ունեցավ նաև այն առումով, որ արևմտաեվրոպական երկրները, մասնավորապես Ֆրանսիան և պապականությունը, որոնք փորձում էին մոնղոլների ռազմական ուժն օգտագործել ընդդեմ Եգիպտոսի, աշխատում էին նրանց հետ մշակվող դիվանագիտական հարաբերություններում հենվել նաև Կիլիկյան Հայաստանի վրա: Մերձավոր Արևելքում, ռազմաքաղաքական գերիշխանության համար մղվող պայքարում, մոնղոլներին հաջողվեց ասպարեզից հեռացնել սելջուկներին, սակայն ստիպված էին երկարատև ու ծանր պայքարի մեջ մտնել Եգիպտոսի սուլթանության դեմ:

XIII դ. 50-ական թթ. մոնղոլները Հարավ-արևմուտքում ծրագրեցին նոր արշավանք, որն առաջին հերթին ուղղված էր իսլամի կրոնական, քաղաքական կենտրոնի խորհրդանիշ դարձած Բաղդատի դեմ: Մոնղոլները գրավում են Բաղդատը, ապա՝ Ասորիքի մի մասը: Կիլիկյան Հայաստանը չմասնակցեց Բաղդատի գրավմանը, սակայն ակտիվ դեր խաղաց Ասորիքում տեղի ունեցող իրադար-

ձույթուններում: Հուլավու խանի գլխավորությամբ Ասորիք ձեռնարկած արշավանքը, որին մասնակցում էին ոչ միայն Կիլիկիայի հայոց թագավորը, այլև Մեծ Հայքի իշխանների մի մասը, սկզբնական շրջանում որոշ հաջողություններ ունեցավ: Մակայն 1250 թ. Եգիպտոսում իշխանության եկած մամլուքները ծրագրում էին վերականգնել եգիպտա-ասորիքյան միացյալ պետությունը, ուստի առաջին հարվածն ուղղելու էին մոնղոլա-քրիստոնեական զինակցության դեմ: Բաղդատի անկումից հետո Եգիպտոսը ձգտում էր յուրացնել մահմեդական աշխարհի կենտրոնի կարգավիճակը: Մոնղոլների ասորական արշավանքի անհաջողության պատճառներից մյուսը Մունկե Մեծ խանի մահն էր, որի լուրն առնելուն պես Հուլավուն որոշում է մեկնել Կարակորում, իսկ մոնղոլական զորքի հրամանատար է նշանակում նեստորական **Քիսրուդային**: Այս շրջանում իսլամի պաշտպանությամբ հանդես է գալիս նաև Ոսկե Հորդան, ուստի Հուլավյանները, հակամահմեդական դաշինք ստեղծելու նպատակով, սկսեցին ակտիվ բանակցություններ վարել պապականության, Արևմտյան Եվրոպայի և Բյուզանդիայի հետ, որը գործնական արդյունքներ չտվեց:

Օգտվելով ստեղծված իրավիճակից՝ մամլուքներն անցնում են հակահարձակման և **1260 թ. սեպտեմբերի 3-ին Այն-Ջալուքի** հովտում տեղի ունեցած ճակատամարտում պարտության մատնում մոնղոլ-քրիստոնեական բանակին: Այս ճակատամարտը բախտորոշ նշանակություն ունեցավ իսլամի և քրիստոնեության միջև ծավալվող հակամարտության հետագա ընթացքի վրա: Փաստորեն մոնղոլների դեմ պայքարն ստանձնեց մամլուքյան Եգիպտոսը, որին հաջողվեց իր շուրջը համախմբել Մերձավոր Արևելքի մահմեդական բնակչությանը: Այդ պահից սկսած մամլուքներն իրավունք ստացան ներկայանալ որպես իսլամի պաշտպաններ: Ձևավորված պայմաններում Կիլիկյան Հայաստանը հայտնվում է ոչ միայն մոնղոլա-եգիպտական, այլև իսլամա-քրիստոնեական հակամարտությունների ոլորտում: Արդյունքում սրվում են հայ-եգիպտական ու հայ-սելջուկյան փոխհարաբերությունները: Հուլավուն, զբաղված լինելով Ոսկե Հորդայի դեմ սկսված պատերազմով, մամլուքների դեմ պայքարում փորձում էր օգտագործել Կիլիկյան Հայաստանի, խաչակիր-

ների և մոնղոլներին ենթակա Ռումի սուլթանության ուժերը: Մրանով է բացատրվում, որ Հուլավուն Դիժ Արսլան սուլթանին պարտադրեց Հեթում Ա-ի հետ ստորագրել **Հերակլեայի** հաշտության պայմանագիրը: Մակայն Ռումի սուլթանությունը Կիլիկիայի համար այլևս մեծ վտանգ չէր ներկայացնում, քանզի մոնղոլները կատարում էին իրենց դաշնակցային պարտավորությունները, մյուս կողմից սուլթանությունը բավականին թուլացել էր: Կիլիկյան Հայաստանի համար ավելի վտանգավոր էին սուլթանության տարածքում տեղի ունեցող էթնոքաղաքական ու սոցիալական տեղաշարժերը, երբ թուրքական տարրը փորձում էր հաստատվել տարածաշրջանում:

Եգիպտական զորքերը 1265-1266 թթ. խաչակիրներից գրավեցին **Կեսարիան, Յաֆֆան, Արզուֆը**, իսկ 1266 թ. արշավեցին Կիլիկիա: Հայոց արքան օգնության խնդրանքով մեկնում է մոնղոլների մոտ: Հուլավուին հաջորդած **Աբադա խանը (1265-1281)** պատերազմում էր Ջուջիների ու Չաղաթայների ուլուսների դեմ, ուստի չէր կարող օգնել Կիլիկիային: **1266 թ. օգոստոսի 23-ին Մառի** կոչված վայրում հայ-եգիպտական զորքերի միջև տեղի է ունեում վճռական ճակատամարտ, որն ավարտվում է հայկական բանակի պարտությանը: Այն ծանր դրության մեջ է դնում նաև խաչակիրներին: 1268 թ. գարնանը եգիպտական զորքերը գրավեցին **Անտիոքը**: Հեթում Ա-ը, մոնղոլներից և խաչակիրներից օգնություն չստանալով, որոշեց սուլթան **Բեյբարսի (1260-1277)** հետ հարաբերությունները կարգավորել դիվանագիտական ճանապարհով: 1268 թ. ստորագրվեց հայ-եգիպտական հաշտության պայմանագիրը, ըստ որի Կիլիկիան ստիպված էր որոշ տարածքներ զիջել Եգիպտոսին:

1269 թ. Հեթում Ա-ը մոնղոլների համաձայնությամբ գահը հանձնեց որդուն՝ Լևոնին, և անդամագրվեց վանական միաբանության: **Լևոն Բ-ը (1269-1289)** վստահ չէր, որ Եգիպտոսի հետ հաստատված խաղաղությունը երկար կյանք կունենա, ուստի հավատարիմ մնաց հայ-մոնղոլական դաշինքին: 1275 թ. եգիպտական զորքը սուլթան **Բեյբարսի** հրամանատարությամբ ներխուժում է **Կիլիկիա**: Լևոն Բ-ը մեծ դժվարությամբ է կարողանում հետ մղել մամլուքներին: 1277 թ. եգիպտական զորքը կրկին արշավում է Կիլիկիա, թեև

այս անգամ էլ հայկական գորքը հաղթանակ է տանում, սակայն շատ թանկ գին է վճարում՝ գոհվում են արքային հավատարիմ շատ իշխաններ, այդ թվում **Սմբատ Մպարապետը**: 1277 թ. Բեյբարսն արշավում է Կապադոկիա, պարտության է մատնում մոնղոլներին և գրավում Կեսարիան: Մակայն մամլուքյան գորքը նահանջում է, երբ Փոքր Ասիա է հասնում իլխան Աբաղան: Վերջինս չի կարողանում օգտագործել ձեռք բերված սկզբնական հաջողությունները, քանզի շուտով պատերազմ է սկսվում Ռսկե Հորդայի, Չաղաթայի ուլուսի և Իլխանության միջև: Աբաղան հետաձգում է Ասորիք կատարվելիք արշավանքը, ինչից էլ օգտվելով մամլուքները 1278-1279 թթ. կրկին արշավում են Կիլիկիա: Նրանք ավերում ու կողոպտում են երկիրը, գերեվարում բնակչությանը և ավերակների վերածում հայկական բնակավայրերը: Միայն 1280 թ. Աբաղան նոր արշավանք է կազմակերպում Ասորիք, որին մասնակցում էր Լևոն Բ-ն և Արևելյան Վրաստանի թագավոր **Դեմետրե II-ը (1270-1289)**: Վճռական ճակատամարտը տեղի է ունենում **Հոմս** քաղաքի մոտ 1281 թ., սակայն դաշնակիցները պարտություն են կրում:

Աբաղա իլխանին հաջորդած **Թեքուդար** իլխանը (1282-1284), որն ընդունում է իսլամ և ստանում Ահմեդ անունը, սկսում է անողորհ հալածել քրիստոնյաներին և հրաժարվում է Եգիպտոսի դեմ պայքարը շարունակելուց: Երկու տարի իշխելուց հետո սպանվում է մոնղոլական ռազմաքոչվորական վերնախավի կողմից և իշխանությունն անցնում է **Արղունին (1284-1291)**: Վերջինիս օրոք աշխուժանում են շփումները Եվրոպայի հետ, սակայն իրական արդյունքներ չի նկատվում: Նման պայմաններում Լևոն Բ-ը այլ էլք չունենալով փորձում է պայմանագիր ստորագրել Եգիպտոսի հետ: 1285 թ. մայիսին ստորագրվում է հաշտության պայմանագիր: Եգիպտոսը, օգտվելով ստեղծված վիճակից, 1289 թ. գրավում է **Տրիպոլին**, 1291 թ.՝ **Աքքան**՝ Ասորիքում խաչակրաց վերջին տիրույթը: Հայ-մոնղոլա-խաչակրաց ռազմաքաղաքական համագործակցության ծրագիրը, որի հետ այդքան մեծ հույսեր էին կապում կիլիկյան արքունիքում, իրագործվելու ոչ մի հեռանկար այլևս չունեի: Վիճակն ավելի էր ծանրանում, քանզի Մերձավոր Արևելքում ռազմաքաղաքական գերակայության հա-

մար մոնղոլ-եգիպտական հակամարտությունն ավարտվում էր Եգիպտոսի հաղթանակով:

1292 թ. հունիսի վերջին մամլուքները գրավեցին հայոց կաթողիկոսանիստ Հռոմկլա բերդաքաղաքը: Մոնղոլներն այս անգամ էլ օգնության չհասան և հուսախաբ **Հեթում Բ-ը (1289-1306)** ստիպված էր 1293 թ. հունիսին Եգիպտոսի հետ պայմանագիր կնքել՝ հանձնելով սահմանային մի քանի քաղաքներ ու բերդեր:

Մոնղոլա-եգիպտական ռազմական առճակատումը նոր փուլ թևակոխեց իսլամ ընդունած **Ղազան իլխանի (1295-1304)** օրոք: Վերջինս մտադրվել էր կենսագործել իր նախորդների ծրագիրը, ուստի Ասորիքի ու Պաղեստինի համար մղվող պայքարը թևակոխեց վերջնական ու վճռական շրջափուլ: Ղազան իլխանը կազմակերպում է երեք արշավանք (1299, 1300, 1303 թթ.), որոնց կիլիկյան գորքով անձամբ մասնակցում էր նաև Հեթում Բ-ը: Չնայած որոշ հաջողությունների՝ Ղազան իլխանը համոզվում է, որ առանց եվրոպական երկրների հետ դաշինքի հնարավոր չէ հաղթել Եգիպտոսին: Մակայն իլխանի բոլոր ձեռնարկումները Եգիպտոսի դեմ համատեղ պայքարելու համար ռազմաքաղաքական դաշինք կնքել Ֆրանսիայի ու Անգլիայի հետ արդյունք չտվեցին: Ղազան իլխանը հայոց թագավորին տրամադրում է 1000 մոնղոլ ձիավոր, որոշակի քանակությամբ դրամ և նահանջում է՝ խոստանալով կազմակերպել նոր արշավանք: Մակայն իլխանը շուտով մահանում է՝ իր հետ գերեզման տանելով արշավանքի ծրագիրը: Օգտվելով մոնղոլական բանակի նահանջից՝ Եգիպտական գորքերը նորից են ներխուժում Կիլիկիա, սակայն 1305 թ. Այաս քաղաքի մոտ տեղի ունեցած ճակատամարտում հայ-մոնղոլական միացյալ ուժերը կարողանում են հաղթանակ տանել:

Ղազան իլխանի մահից հետո իլխան է դառնում **Օլջեյթուն (1304-1316)**, որի օրոք հայ-մոնղոլական դաշինքն իր ռազմաքաղաքական ուժն ու հեղինակությունը կորցնում է: Կիլիկիայի հանդեպ իսլամ ընդունած մոնղոլների վերաբերմունքը գնալով ավելի թշնամական է դառնում, քանի որ Փոքր Ասիայի արևմտյան շրջանում հաստատված մոնղոլները և Կիլիկիայում տեղակայված մոնղոլական կայազորը, օգտվելով Հուլավյանների թուլացումից, դաշնակ-

ցում էին մահմեդականների հետ՝ ընդդեմ Կիլիկիայի: Այսպես, Կիլիկիայում տեղակայված մոնղոլական զորախմբի հրամանատար Բիլարդուն 1307 թ. հյուրասիրության պատրվակով Անավարզա քաղաք է հրավիրում հայոց թագավոր **Լևոն Գ-ին**, նախկին թագավոր Հեթում Բ-ին և 40 հայ իշխանի ու հրամայում է կոտորել նրանց: 1321 թ. Կիլիկիա են ներխուժում Ռումի սուլթանության նախկին տարածքում տեղակայված մոնղոլական զորքերը, որոնց միանում են թուրքմենները (շուրջ 30 հազար): Նրանք շուրջ մեկ ամիս ավերեցին ու թալանեցին երկիրը: Մոնղոլների մերձավորարևելյան քաղաքականության, որի շրջանակներում ձևավորվեց հայ-մոնղոլական դաշնակցությունը, ձախտումը վերջակետ դրեց հայ-մոնղոլական դաշինքին:

Թեմա 6. Մոնղոլական տերության տրոհումը և անկումը

Մեծ խան Մունկեի մահից (1259) հետո մոնղոլական հասարակության միասնությունը տրոհվում է և երկրում սկսվում է քաղաքացիական պատերազմ: Մեծ խանի տիտղոսի համար պայքարում էին **Խուբիլայը և Արիկ Բոգեն**, ինչի արդյունքում մոնղոլական ռազմաքաղաքական վերնախավը ևս պառակտվում է: Հուլավուն պաշտպանում էր Խուբիլային, իսկ Բերկեն, դառնալով Ոսկե Հորդայի խան, պաշտպանում էր Արիկ Բոգենին: Եղբայրների միջև պայքարը շարունակվում է մինչև 1264 թ., երբ Արիկ Բոգեն պարտություն է կրում և գերության մեջ ապրում մինչև 1266 թ.: Սակայն այսքանով երկպառակտչական պատերազմները չեն ավարտվում: Շուտով մոնղոլները կրկին բաժանվում են երկու ճամբարի, քանզի 1268 թ. Կենտրոնական Ասիայում **Կայդուն** պատերազմ է սկսում Խուբիլայի դեմ: 1277 թ. Կայդուն հարձակվում է Կարակորումի վրա, սակայն Խուբիլայն օգնական զորք է ուղարկում պաշարվածներին և Կայդուն նահանջում է: Սակայն նա չի հրաժարվում պայքարից և համախոհներ է ձեռք բերում Մանջուրիայում: Խուբիլայն անձամբ է գլխավորում նրա դեմ կազմակերպված արշավանքը: Վճռական ճակատամարտում Խուբիլայը հաղթանակ է տանում, սակայն Կայդուն շարունակում է պայքարը, անգամ Խուբիլայի մահից հետո: Նա սպանվում է 1301 թ. Կարակորումի համար մղվող հերթական ճակատամարտում: Մյուս կողմից, ռազմական ճանապարհով ստեղծված կայսրությունում, որը ներառում էր տարաբնույթ էթնո-քաղաքական ու մշակութային միջավայրեր, կենտրոնն այլևս չէր կարողանում վերահսկել ուլուսների գործունեությունը, արդյունքում նրանք յուրացնում էին ինքնուրույն քաղաքականություն վարելու իրավունքներ:

Թեև քաղաքացիական պատերազմում ի վերջո հաղթանակ տարավ Խուբիլայը և հռչակվեց Մոնղոլական կայսրության Մեծ խան, սակայն դա իրականում կրում էր ձևական բնույթ, քանի որ Հուլավուն Իրանում, Բերկեն Ջուչինների տիրույթներում և Ալգուն Չաղաթայի ուլուսում փաստացի անկախ տիրակալներ էին: Փաստորեն Մոնղոլական միասնական կայսրությունը տրոհվեց և նախ-

կին չորս ուլուսների հիման վրա ստեղծվեցին չորս անկախ պետություններ:

Յուան արքայատունը Չինաստանում

Խուբիլայը, ընտրվելով Մեծ խան, հիմք դրեց նոր **Յուան արքայատանը՝ 1271-1368 թթ.**: Նոր արքայատան անվանումը Խուբիլայը պատահական չէր ընտրել, «Յուան» բառը նշանակում է «ծագել է տիեզերքից» կամ «երկնային ծագմամբ»: Սկզբնաղբյուրներում այն հիշատակվում է Մեծ Յուան Մեծ Մոնղոլական պետություն (Dai Ön Yeke Mongghul Ulus): Յուան կայսրությունը հայտնի է նաև Մեծ խաների կայսրություն կամ Մեծ խաների խանություն անվանումով: Յուան կայսրերը կրում էին Մեծ խան տիտղոսը: Մոնղոլական կայսրության քաղաքական կազմակերպման շրջանակներում Մեծ խան (կենտրոն)-խան (ենթակենտրոն) ընդգրկում էր ոչ միայն Չինաստանը, այլև մյուս ենթակենտրոնները: Այս դեպքում ուլուսների կառավարիչներն իրավական տեսակետից իրավասու չէին յուրացնել Մեծ խան տիտղոսը և ներկայանում էին որպես Յուան արքայատան ներկայացուցիչներ, որոնք Մեծ խանի անունից կառավարում էին իրենց հանձնված տիրույթները: Իրականում կենտրոնի և ենթակենտրոնների միջև ձևավորված նախկին համակարգի քաղաքական հավասարակշռությունը խախտվել էր: Յուան արքայատան իրավունքները ենթակենտրոններում քաղաքական որևէ հատկանիշ չունեին և ձևական բնույթ էին կրում: Փաստորեն Յուան արքայատան ընդունումը դարձել էր համամոնղոլականության խորհրդանիշ, քանզի նրա քաղաքական կազմակերպման իրական միջավայրը Չինաստանն էր:



Խուբիլայի նվաճողական քաղաքականությունն առաջին հերթին ուղղված էր Մուն պետության դեմ, որի նպատակն էր ողջ Չինաստանը ներառել մոնղոլական գերիշխանության ներքո: 1261 թ. Խուբիլայը հայտարարեց, որ Մուն դինաստիան պետք

է հրաժարվի իշխանությունից՝ հոգուտ նոր Յուան արքայատան, որը պետք է կառավարի ողջ Չինաստանը: 1267 թ. նա ձեռնարկեց վճռական քայլեր և պաշարեց **Մյանյան** քաղաքը, որը մոնղոլներին հաջողվեց գրավել հինգ տարի անց: 1273 թ. մոնղոլական զորքը շարժվեց դեպի **Լինան**: 1274 թ. մահացավ կայսր **Ղու Յզուն** (1264-1274) և նոր կայսր հռչակվեց նրա չորսամյա որդին՝ **Պուն ցզուն** (1274-1276), իսկ խնամակալ դարձավ **Մե կայսրուհին**: Մոնղոլական զորքը մի քանի ուղղություններով սկսեց Լինանի գրոհը, թեև սուլյան զորքը պարտություն կրեց, սակայն քաղաքի պաշտպանությունը շարունակվեց մինչև 1276 թ.: Ի վերջո մոնղոլներին հաջողվեց գրավել քաղաքը, սակայն ավերածությունների չենթարկվեց, կայսրուհին ու կայսրը մինչև 1288 թ. ապրեցին Խուբիլայի արքունիքում, որից հետո խանը նրանց ուղարկեց Տիբեթ: Չնայած մայրաքաղաքը հանձնվեց, սակայն Մունյան քաղաքներն ու ամրոցներն ընդհուպ մինչև 1278 թ. շարունակում էին պայքարը մոնղոլների դեմ: Մուն դինաստիան դադարեց գոյություն ունենալ **1279 թ.**: Փաստորեն Խուբիլայն արդեն կարող էր ընդունել **Երկնքի Որդու** տիտղոսը, ինչպես անվանաբար անվանում էին չինական կայսրերին: Թեև Խուբիլայը և նրա հաջորդներն ընդունեցին կայսր տիտղոսը, սակայն մոնղոլական միջավայր ունեցող արքունիքը շարունակում էր օգտագործել Մեծ խան տիտղոսը: Սա պատահական չէր, քանի որ մոնղոլներն այսպես փորձում էին ընդգծել իրենց ռազմաքաղաքական առաջնությունը նվաճված երկրում և գերազահությունը մյուս ուլուսների նկատմամբ: Հնագույն ժամանակներից Չինաստանի տիրակալներն իրենց երկիրն անվունում էին **Չժանգո** կամ **«Կենտրոնական թագավորություն»**, (Կենտրոն), իսկ նրա շրջանակներից դուրս բնակվողներին՝ բարբարոսներ, որոնք պետք է ենթարկվեին իրենց: Խուբիլայը յուրացրեց ու սկսեց օգտագործել այս գաղափարախոսությունը, որին ավելացրեց մոնղոլական պատկերացումները՝ աշխարհի նվաճումը դա Աստծո կամքի իրականացումն է: 1272 թ. Խուբիլայը Յուան կայսրության մայրաքաղաք հռչակեց **Ղադուն** (Պեկինի տարածքում), որը մոնղոլներն անվանում էին **Ղայդու**, թյուրքերը՝ **Սանբալիկ**, իսկ Ցզին կայսրության շրջանում այն հայտնի էր **Չժունդու** անունով:

1267 թ. Խուբիլայն առաջին անգամ դեսպաններ ուղարկեց **Ճապոնիա** և պահանջեց Ճապոնացիներից հնազանդվել իրեն: Ճապոնիայում այս ժամանակ իրական իշխանությունը գտնվում էր **սյոգունի** ձեռքում, ով էլ մերժեց մոնղոլական դեսպաններին: 1274 թ. Յուանի նավատորմը, որը բաղկացած էր 15000 մոնղոլ ու չինացի և 8000 կորեացի զինվորներից՝ 300 մեծ նավերով և 400-500 նավակներով, ներխուժեց Ճապոնիա: Չնայած մոնղոլական նավատորմը գրավեց **Ցուսիման, Իկին**, անգամ զորք ափհանեց **Կյուսյու**, սակայն **Խակադակիի** ճակատամարտի ժամանակ սկսված փոթորկի պատճառով մոնղոլներն ստիպված էին հետ վերադառնալ:

1277 թ. Կամակուրում ճապոնացիները մահապատժի ենթարկեցին մի քանի մոնղոլ դեսպանների, որից հետո Խուբիլայը 1281 թ. 3500 նավերով 100000-ոց զորք ուղարկեց Ճապոնիա: Նախօրոք մշակված ծրագրով մոնղոլական նավատորմը Կորեայից և Յանցզինից շարժվելով պետք է միավորվեր Կյուսյուի մոտ: Սակայն թայֆունի պատճառով մոնղոլական նավատորմը զգալի կորուստներ կրեց, ինչի արդյունքում էլ մոնղոլները դարձյալ պարտություն կրեցին և հազարավոր զինվորներ գերի ընկան ու ստրկացվեցին: 1286 թ. մոնղոլական արշավանքը կրկնվեց, սակայն փոթորկի պատճառով մոնղոլները հաջողության չհասան, ինչի արդյունքում էլ Ճապոնիան գրավել այդպես էլ չհաջողվեց: Այդ ժամանակներից սկսած ճապոնացիները թայֆունն սկսեցին անվանել **կամիկաձե** («Աստվածային քամի»):

Հարավում Խուբիլայը նպատակադրվել էր մոնղոլների իշխանությունը հաստատել Դալիից մինչև Հարավ-արևելյան Ասիայի թագավորություններ: Բացի Աննամից, որտեղ տարածված էր հիմնականում չինական մշակույթը, մյուս պետություններում գերակայում էր հինդու կրոնն ու մշակույթը: **Աննամն** ու **Չամպն** ընկած էին ներկայիս Վիետնամի տարածքում, իսկ **Մենը**՝ Բիրմայի (Մյանմի) և Թայլանդի տարածքներում: 1252-1258 թթ. արշավանքների ժամանակ մոնղոլները հասան Աննամի սահմաններին և թագավոր Տրան Տաինոնը դարձավ նրանց դաշնակիցը: Չամպում հաստատվելու համար մոնղոլները մի քանի արշավանք կազմակերպեցին: 1283 թ. տեղի ունեցած ճակատամարտում նրանք հաղթանակ տարան, սա-

կայն սովի և հիվանդությունների պատճառով ստիպված էին նահանջել: Սակայն երկարատև ու ծանր պայքարից հետո մոնղոլները կարողացան հաստատվել Աննամում, Չամպում և Կամբոջայում:

Դալիից արևելք մոնղոլները 1275 թ. հարձակվեցին Մեն թագավորության վրա: Մոնղոլները հսկայական բանակով մի քանի անգամ ներխուժեցին Մեն, մեծ ավերածություններ գործեցին և վերջապես թագավորը համաձայնվեց մոնղոլներին հարկ վճարել: Խուբիլայը դեսպաններ ուղարկեց նաև **Յավա կոզի**՝ պահանջելով հարկ վճարել: Այդ ժամանակ Յավան բաժանված էր երկու թագավորության: 1293 թ., երբ մոնղոլները ներխուժեց այստեղ, միապետներից մեկն անմիջապես հնազանդվեց, բայց դա երկար չտևեց: Ի վերջո Յավա ձեռնարկված արշավանքներն էական արդյունքներ չտվեցին և մոնղոլներին չհաջողվեց հաստատվել այստեղ: Խուբիլայի իշխանությունը ճանաչում և նրան հարկ էին վճարում Հարավային Հնդկաստանի և Ցեյլոնի ռաջաները:

Փաստորեն մինչև 1280 թ. Խուբիլայն իր իշխանությունը հաստատեց ողջ Չինաստանում: Մոնղոլական տիրապետությունը խորը հետք թողեց Չինաստանի պատմության վրա, քանզի խաթարվեց երկրի սոցիալ-տնտեսական, մշակութային զարգացման բնականոն ընթացքը: Երկրի հյուսիսային շրջանների մի մասը դարձավ անմարդաբնակ՝ վերածվելով անասնապահական գոտիների: Բնակչության մի մասը ստրկացվեց, ծաղկուն քաղաքներն ու բնակավայրերն ավերվեցին: Հաստատվելով Չինաստանում՝ Խուբիլայը փորձեց վերակառուցել վարչաքաղաքական, տնտեսական ու մշակութային միջավայրերը և ըստ հնարավորությունների դրանք համապատասխանեցնել մոնղոլական կացութաձևին:

Խուբիլայը թեև տպավորված էր չինական մշակույթով, հատկապես կոնֆուցիականությամբ, սակայն նրա համար առաջնահերթը մոնղոլական ռազմաքաղաքական գերիշխանության ապահովումն էր: Նրա իշխանության կազմակերպման հիմնական հենարանը մոնղոլ զորահրամանատարներն էին ու զորքը: Մոնղոլները գրեթե անփոփոխ պահպանեցին նախկին կառավարման համակարգը, սակայն սկզբնական շրջանում բոլոր չինացի պաշտոնյաններն ազատվեցին զբաղեցրած պաշտոններից: Փոխարենը Խուբիլայը քա-

ղաքացիական պաշտոնների էր նշանակում ույղուրներին, մուսուլմաններին և անգամ եվրոպացիներին: Խուբիլայը հասարակությունը բաժանեց **չորս խավի**: Առաջինում **մոնղոլներն** էին (ռազմական ընտրախավ), երկրորդ խումբը կազմում էր **սեմուժենը**՝ ծառայողները, այդ թվում նաև օտարերկրացիները, երրորդը՝ **խան-ժեն** կամ հյուսիսային չինացիները և չորրորդը՝ **նան-ժեն** կամ հարավային չինացիները: Յուրաքանչյուր դինաստիայի բոլոր բարեփոխումներն ուղղված էին մոնղոլ էթնոսի ռազմաքաղաքական ու տնտեսական իրավունքների ամրապնդմանը: Սկզբնական շրջանում չինացիները գրեթե զրկված էին բոլոր իրավունքներից: Նրանց արգելվում էր գիշերով դուրս գալ փողոց, ուսումնասիրել օտար լեզուներ, սովորել ռազմական գործ և այլն: Մակայն մոնղոլ տիրակալները շուտով հասկացան, որ առանց տեղաբնիկների ի գործու չեն կատարել տերությունը և աստիճանաբար չինացիներին ներգրավում էին քաղաքացիական ու մշակութային կյանքի կազմակերպման գործընթացներում:


Խուբիլայի հովանավորությամբ զարգացում են ապրում չինական թատրոնը, գրականությունը, ինչպես նաև ճշգրիտ գիտությունները, հատկապես մաթեմատիկական ու աստղագիտությունը: Նրա հրամանով պաշտոնական փաստաթղթերն ու դրամների վրա արվող գրությունները կատարվում էին նոր մշակված այբուբենով, որի հեղինակը տիբեթցի լամա **Պիագսպան** էր: Մակայն այս գիրը չկարողացավ դուրս մղել ավանդական չինական ու ույղուրական գրերին և Խուբիլայի մահից հետո դրա գործածությունը շրջանառությունից դուրս եկավ: Խուբիլայն առանձնահատուկ վերաբերմունք ուներ կրոնի նկատմամբ, ուստի հատուկ նախարարությունում առանձնացվել էին բուդդայականության, իսլամի, հինդուականության, քրիստոնեության և կոնֆուցիականության բաժինները, որոնք ուսումնասիրում էին այդ դավանանքները: Այդ կրոններին համապատիվ ընդունվում էր նաև հրեականությունն ու մանիքեականությունը: Շամանականությունը պահպանվում էր միայն արքունի պալատում որպես նվաճողների խորհրդանիշ: Ինքը՝ Խուբիլայը, մեծ տեղ էր հատկացնում բուդդայականությանը և լամայի իշխանությանը հանձնեց **Տիբեթը**: Խուբիլայը և նրա հաջորդները հսկայական միջոցներ էին ծախսում պալատների, հասարակական շենքերի

և տաճարների կառուցման համար: Մոնղոլներն ընդարձակում են ջրանցքների ու ճանապարհների ցանցը, ստեղծում ռազմական և առևտրական նավատորմ, հովանավորում են առևտուրը: Մոնղոլները ծովային առևտուր էին կատարում Հարավային Ասիայի ու Աֆրիկայի երկրների հետ: Նրանք շարունակեցին օգտագործել Մետաքսի ճանապարհը և ընդլայնեցին առևտրական կապերն Արևմուտքի, մասնավորապես Բյուզանդիայի ու Արևմտյան Եվրոպայի հետ: Խուբիլայը ևս շարունակեց օգտագործել թղթե դրամները, որոնք ավելի էին հեշտացնում առևտրաշրջանառությունը:

1294 թ. Խուբիլայի մահից հետո Յուրաքանչյուր իշխանությունն սկսում է թուլանալ: Մեծ խանի մահից հետո հրավիրված դուրուլթայում խան է ընտրվում **Կամալը**, սակայն շուտով նրա փոխարեն Մեծ խան և կայսր է հռչակվում նրա եղբայր **Թեմուրը (1294-1307)**: Վերջինս զգուշավոր ու խելացի պետական գործիչ էր և պատերազմելու փոխարեն գերադասում էր խնդիրները կարգավորել խաղաղ դիվանագիտական ճանապարհով: Մակայն նրա իշխանությունը կարճ է տևում, քանի որ 1307 թ. հիվանդանում է և մահանում: Մեծ խան է ընտրվում **Խայջանը (1307-1311)**, ով հայտնի գորավար էր, միաժամանակ խաղաղ ու հանգիստ տիրակալ: Նա բուդդայականության ու կոնֆուցիականության հովանավորն էր: 1311 թ. Խայջանի մահից հետո՝ նրա քաղաքականությունը շարունակում է եղբայրը՝ **Այուրբարիբադան**՝ կառավարելով մինչև 1320 թ.: Այնուհետև կայսրեր են դառնում և կարճատև կառավարում **Շիդեբալան (1320-1323)**, **Եսուն Թեմուրը (1323-1328)**, **Արաջաբիզը (1328)**, **Խոշիլան (1329)**, **Թուզ Թեմուրը (1328-1329, 1329-1332)**, որոնք բոլորն էլ մանկահասակ էին կամ երիտասարդ, ուստի իրական իշխանությունը տրվում էր մոնղոլ նախարարներին ու բուդդայական լամաներին: Արքունիքում տիրող քաղաքական ճգնաժամը տարածվում է կայսրությունով՝ սոցիալական ու տնտեսական ցնցումների տեսքով: Մինչ ռազմաքաղաքական վերնախավի տարբեր խմբեր պայքարում էին իշխանության համար՝ երկրով մեկ տարածվում են խռովություններ ու ապստամբություններ: Նման պայմաններում գյուղացիական ապստամբությունները ճնշելն անհնար էր դառնում: Շուտով գյուղացիներին սկսում են աջակցել քաղաքային բնակչությունը:

նը: Բուդդայական «Մալիտակ լոտուս» գաղտնի կազմակերպությունն սկսում է բանակ հավաքագրել և մարզել՝ մոնղոլների դեմ պայքարելու համար: 1351 թ. ապստամբությունն ստանում է մասսայական բնույթ: Ապստամբության ղեկավարների շարքում առանձնանում է **Չժու Յուան-չժանը**, ով 1355 թ. իր ձեռքն է վերցնում բանակի ընդհանուր հրամանատարությունը և իրեն ենթարկում Հարավային Չինաստանի նահանգները, 1356 թ. վճռական հաղթանակ է տանում մոնղոլական զորքի դեմ, գրավում է **Ցզինկին** (Նանկին) և այն դառնում է ապստամբության կենտրոնը: Այս շրջանում մոնղոլական երկու արքայազնները պայքարում էին իշխանության համար, ինչից էլ օգտվում է Չժու Յուան-չժանը և հաջողությամբ շարունակում պայքարը: Յուան արքայատան անկման թիվն ընդունված է համարել 1368 թ., երբ գեներալ Սու Դան գրեթե առանց կռվելու գրավում է մայրաքաղաք Պեկինը: Յուան դինաստիայի վերջին ներկայացուցիչ **Թոդան Թեմուրը** (1333-1368) փախչում է և 1370 թ. վախճանվում: Չժու Յուան-չժանը հռչակվում է կայսր **Խուն Ու** անունով (1368-1398) և Չինաստանում հիմնադրում **Մին դինաստիան** (1368-1644):

Յուան արքայատունը
(փակագծերում ներկայացված են Մեծ խաների բուդդայական և չինական տաճարային անունները)



Չաղաթայների պետությունը Կենտրոնական Ասիայում

Չինգիզ խանի երկրորդ որդու՝ Չաղաթայի, տիրույթները ներառում էին Արևելյան Թուրքեստանը, Մեմֆրեյի ու Մավարաննահրի մեծ մասը, ինչպես նաև Ամու-Դարյա գետի ձախ ափին ընկած շրջանները (Բալխ, Բաղահշան, Ղազնի, Քարու) մինչև Միտղ գետը:

Չաղաթայը բացասական դիրքորոշում չունեի իսլամի նկատմամբ, սակայն հովանավորում էր քրիստոնեության ու բուդդայականության տարածմանը: Չինգիզ խանի մահից հետո նա հետանում է իր ուլուս, սակայն ընդունում էր Մեծ խանի գերիշխանությունը: Նա մահանում է 1242 թ., որից հետո ուլուսը նրա անունով կոչվում է **«Չաղաթայների պետություն»**: Այս շրջանում պետության մայրաքաղաքն **Ալմալիկն** էր: Չաղաթայը դեռևս իր կենդանության օրոք արքունիքի հավանությամբ իրեն հաջորդ է նշանակում **Քարա-Նուլավույին (1242-1246, 1252)**: Երբ Մեծ խան է ընտրվում Գույուքը, Քարա-Նուլավույին գահընկեց է անում և կենտրոնասիական տարածքների ղեկավարումը հանձնում է Չաղաթայի որդուն՝ **Եսու Մունկեին (1246-1252)**, սակայն կառավարումը կենտրոնանում է նրա կնոջ՝ Թուկաշի, ձեռքում: Երբ Մեծ խան է ընտրվում Մունկեն (1251), Չաղաթայի և Ուզեդեյի ընտանիքների նկատմամբ հալածանքներ է սկսում, քանի որ նրանք դեմ էին եղել իր թեկնածությանը: Նա պատժիչ զորք է ուղարկում այս ուլուսներ և մահապատժի ենթարկում բոլոր կասկածյալներին: Մունկեի կառավարման տարիներին Չաղաթայների ուլուսի գոյությունը ձևական էր: Ուլուսի ղեկավար է նշանակվում Քարա-Նուլավույի որդի **Մուբարակ-շահը (1252-1260)** մոր՝ **Օրկին խաթունի**, խնամակալությամբ (օյրատների ցեղից Թուրալչի-գուրգենի դուստրն էր), ում ձեռքում էլ գտնվում էր իրական իշխանությունը:

1260-ական թթ. Մոնղոլական կայսրությունը՝ որպես տարածաքաղաքական ամբողջություն, դադարեց գոյություն ունենալուց: Մունկեի մահից հետո դարձյալ սկսվեցին գահակալական կռիվներ, իսկ ծայրամասերում՝ անջատողական և անկախ պետություններ հիմնելու ձգտումները: Մեծ խանի թեկնածուներից Արիկ Բոգեի հովանավորությամբ Չաղաթայների ուլուսում իշխանությունն իր

ձեռքն է վերցնում Չաղաթայի թոռ **Ալգուն (1260-1266)**: Վերջինս կարճ ժամանակում կարողանում է իր իշխանությունը հաստատել ողջ ուլուսի նկատմամբ, ապա անտեսելով Արիկ Բոգեին, իրեն հռչակում անկախ տիրակալ և Կենտրոնական Ասիայում հինք դնում մոնղոլական ինքնիշխան պետության: Արիկ Բոգեն փորձում է պատժիչ արշավանք կազմակերպել, սակայն հաջողություն չի ունենում: Խուբիլայի համակրանքը շահելու և անհրաժեշտության դեպքում օգնություն ստանալու համար Ալգուն նրան հավատարմության երդում է տալիս: Խուբիլայն էլ նրան ճանաչում է Չաղաթայների ուլուսի ղեկավար, որը չեն ընդունում Ոսկե Հորդայի խան Բերկեն և Խուբիլայի ամենաոխերիմ հակառակորդ Կայդուն: 1266 թթ. Ալգույի մահից հետո երկրորդ անգամ խան է հռչակվում **Մուբարակ-շահը (1266)**, ով ընդունել էր իսլամ և հովանավորում էր մուսուլմաններին: Մուբարակ-շահի խան հռչակվելը կատարվել էր առանց Խուբիլայի համաձայնության, ուստի նա որպես խան ուղարկում է նրա զարմիկ Բարաքին: 1266 թ. աշնանը Մուբարակ-շահը պարտություն է կրում և կենտրոնասիական տիրույթների խան է հռչակվում **Բարաքը (1266-1270)**: Ըստ ձեռք բերված համաձայնության նա պետք է ենթարկվեր Ուզեդեյի թոռանը՝ Կայդուին, որին աջակցում էին նաև Ջուչիները: Այս ճանապարհով ուլուսում գերագույն իշխանությունը Չաղաթայների ընտանիքից անցնում է Ուզեդեյի ժառանգներին: **Կայդուի** օրոք (1269-1301) չինգիզյանների կենտրոնասիական պետությունը վերջնականապես վերածվում է քաղաքական ինքնիշխան միավորի, քանի որ 1269 թ. տեղի ունեցած դուրուլթայը ճանաչում է նրա անկախությունը: Կայդուն համարվում է չինգիզյանների տոհմի ամենահեղինակավոր առաջնորդներից մեկը, հայտնի էր որպես խիզախ ռազմիկ և հաշվենկատ քաղաքական գործիչ ու դիվանագետ: Երկրի սահմաններն ընդարձակելու նպատակով՝ նա ձեռնարկում է մի քանի արշավանքներ: Նա իր պետությանն է միացնում Հյուսիսային Աֆղանստանի տարածքների մեծ մասը, Միր-Դարյա գետով սահմանն անցնում էր Զենդի ու Ուզգենդի հյուսիս-արևմուտքով: Սակայն Արևելյան Թուրքեստանում նա որոշ տարածքներ զիջեց Խուբիլային, իսկ Ուզեդեյի ու Չաղաթայի ուլուսների միջև սահմանները ճշտված չէին: Կայդուն վախճան-

վում է 1301 թ. և խան է հռչակվում նրա որդի **Չապարը**: Սակայն վերջինս գահընկեց է արվում **Դուվա (1282-1307)** խանի կողմից և արդյունքում Կենտրոնական Ասիայում գերագույն իշխանությունը նորից անցնում է Չաղաթայների ընտանիքին:

XIV դ. Կենտրոնական Ասիայում տեղի էին ունենում էթնոքաղաքական ու կրոնական փոփոխություններ, որոնք մեծ ազդեցություն թողեցին այստեղ հաստատված մոնղոլների հետագա քաղաքականության վրա: Չաղաթայի ուլուսում կային բազում խնդրահարույց հարցեր, որոնք կապված էին ոչ միայն նրա հետ, որ ուլուսը շրջապատված էր ավելի ուժեղ ու հզոր հարևաններով, այլև բնակչության էթնիկական կազմի և տարաբնույթ մշակույթների առկայության հետ: Հայտնի է, որ դեռևս Չինգիզ խանի նվաճումների շրջանից մոնղոլական ռազմավարչական վերնախավի մոտ ձևավորվեց պետականության կազմակերպման երկու սկզբունք. **կենտրոնախույս** և **կենտրոնաձիգ**: Առաջինի կողմնակիցները հիմնականում մոնղոլական ավագանու ռազմականացված թևն էր, որն անընդհատ նվաճումների կողմնակիցն էր ու թյուրքական ազնվականությունն էր, որոնք պաշտպանում էին քոչվորական կացութաձևը, ուստի դեմ էին նստակեցությանն ու քաղաքային կյանքին: Իսկ երկրորդ սկզբունքի ներկայացուցիչները ձգտում էին նվաճված տարածքներում ստեղծել ուժեղ կենտրոնացված պետություն՝ Մեծ խանի գլխավորությամբ: Կենտրոնաձիգ քաղաքականության կողմնակիցներն էին քոչվոր ազնվականության այն մասը՝ պաշտոնյաները և տերության տարածքում առևտուր անող վաճառականները, որոնք, դեմ չլինելով հետագա նվաճումներին, հասկանում էին ուժեղ պետականության անհրաժեշտությունը: Այս երկու ուղղությունների միջև ընթացող պայքարը թեև առկա էր ողջ կայսրությունում, սակայն ավելի վառ դրսևորվում էր Կենտրոնական Ասիայում, քանի որ քոչվորական կացութաձևն ու ավանդույթներն այստեղ ավելի խորն էին: Կենտրոնական Ասիայում դարեր շարունակ անընդհատ պայքար էր ընթանում արևմտյան շրջանների նստակյաց բնակչության ու քոչվորների միջև: Փաստորեն մոնղոլների օրոք ևս այստեղ շարունակվում էր հակամարտությունը քոչվորության ու նստակեցության միջև, ինչը բնորոշ էր տարածաշրջանի նախկին՝ խորեզմշահերի և

կարակիդանների, պետություններին: Չաղաթայների պետությունում գերակայում էր քոչվորական կացութաձևը: Արտաքին սպառնալիքներին դիմակայելու և ներքաղաքական կյանքը կանոնակարգելու նպատակով՝ 1304 թ. առանձին իշխանություններ դաշինք են կնքում Մեծ խանի գլխավորությամբ համադաշնություն ստեղծելու համար, որը մնում է թղթի վրա: Արդյունքում Չաղաթայների խաներն իրենք են փորձում ռազմաքաղաքական ճանապարհով ստեղծել կենտրոնաձիգ պետություն, որը նրանց մասամբ հաջողվում է: Այսպես՝ 1307 թթ. ուլուսի առաջնորդ **Դուվայի** մահից հետո կառավարում են նրա վեց որդիները, որը եզակի դեպք էր Կենտրոնական Ասիայի միջնադարյան պատմության մեջ:

Պետության վերամիավորման և կենտրոնաձիգ իշխանության ստեղծման քաղաքականությունն սկսեց կյանքի կոչել Դուվայի ավագ որդի **Էսեն Բոզան (1310-1318)**, որը խան ընտրվեց 1310 թ. հատուկ այդ նպատակով հրավիրված դուրուլթայում (1307-1308 թթ. կառավարել էր Դուվայի որդիներից Կունչեկը): Անկախ գործադրած ջանքերի՝ նրան չհաջողվեց շոշոփելի արդյունքների հասնել, քանզի ստիպված էր անընդհատ պատերազմել արտաքին թշնամիների և կենտրոնախույզ ուժերի դեմ: Պետության հետագա կենտրոնացման և մուսուլմանական մշակույթի ու քաղաքական ավանդույթի ներմուծումը պետական կառավարման համակարգ շարունակեց Դուվայի մյուս որդին՝ **Կեբեկ խանը (1309-1310, 1318-1326)**: Նա հայտնի էր, որպես ուժեղ ու խելացի տիրակալ և կարողացավ իր իշխանության տակ միավորել Չաղաթայների տիրույթները և ապահովել ներքին կայունություն: Նա մեծ ուշադրություն է դարձնում տարանցիկ և ներքին առևտրին և շրջանառության մեջ դրեց արծաթե դրամ, որը նրա անունով կոչվեց **կեբեկի**: Սա կարելի է համարել Չաղաթայների պետության առաջին ընդհանրական դրամական միավորը: Կեբեկն ուշադրություն դարձրեց քաղաքային կյանքի կազմակերպմանը, ուստի վերակառուցեց ու բնակեցրեց **Բալխը**: Նա ձեռնարկեց մի շարք այլ բարեփոխումներ, որոնք նախնառաջ վերաբերում էին երկրի վարչաքաղաքական համակարգին: Նախկին ֆեոդալական իշխանությունների փոխարեն, պետությունը բաժանվեց վարչական փոքր միավորների՝ թումենների, որոնք կառավարում էին թյուրք և

մոնղոլ ազնվականության ներկայացուցիչները: Այս քայլով նա փորձում էր քոչվորական ազնվականությանը ներառել երկրի կառավարման համակարգում, որպեսզի ապահովի նրանց ենթակայությունը և ստեղծի վարչաքաղաքական աստիճանակարգություն:

Կեբեկի մահից հետո իրար հաջորդելով կառավարում են Տուվայի մյուս երեք որդիները՝ Էլջիգիդեյը, Դուվա Թեմուրը և Թարմաշիրին: **Էլջիգիդեյը (1326-1328/1329)** ևս հեթանոս էր և հիմնականում շարունակեց եղբոր քաղաքականությունը: Նրա կարճատև կառավարման տարիներին լայնածավալ շինարարական աշխատանքներ կատարվեցին. կառուցապատում են քաղաքները, ընդարձակում ոռոգման ցանցը: Նրան հաջողվում է երկիրը զերծ պահել ներքին ու արտաքին ցնցումներից: Էլջիգիդեյի մահից հետո գահ է բարձրանում **Դուվ(որ)ա-Թեմուրը (1328/1329-1330/1331)**, ում հաջողվեց կանոնավորել հարաբերություններն Իլխանների հետ: Սակայն ղրղզների դեմ հերթական արշավանքից վերադառնալուց հետո նա անսպասելի մահանում է և խան է հռչակվում **Թարմաշիրին (1331-1334)**: Նա ընդունում է մահմեդականություն և յուրացնում **Ալա ադ-Դին** անունը և իսլամը հռչակում պետության պաշտոնական կրոնը: Թարմաշիրին արշավանք է կազմակերպում դեպի Աֆղանստան ու Հնդկաստան, հասնում մինչև Դելի և հսկայական ավարով հետ վերադառնում: Սակայն նրա դեմ ապստամբություն են բարձրացնում մոնղոլական ազնվականության ռազմական թևի ներկայացուցիչները՝ Դուվա-Թեմուրի որդու՝ Բուզանի, գլխավորությամբ: Նրանք խանին մեղադրում են մոնղոլական ավանդույթները դավաճանելու մեջ: Հակառակորդների միջև վճռական ճակատամարտը տեղի է ունենում **Կուլի-Մենդակ** վայրում, որտեղ Թարմաշիրին պարտություն է կրում, դիմում փախուստի, սակայն շուտով գերի է ընկնում և սպանվում: Խան է հռչակվում **Բուզանը (1334-1335)**, որը հեթանոս էր, ուստի սկսում է հետապնդել մուսուլմաններին ու իսլամադավան չինգիզյաններին: Գործադրած դաժանությունների արդյունքում նրա դեմ ևս ապստամբություն է բարձրացվում և 1335 թ. Բուզանը սպանվում է:

Ապստամբների առաջնորդ **Խալիլ** արշավում է Ալմալիկ, սակայն քաղաքի բնակչությունը նոր խան է ընտրում **Ջանկշին**

(1335-1338), որը քոչվորական ավանդույթների կողմնակիցն էր: Իրավիճակը շտկելու նպատակով Խալիլն արշավում է Հերաթ, սակայն գերի է ընկնում, իսկ Ջանկշին կարողանում է իր իշխանությունը հաստատել ողջ երկրում, ամենայն հավանականությամբ 1336 թ.: Ջանկշին մայրաքաղաքը տեղափոխում է Ալմալիկ: Նա ավելի հանդուրժողական վերաբերմունք է դրսևորում քրիստոնեության նկատմամբ, ուստի նրա օրոք կաթոլիկ քարոզիչներն սկսում են եռանդուն գործունեություն ծավալել Չաղաթայների պետությունում:


Ջանկշինի կառավարումը երկար չի տևում, քանի որ 1338 թ. նոր ապստամբություն է սկսվում: Խանը գահընկեց է արվում և սպանվում հարազատ եղբոր՝ Յիսուն-Թեմուրի, կողմից, որն էլ դառնում է խան: Մեկ տարի անց **Յիսուն-Թեմուրը** կորցնում է բանակաությունը, որից էլ օգտվելով Ուգեդեյի ժառանգներից **Ալի-սուլթանը** նրան գահընկեց է անում և հռչակվում խան: Նա իսլամադավան էր, ուստի հովանավորում է մուսուլմաններին և հետապնդում քրիստոնյաներին: Ալիից հետո խան է ընտրվում **Մուհամմեդը**, ապա՝ **Ղազանը**: Վերջինս հայտնի էր որպես չափազանց դաժան տիրակալ: Նրա դեմ հանդես են գալիս թյուրքական էմիրները: Ղազան խանը պատերազմ է սկսում ապստամբների դեմ, սակայն 1347 թ. մարտերից մեկի ժամանակ սպանվում է: Քաղաքացիական պատերազմի արդյունքում Չաղաթայների պետությունը բաժանվում է երկու մասի: Ըստ էության, տարբեր էթնո-քաղաքական ու մշակութային հատվածների պայքարն էլ հանդիսացավ պետության տրոհման հիմնական պատճառներից մեկը: Չաղաթայների պետությունում անընդհատ պայքարում էին երկու ուղղություններ՝ քոչվորական-հեթանոսական և մուսուլմանական: Կենտրոնական Ասիայի արևելքի ու արևմուտքի միջև բևեռացված և չմիասնականացվող տարբերություններ կային: Նույնիսկ իսլամը, որը գերակայում էր Կենտրոնական Ասիայի շատ շրջաններում, ի վիճակի չէրավ համահարթեցնել այդ տարբերությունները և ձևավորել համեմատաբար միասնական սոցիալ-քաղաքական և մշակութային միջավայր: Այս պատճառով Չաղաթայների իշխանությունը գնալով թուլանում էր և նրանք պետք է հեռանային պատմության թատերաբեմից: Չաղաթայների ընտանիքին իշխանությունից զրկում է մեկ այլ մոնղոլ, որը չինգիզյանների

տոհմից չէր: Նրա անունն էր **Թիմուր** (Թեմուր), որը հայկական աղբյուրներում հիշատակվում է **Լենկ-Թեմուր**, իսկ եվրոպական՝ **Թամերլան** անվանումներով:

Լենկ Թեմուր անվան բացատրությունը հետևյալն է՝ լենկ կամ լանկ նշանակում է կաղ, իսկ թեմուրը վերցվել է թյուրքական դեմիր բառից, որը նշանակում է երկաթ: Թեմուրը սերում էր թյուրքացած մոնղոլական բարլաս ցեղից, որը մտել էր Չինգիզ խանի երկրորդ որդու՝ Չաղաթայի ուլուսի մեջ, իսկ ավելի ուշ Չաղաթայների պետության մեջ: XIV դ. վերջին նրան հաջողվեց ստեղծել մի հսկայական տերություն, որը տարածվում էր արևելքում մինչև չինական Մեծ պատը, հյուսիսում՝ Ռուսաստանի տափաստանները, հարավում՝ մինչև Գանգես գետ ու Պարսից ծոց, արևմուտքում՝ ներառում էր Իրանը, Հայաստանը՝ հասնելով Փոքր Ասիայի սահմաններին: Տերության մայրաքաղաքը Սամարղանդն էր:

1370 թ. Լենկ-Թեմուրը հռչակվում է Մավարաննահրի գերագույն կառավարիչ, իսկ ավելի ուշ հրավիրված դուրուլթայում ընտրվում է խան: **Թեմուրն (1370-1405)** իր իշխանության տակ միավորում է հսկայական տարածքներ և Չաղաթայների պետության արևմտյան մասում հիմնադրում է նոր **Թեմուրյանների** արքայատունը, որը կառավարում է մինչև XVI դ. սկիզբը:

Չաղաթայի արքայատունը



Ոսկե Հորդա

Ոսկե Հորդայի որպես պետության ծնունդը կապված է Չինգիզ խանի ավագ որդի Ջուչիի ուլուսի հետ: 1227 թ. Ջուչիի մահից հետո նրա տիրույթների, որոնք այդ ժամանակ տարածվում էին Արալից մինչև Արևելյան Եվրոպա, ժառանգորդն է դառնում **Բաթուն (1227-1255)**: Նրա գլխավորությամբ 1235-1241 թթ. նվաճումների արդյունքում առաջանում է մի հսկայածավալ պետություն, որը հայտնի է դառնում Ոսկե Հորդա անունով: Սկզբնական շրջանում «**ոսկե հորդա**» արտահայտությունն օգտագործվել է որպես խանական վրանի անվանում, որի վրա սովորաբար ոսկեկար նախշեր կային: Այս ձևով այն հիշատակվում է XIII դ. արևելյան տեքստերում, իսկ հին ռուսական աղբյուրներում այն գրանցվել է XVI դ. երկրորդ կեսից որպես թաթարական պետության անվանում (**Ոսկե Հորդա, Մեծ Հորդա**), ուստի դառնում է քաղաքական հասկացություն: Մինչ այդ ռուսները մոնղոլական պետությանն անվանում էին Հորդա կամ Թաթարներ, իսկ բնակչությանը՝ թաթարներ: Պետությունը պաշտոնական ստանում է, ինչպես բնորոշ է քոչվորական քաղաքակրթությանը, հիմնադիրի անունով **Ջուչիի Ուլուս կամ Մեծ Ուլուս** անվանումը:

Ոսկե Հորդան Արևելքում ընդգրկում էր Միբիբը և Իրտիշով բաժանվում էր բուն Մոնղոլիայից՝ հասնելով Օբ գետի միջին հոսանքը: Հյուսիսային սահմանն սկսվում էր Ալթայի նախալեռներից, Բալխաշ լճով ձգվում արևելք Միր-Դարիայի միջին հոսանքով, Արալյան ծովով մինչև Խորեզմ: Կասպից ծովի արևմտյան ափին սահմանային քաղաքը Դերբենդն էր, այստեղ սահմանը ձգվում էր Կովկասյան լեռնաշղթայով մինչև Թամանի թերակղզի: Սև ծովից արևմուտք սահմանը ձգվում էր Դանուբի երկայնքով՝ մինչև հունգարական հողեր: Այս շրջանում հյուսիսային սահմանը հասնում էր Կարպատներ և ընդգրկում Պրուտ-Դնեստր գետերի ավազանները: Ռուսական հողերը Ոսկե Հորդայի վարչատարածքային սահմաններում չէին, այլ վասալական տարածքներ էին: Ուլուսի քոչվոր բնակչության մեծամասնությունը թյուրքեր էին: Ոսկե Հորդայի մայրաքա-

ղաքն սկզբում **Սարայն** էր (**Սարայ Բաթուն**), ապա՝ **Նոր Սարայը** (**Սարայ Բերկեն**):

1255 թ. Հին Սարայում վախճանվում է Բաթուն, այնուհետև նրա երկու որդիները՝ **Սարտախը** (1255-1256) և **Ուլագչին** (1256-1257): Մունկեն Ոսկե Հորդայի խան է նշանակում Բաթուի եղբորը՝ **Բերկեյին (1257-1266)**: Այս ժամանակ Ջուչիի ուլուսը շարունակում էր մնալ Մոնղոլական տերության ռազմավարչական միավոր, որը քաղաքական ինքնուրույնություն է ձեռք բերում միայն Բաթուի թոռան՝ **Մունկե-Թեմուրի**, կառավարման շրջանում: Ոսկե Հորդայի առաջին տիրակալների օրոք ձևավորված վարչաքաղաքական կառույցն ու պետական կառավարման համակարգը հիմնված էր քոչվորական քաղաքակրթության տարածքային կազմակերպման հիմնական սկզբունքների վրա, մասնավորապես այստեղ ևս կիրառվեց պետության թևերի և ուլուսների բաժանման տարբերակը:

Խան դառնալուց հետո Բերկեն Բուրունգային և Նոդային ուղարկում է ճնշելու գալիցյան իշխան Դանիելի ու նրա որդու բարձրացրած ապստամբությունը, որը զորավարները հաջողությամբ կատարում են: Հարավային Կովկասի համար Բերկեն պայքարում էր Հուլավույի դեմ, քանի որ այդ տարածքների նվաճումը Մունկեն ժամանակին հանձնարարել էր Բաթուին: Բացի այդ՝ նրա սրտով չէր Հուլավույի ընդգծված հակաիսլամական կողմնորոշումը, քանի որ ինքն ընդունել էր մահմեդականություն: Մունկեի մահից հետո Բերկեն Մեծ խան դառնալու պայքարում աջակցում էր Արիկ Բոգեյին, ուստի թշնամացավ Խուբիլայի և Հուլավույի հետ: Բերկեն և Հուլավուն պայքարում էին նաև նախկին բյուզանդական փոքրասիական, մասնավորապես Սև ծովի հարավային շրջաններում ազդեցության համար: Հուլավույի դեմ պայքարում նա որոշ հաջողությունների է հասնում: Ոսկե Հորդայի զորքերը հասնում են մինչև Կուր գետը, սակայն 1266 թ. նրա մահից հետո նահանջում են և երկու ուլուսների միջև սահմանը դարձյալ մնում է Կովկասյան լեռնաշղթան:

Բերկեն արու զավակ չունեի և նրա մահից հետո դուրուլթայը նոր խան է ընտրում Բաթուի թոռանը՝ **Մունկե Թեմուրին (1266-1282)**, որը ևս իսլամի հետևորդ էր, ուստի շարունակվում է Ոսկե Հորդայի և Իլխանության ոչ միայն տարածքային, այլև կրոնաքաղա-

քական հակամարտությունը: Երկու կողմերն էլ աշխատում էին գտնել համապատասխան դաշնակիցներ: Ոսկե Հորդան դաշինք կնքելու նպատակով բանակցություններ էր վարում Եգիպտոսի, Վենետիկի և Արագոնայի թագավոր **Ալֆոնս III Արագոնացու** (1285-1291), իսկ Իլխանությունը՝ Ջենովայի, պապականության, Ֆրանսիայի թագավոր Լյուդովիկոս IX-ի և Սիցիլիայի թագավոր Կառլոս I-ին Անժուացու (1268-1282) հետ: Ոսկե Հորդանյի ամենաիրական դաշնակիցը Եգիպտոսն էր, սակայն 1277 թ. Բեյբարսի մահից հետո նոր սուլթան **Մայֆուդդին Կալաուն (1280-1290)** շահագրգռված չէր իլխանների դեմ պատերազմով, ուստի ռազմական գործողություններն առժամանակ դադարեցվում են: Երկու կողմերի գործադրած ջանքերն ի դերն ելան, քանզի դաշինքներն այդպես էլ չձևավորվեցին:

Մունկե Թեմուրը մահանում է 1282 թ. և դուրսվախում նոր խան է ընտրվում **Թուղա Մունկեն (1282-1287)**, որը 1283 թ. ընդունում է իսլամ: Նրա օրոք իրական իշխանությունը գտնվում էր **Նոդայի** ձեռքում, որը երկու արշավանք է ձեռնարկում Հունգարիա ու Հարավային Լեհաստան՝ ասպատակելով, կողոպտելով ու ավերելով քաղաքներն ու գյուղերը: Շուտով Թուղա Մունկեն կորցնում է հետաքրքրությունն աշխարհիկ կյանքի նկատմամբ, դառնում է դերվիշ և հրաժարվում իշխանությունից՝ հօգուտ իր զարմիկ **Թուլա Բուգային (1287-1291)**: Նա անընդհատ պատերազմում էր, առանց արդյունքի, ուստի Նոդայի հրամանով նրան բռնում և հանձնում են իր մրցակից Մունկե Թեմուրի որդի **Թողթային**: Վերջինս նրան մահապատժի է ենթարկում, որից հետո Նոդան նրան հռչակում է խան: Սկզբում Թողթան կառավարում էր իր եղբայրների հետ, իսկ Նոդան իր տոհմով իշխում էր Դրիմում: Փաստորեն ձևավորվում է թաթարական երկու կենտրոն, ինչն էլ լուրջ հետևանքներ ունեցավ տարածաշրջանի պատմության հետագա ընթացքի վրա: Թողթան վիճում է եղբայրների հետ և ապաստանում Նոդայի մոտ՝ խնդրելով նրա աջակցությունը: Շուտով Նոդայի օգնությամբ Թողթան վերականգնում է իր իրավունքները, սակայն որոշ ժամանակ անց հանդես է գալիս Նոդայի դեմ: Նա հակառակ դիրքորոշում է որդեգրում ռուսական մեծ իշխանի ընտրության և Վենետիկի ու Ջենովայի միջև ընթացող

պատերազմում կողմերից որևէ մեկին օգնելու վերաբերյալ հարցերում: Արդեն 1297 թ. Նոդան ու Թողթան բացահայտ հանդես են գալիս միմյանց դեմ: Կողմերի միջև առաջին ճակատամարտը տեղի է ունենում **Պրուտ** գետի ափին, որտեղ Նոդան հաղթանակ է տանում, սակայն Թողթային գերել չի հաջողվում: Երկու տարի անց տեղի է ունենում երկրորդ բախումը, որտեղ Նոդայի զորքը ջախջախվում է և ինքն էլ սպանվում է: Թողթան Դրիմում կառավարիչ է նշանակում իր երկու որդիներին: 1303 թ. Ղազան իլխանից պահանջում է Հարավային Կովկասում տարածքային զիջումներ կատարել, սակայն մերժում է ստանում: Թողթան պատրաստվում է հանդես գալ իլխանի դեմ, սակայն չի կարողանում ստանալ Եգիպտոսի սուլթան Ալ-Մալիք ալ-Նազիրի աջակցությունը և որևէ հաջողության չի հասնում: Նա մահանում է 1312 թ.՝ գահը թողնելով **Դիյաս ուդ-Դին Մուհամմադ Ուզբեկին (1312-1341)**:

Ուզբեկը դավանում էր իսլամ, սակայն աշխատում էր հավատարիմ մնալ մոնղոլական ավանդույթներին և հետևում էր Յասայում ամրագրված նորմերին: 1328 թ. նա մեծ իշխան է նշանակում Մոսկվայի իշխան **Իվան Կալիտային**, որից հետո այս տիտղոսը կրում են մոսկովյան իշխանները, որոնք էլ գլխավորում են մոնղոլների դեմ ուղղված ազատագրական պայքարը: Հյուսիս-Արևմուտքում Ուզբեկը զսպում է լիտվական իշխանների տարածքային հավակնությունները Հունգարիայի, Լեհաստանի և Արևմտյան Ռուսիայի նկատմամբ: Ռազմական գործողություններ է իրականացնում նաև Կովկասում և իր կառավարման վերջին տարիներին հասնում զգալի հաջողությունների՝ զրավելով Ասորպատականը: Ուզբեկը փորձում էր վերականգնել կենտրոնական իշխանության իրավունքները ծայրամասերում և փորձում է ճնշել կենտրոնախույս ձգտումները: Նա արտահայտում էր թյուրք-մոնղոլական ազնվականության այն հատվածի շահերը, որոնք կողմնակից էին պետության կենտրոնացմանն ու մահմեդականացմանը: Ուզբեկ խանի կառավարումը կարելի է նշել երեք առանձնահատկություններով. 1. 1314 թ. Ուզբեկ խանն ընդունում է մահմեդականություն, անվանակոչվելով **Մուլթան Մուհամմադ Ուզբեկ**, և իսլամը հայտարարում է Ոսկե Հորդայի պետական կրոնը: 2. Մուսուլմանական տեքստերում 1335 թ. առա-

ջին անգամ օգտագործվում է ուզբեկ (ուզբեկներ) եզրույթը՝ համապատասխանաբար ուզբեկների պետություն քաղաքական հասկացության: Ուզբեկ բառը կիրառվում է որպես Ոսկե Հորդայի բնակչության ընդհանրական անվանում: 3. Նրա օրոք ամրապնդվում է կենտրոնական իշխանությունը և Ոսկե Հորդան ստանում է մուսուլմանական պետականությանը յուրահատուկ մի շարք հատկանիշներ:

Ուզբեկին հաջորդում է որդին՝ **Ջանիբեկը (1342-1357)**, որի կառավարման շրջանից Ոսկե Հորդան սկսում է աստիճանաբար տրոհվել և անկում ապրել: Թեև Ջանիբեկին հաջողվեց գրավել Թավրիզը և Խորեզմից գորք ուղարկել Խորասան, սակայն այս հաջողությունները ժամանակավոր բնույթ էին կրում: 1357 թ. Ատրպատականից վերադառնալիս Ջանիբեկն անսպասելի մահանում է: Նրա որդի **Բերդիբեկն (1357-1359)** անմիջապես դադարեցնում է արշավանքները, վերադառնում է և իրեն հոչակում խան:

1359 թ. Բերդիբեկն սպանվում է, որն էլ հանգեցնում է քաղաքական ճգնաժամի: Արյունալի կռիվներ են սկսվում թաթար-թյուրքական ռազմաքաղաքական վերնախավի տարբեր խմբավորումների միջև, որի ընթացքում Ոսկե Հորդայի տարածքում ձևավորվում են մի շարք անկախ պետություններ: Օգտվելով ստեղծված իրավիճակից՝ լիտվական իշխաններն իրենց ազդեցությունը տարածում են մինչև Դոբրուջա, Դնեստր և անգամ Կիև, սակայն չեն կարողանում վերջնական հաղթանակի հասնել մոսկովյան իշխանների նկատմամբ: Երկպառակտչական կռիվների հետևանքով Ոսկե Հորդայի Արևմուտքը մասնատվում է՝ Մամայը հաստատվում է Ղրիմում, Հաջի-Սարկիսը՝ Աստրախանում և Ուրուս-խանը՝ Սարայում: Այս նույն ժամանակաշրջանում անկում էր ապրում Չաղաթայների պետությունը և ներառվել էր Լենկ-Թեմուրի տերության կազմում: Վերջինիս մայրաքաղաք Մամարղանդում ապաստանել էին Ուրուս-խանի զարմիկ **Թողթամիշը** և գորավար **Էդիգեյը**, որոնց միջոցով Թեմուրը խառնվում է Ոսկե Հորդայի ներքին գործերին: Ուրուս-խանը Թեմուրից պահանջեց նրանց հանձնել իրեն, սակայն մերժում ստացավ և նախապատրաստվեց հարձակվել Խորեզմի վրա: Թեմուրն իր հերթին որոշում է աջակցել իր նոր վասալ Թողթամիշին: 1377 թ. այս

երկու բանակների հանդիպումից առաջ Ուրուս-խանը վախճանվում է և Թեմուրի աջակցությամբ Թողթամիշը գրավում է Աստրախանը, ապա՝ Սարայն ու փորձում վերականգնել Ոսկե Հորդայի քաղաքական միասնությունը:

Թաթարների շրջանում ծայր առած երկպառակտչական կռիվներից օգտվում է Մոսկվայի և Վլադիմիրի մեծ իշխան **Դիմիտրի (1359-1389)**: Նա 1378 թ. Ռյազանից հյուսիս՝ Վոժ գետի ափին, գլխավին ջախջախում է Մամայի ուղարկած զորքին: **1380 թ. սեպտեմբերի 8-ին Դոն գետի ափին՝ Կուլիկովոյի դաշտում**, տեղի ունեցած ճակատամարտում Դիմիտրիի գլխավորությամբ ռուսական զորքը պարտության է մատնում Մամայի բանակին: **1381 թ. Կալկա գետի ափին Թողթամիշը** պարտության է մատնում Մամային, որը փախչում է Կաֆա և ավելի ուշ սպանվում: Թողթամիշից երկար ժամանակ է պահանջվում ռուս իշխաններին կրկին հնազանդեցնելու համար: 1382 թ. նա պաշարում ու գրավում է Մոսկվան: Փաստորեն Թողթամիշն իր իշխանության տակ վերամիավորում է Ոսկե Հորդան: Սակայն շուտով նա անխոհեմաբար հանդես է գալիս Թեմուրի դեմ և հավակնություններ ներկայացնում Կենտրոնական Ասիայի նկատմամբ: Թեմուրը ռազմական գործողություններն Իրանից տեղափոխում է հյուսիս և հարձակվում Թողթամիշի վրա: Պատերազմը շարունակվում է երկար տարիներ և ավարտվում է 1395 թ. Թողթամիշի պարտությամբ ու գահընկեցությամբ: Ոսկե Հորդայի դիրքերը թուլացնելու նպատակով Թեմուրը նշանակում է ոչ թե մեկ, այլ մի քանի խաների: Այսինքն, ուլուսում չկար միասնական, կենտրոնական իշխանություն: Թողթամիշը փորձում է դաշնակցել ռուսների հետ, սկսում է հովանավորել ռուս իշխաններին և նրանց տալ լայն իրավունքներ ու արտոնություններ: Սակայն նրա հույսերը չարդարացան՝ կապված օսմանյան թուրքերի ու Եգիպտոսի մամլուքների հետ, քանզի նրանք պատրաստվում էին դիմակայել Թեմուրին և չէին կարող ռազմական օգնություն ցույց տալ Թողթամիշին: 1394 թ. Թողթամիշը ներխուժում է Կովկաս, սակայն պարտություն է կրում Թեմուրից: Վերջինս նպատակ չունեց գրավելու ռուսական հողերը, սակայն, Թողթամիշին թուլացնելու նպատակով, ասպատակում և ավերում ու թալանում է Աստրախանում, Սարայում, Բուլղարիա-

յում և Ղրիմում բնակվող Թողթամիշին հավատարիմ քոչվորների բնակավայրերը, ապա՝ ուղևորվում Հնդկաստան:

Երկպառակոչական կոիվների հետևանքով Ոսկե Հորդան տրոհվում է ավելի փոքր միավորների և ասպարեզ են գալիս խանական տիտղոսի նոր թեկնածուներ, որոնց օգնում ու հովանավորում էին Լեհաստանը, Լիտվան և Մոսկվայի իշխանությունը: Այսպես՝ արևելքում Լիտվիայի աջակցությամբ խան է հռչակվում Թողթամիշի գարմիկ **Ուլու-Մուհամմադը**: Վերջինիս հակառակորդներն էին Թողթամիշի որդիները՝ Կեպեկը և Դեվլեթ-Բերդին: Շուտով խանի տիտղոսի համար պայքարին միանում է նաև Ուրուս-խանի թոռ Բարաքը: 1425 թ. Դեվլեթ-Բերդին գրավում է Ղրիմը:

Ուլու-Մուհամմադը մոսկովյան մեծ իշխան է հաստատում **Վասիլի II-ին (1425-1433, 1447-1462)**: Շուտով Ուլու-Մուհամմադն սպանվում է ավագ որդու՝ Մահմուդի կողմից, որն էլ 1445 թ. հռչակվում է Կազանի խան: Ուլու-Մուհամմադի ենթայակության տակ գտնվող թաթարների մի մասը նրա մահից հետո միանում են Թողթամիշի որդի Սայիդ-Ահմեդին և շարունակում են իշխել Ղրիմում: Մոսկվայում Սայիդ-Ահմեդին ընդունում էին որպես խան և հարկ վճարում: Սայիդ-Ահմեդը 1449 թ. ներխուժում է լիտվական տիրույթներ և գրավում է Սեվերսկն, ապա՝ Կիևը: Ի պատասխան դրան՝ լեհական թագավոր և Լիտվիայի մեծ իշխան **Կազիմիր IV-ը (1440-1492)** սկսում է աջակցել Սայիդ-Ահմեդի մրցակից **Հաջի-Գիրեյին**, որն էլ գրավում է Ղրիմը՝ հաստատելով **Գիրեյների դինաստիան**:

1449 թ. Սայիդ-Ահմեդը զորք է ուղարկում Մոսկվա, սակայն հաջողության չի հասնում: 1451 և 1459 թթ. արշավանքները ևս ավարտվում են անարդյունք: Ղրիմում Հաջի-Գիրեյն այնքան է հզորանում, որ հավակնում է իշխանության դփչադական տարածքների նկատմամբ: 1466 թ. նրա մահից հետո ժառանգորդն է դառնում որդին՝ **Մենգլի-Գիրեյը**: Այս ժամանակ Մեծ Հորդան, ինչպես սկսել էին այն անվանել ժամանակակիցները, սկսում է վերելք ապրել Քուչուք-Մեհմեդի որդի **Ահմեդի** ղեկավարությամբ: Մոսկովյան իշխան **Իվան III-ը (1462-1505)** դաշինք էր կնքել Տվերի իշխան Միխայիլի հետ՝ ընդդեմ թաթարների: Մակայն սա չխանգարեց, որ Ահմեդն արշավի Կին և Վոլին: Կազիմիր IV իր հերթին այլևս չէր վստահում Ղրիմի

խանին և 1471 թ. պայմանավորվում է Ահմեդի հետ դեպի Մոսկվա համատեղ արշավանքի համար: 1472 թ. Ահմեդը մոտենում է Մոսկվային, սակայն Կազիմիրի կողմից խոստացված օգնությունը չի ստանում և ստիպված նահանջում է: 1475 թ. Իվան III-ը հարձակվում է Կազիմիրի տիրույթների վրա և նրան աջակցում էր Մենգլի-Գիրեյը: 1476 թ. Ահմեդը և նրա որդի Ջանիբեկը հարձակվում են Մենգլի-Գիրեյի վրա, որը ստիպված ապաստան է գտնում թուրքական սուլթանի մոտ և այս ժամանակից Թուրքիան դառնում է Գիրեյների դաշնակիցը: Ահմեդը կրկին փորձում է գրավել Մոսկվան, սակայն դարձյալ անհաջողության է մատնվում: 1480 թ. Իվան III-ը համաձայնության է գալիս Մենգլի-Գիրեյի հետ՝ համատեղ գործողություններ սկսել Ահմեդի և Կազիմիրի դեմ: Այս շրջանում էլ Ահմեդը հերթական անգամ արշավանք է ձեռնարկում դեպի Մոսկվա, սակայն Կազիմիրը դարձյալ խոստացված օգնությունը չի տրամադրում, ուստի այս արշավանքը ևս ձախողվում է: Իսկ Մենգլի-Գիրեյն Ահմեդին հետապնդում է մինչև շեյքանիդների տարածքներ, որտեղ էլ վերջինս սպանվում է:


1482 թ. Իվան III-ը Կազիմիրի վրա հարձակվում է հյուսիսից, իսկ Մենգլի-Գիրեյը՝ Կինի ու Պոդոլիայի տարածքներից: Այս շրջանում Լիտվիային սպառնում էին նաև թուրքերը: Կազիմիրը դիմում է Մեծ Հորդայի օգնությանը, որտեղ կառավարում էին Ահմեդի որդիներ **Սուրտեզը և Շեյխ-Ահմեդը**: Սակայն 1485 թ. Ղրիմի թաթարները հաղթանակ են տանում Մեծ Հորդայի զորքի նկատմամբ և գերի վերցնում Մուրտեզին, ում հաջողվում է փախչել: Ստեղծված իրավիճակից օգտվում է Իվան III-ը և Ղրիմի խանի հետ դաշինք կնքում ընդդեմ Մեծ Հորդայի, քանի որ վերջինիս էր համարում իր հիմնական թշնամին:

1492 թ. Իվան III-ը և Մենգլի-Գիրեյը որոշում են համատեղ գործողություններ սկսել Մեծ Հորդայի դեմ: Մրան ի պատասխան՝ նույն թվականին վերահաստատվում է մոնղոլների ու լիտվացիների դաշինքը, որը շարունակում է Կազիմիրի ժառանգորդ **Ալեքսանդրը (1492-1506)**: 1493 թ. թաթարական բանակը ռազմական գործողություններ է սկսում Ալեքսանդրի դեմ: Պերեկոպի մոտ հաջողվում է թաթարներին կանգնեցնել, սակայն խզվում է կապը Մոսկվայի ու

Ղրիմի միջև: Իվան III-ը փորձում էր կարգավորել հարաբերությունները Ալեքսանդրի հետ, սակայն դրան խանգարում էր դաշնակցային պարտավորությունները Մենգլի-Գիրեյի նկատմամբ: Բացի այդ՝ Ալեքսանդրն առաջարկում է Շեյխ-Ահմեդին համատեղ գործողություններ սկսել Ղրիմի դեմ: Հաղթանակի դեպքում Իվան III-ը կհայտնվեր ռազմաքաղաքական մեկուսացման մեջ: Սակայն լեհերն ու լիտվացիները վճռական գործողությունների չդիմեցին, ինչից էլ հնտոքեն օգտվեց Մենգլի-Գիրեյը: 1502 թ. նա տեղյակ պահեց Իվան III-ին, որ արշավում է Մեծ Հորդայի դեմ: Մենգլի-Գիրեյը պարտության է մատնում Շեյխ-Ահմեդին: Վերջինս փախչում է Աստրախան, այնուհետև՝ Լիտվա: Ալեքսանդրը՝ հասկանալով, որ Շեյխ-Ահմեդից այլևս սպասելիք չունի, նրան մահապատժի է ենթարկում: Մենգլի-Գիրեյը գրավեց Սարայը և **1502 թ. Մեծ Հորդան** դադարեց գոյություն ունենալուց:

Մեծ Հորդայի տարածքում ձևավորված խանությունների դեմ պայքարն սկսում է հանգուցալուծում ստանալ **Իվան IV-ի (1533-1584)** օրոք, որը վերջնական հաղթանակ է տանում թաթարների դեմ: **1552 թ.** նա գրավում է **Կազանի խանությունը**, իսկ **1556 թ.**՝ **Աստրախանի խանությունը**: **1598 թ.** Ռուսաստանին է միանում **Սիբիրի խանությունը** և մնում է միայն Ղրիմը: Գիրեյների դինաստիան դեռ երկար ժամանակ իշխում է Ղրիմում: 1571 թ. Ղրիմի թաթարներն արշավանք են կազմակերպում դեպի Մոսկվա և պահանջում հարկ վճարել, որն էլ ժամանակ առ ժամանակ կատարվում էր մինչև Պյոտր I-ի (1682-1721) գահակալումը: Մինչև 1774 թ. Ղրիմի խանությունը փաստացի համարվում էր Թուրքիայի ազդեցության շրջան, ուստի ռուս-թաթարական փոխհարաբերություններում Ռուսաստանը ստիպված հաշվի էր առնում այս գործոնի ռազմաքաղաքական դերակատարությունը և հաճախ խուսափում էր ռազմական առճակատումից և աշխատում էր խանության տարածքները միավորել խաղաղ ճանապարհով: Այս բարդ խնդիրը լուծեց Եկատերինա II-ը (1762-1796) և **1783 թ.** Ղրիմի խանությունն անցավ Ռուսաստանին:

Ջուլիի արքայատունը



Հուլավյաններն Իրանում

Մունկե Մեծ խանի մահից հետո Իրանում հաստատված մոնղոլները որդեգրեցին քաղաքական զարգացման այնպիսի ուղի, որը հատուկ չէր մյուս ուլուսներին և պայմանավորված էր նվաճված տարածքների էթնո-քաղաքական և մշակութային կյանքի կազմակերպման առանձնահատկություններով: **Հուլավուն (Հուլադու)** իր գրաված ընդարձակ տարածքների վրա ստեղծեց առանձին ուլուս, որը 1261 թ. ճանաչեց Մեծ խան Խուբիլայը: Նա Հուլավուին շնորհեց **իլ-խան**, այսինքն՝ ցեղի կամ ուլուսի խան տիտղոսը, որտեղից էլ այս պետության անվանումը՝ Բլխանություն (1256-1335): Բլխանությունն ընդգրկում էր հսկայական տարածքներ. Իրանը, Մերվի օազիսը, Հերաթի շրջանը և ներկայիս Աֆղանստանը (բացի Բալխի շրջանից, որը Մավարանսահրի հետ պատկանում էր Չաղաթայներին), Արաբական Իրաքը, Ատրպատականը, Արբանը, Շիրվանը, Հայաստանը, Ջեզիրեն (Վերին Միջագետքը) և Փոքր Ասիայի արևմտյան մասը՝ մինչև Քըզըլ-Իրմակ գետը: Ոսկե Հորդայի հետ նրա սահմանը հանդիսանում էր Հյուսիսային Կովկասի լեռնաշղթան: Ասորիքի հետ Հուլավյանների սահմանը հանդիսանում էր Եփրատ գետը, հարավում բնական սահման էր Պարսից ծոցը, հարավարևելքում սահմանակցում էր հնդկական իշխանությունների հետ, իսկ Արևելքում Չաղաթայների պետության հետ սահմանն անցնում էր Ամու-Դարյա գետով: Հուլավյանների գերիշխանությունն ընդունում էին Ռումի սելջուկյան սուլթանությունը, Վրաստանը, Շիրվանշահերի պետությունը, Տրապիզոնի կայսրությունը, Կիլիկյան Հայաստանը, Կիպրոսի թագավորությունը և Աֆղանստանի տարածքում հաստատված Քուրտերի իշխանապետությունը: Բլխանության նկատմամբ թշնամաբար էին տրամադրված Ոսկե Հորդան, Չաղաթայների պետությունը, Եգիպտոսի ու Ասորիքի մամլուքյան սուլթանությունը: Ոսկե Հորդայի խաները գտնում էին, որ Հուլավյանները նվաճում են այն տարածքները, որոնք Մեծ առաջնորդի կտակով պետք է մտնեին Ջուչիի ուլուսի մեջ: Մյուս կողմից, Ոսկե Հորդայի խան Բերկեն, ով ընդունել էր իսլամ և իրեն հռչակել մուսուլմանների պաշտպան, 1258 թ. Բաղդատի գրավումից հետո պատերազմ

սկսեց Հուլավույի դեմ: Մոնղոլական երկու բանակների միջև ճակատամարտը տեղի ունեցավ **1262 թ. Դերբենտի** մոտ, թեև Բերկեն հաղթանակ տարավ, սակայն Կովկասյան լեռնաշղթան չանցավ:

Մերձավոր Արևելքում ռազմաքաղաքական գերիշխանության համար Բլխանությունն ստիպված էր երկարատև պատերազմներ մղել Եգիպտոսի մամլուքյան սուլթանության դեմ: Այս պայքարում Հուլավյանները փորձում էին դաշնակցել Խաչակրաց Արևելքի և արևմտաեվրոպական երկրների հետ: Ասորիքի համար մղվող պայքարում մամլուքների և մոնղոլների միջև վճռական ճակատամարտը տեղի է ունենում 1260 թ. սեպտեմբերի 3-ին **Այն-Ջալութի** հովտում: Մամլուքներին հաջողվում է շրջափակման մեջ վերցնել մոնղոլներին և հաղթանակ տանել: Մոնղոլական բանակի հրամանատար Քիտբուղան գերի է ընկնում և գլխատվում: Մոնղոլները նահանջում են մինչև Եփրատ գետը, որն Բլխանության սահմանափակումն էր Եգիպտոսի տարածքներից: Մերձավոր Արևելքի համար մոնղոլ-եգիպտական պայքարը հետագայում ևս շարունակվեց:

Հուլավյանների մոտ ևս, ինչպես մոնղոլական մյուս ուլուսներում, բարձրագույն իշխանությունը պատկանում էր խանին (իլ-խանին): Նրա ռազմական հենարանը մոնղոլներից ու թյուրքերից կազմված հեծելազորն էր, որին պատերազմի ժամանակ միանում էր վասալների տրամադրած զորքը: Բլխանության տարածքը բաժանված էր մոնղոլական զինվորական վերնախավի միջև և հողը տրվում էր միայն զինվորական ծառայության դիմաց: Քաղաքացիական հարցերով զբաղվում էին վեզիրները, որոնք հիմնականում պարսիկներ էին: Ընդհանրապես իլխանները մեծապես օգտվում էին պարսիկների տարաբնույթ ծառայություններից, մասնավորապես պետական կառավարման համակարգում, ուստի Իրանում մոնղոլական քոչվորական քաղաքակրթությունը համադրվեց տեղականի հետ: Փաստորեն ինչպես մյուս ուլուսներում, այստեղ ևս մոնղոլները բարձր պաշտոններ էին զբաղեցնում հիմնականում բանակում, իսկ քաղաքացիական իշխանությունը մնում էր տեղացիներին: Կենտրոնական կառավարման համակարգում առաջնային տեղում գանձարանն էր: Եկամուտներն ու ծախսերը վերահսկում էր մեծ վեզիրը (սահիբ-ի դիվան), իսկ ավելի ուշ դա հանձնվեց երկու վեզիրների:

Բլխանության տարածքում օգտագործում էին ոսկե դինար և արծաթե դիրհամ, որոնք ժառանգել էին Արաբական խալիֆայությունից: Հատուկ տեղ էր հատկացվում հարկահանությանը, որի ողջ ծանրությունն ընկած էր նստակյաց բնակչության ուսերին: Վերջիններս բազմապիսի հարկեր վճարելուց զատ պետության օգտին կատարում էին հարկադիր աշխատանք: Հարկերը զանազան էին ինչպես դրամով, այնպես էլ բնամթերքով:

Բլխանության արքունիքի կազմակերպումը համապատասխանում էր քոչվորական քաղաքակրթության սկզբունքներին: Բլխանները տարվա մեծ մասն անց էին կացնում ռազմական արշավանքներում, իսկ մյուս օրերը՝ սովորաբար Բաղդատում կամ մայրաքաղաքում, որը սկզբում **Մարաղան** էր, այնուհետև՝ **Թավրիզը**, իսկ XIV դ. սկզբից՝ նոր հիմնադրված **Սուլթանիեն**: Բլխանները ջուրացրին խալիֆի տիրադատը և Բաղդատը նրանց համար մնաց որպես զվարճանքի ու հանգստանալու վայր: Նրանք հանդուրժողական վերաբերմունք ունեին մյուս կրոնների նկատմամբ, մինչև որ կրոնը դարձավ քաղաքական կողմնորոշման կարևոր բաղադրիչներից մեկը, ինչից էլ օգտվելով իսլամն ամրապնդեց իր դիրքերն իլխանության արքունիքում:

Բլխանության հիմնադիր **Հուլավուն (1256-1265)** կրոնական հարցերում այնքան էլ հանդուրժողական չէր, ինչպես մոնղոլական խաների մեծ մասը: Նա բացահայտ չէր հալածում մուսուլմաններին, սակայն դեմ էր իսլամին: Հուլավուն ընդունում է բուդդայականություն, սկսում է կառուցել բուդդայական տաճարներ և հովանավորում էր դրա տարածումը: Միաժամանակ նա հովանավորում էր քրիստոնյաներին, որը բացատրվում է նրանով, որ նրա ամենասիրելի կինը և խորհրդականը՝ **Դոքուզ-խաթունը**, քրիստոնյա էր: Վերջինս իլխանության տարածքում կառուցեց ու վերակառուցեց եկեղեցիներ: Նա հատուկ վերաբերմունք ուներ և հովանավորում էր հայոց եկեղեցուն: Հուլավուն մեծ ուշադրություն էր դարձնում գիտության ու մշակույթի զարգացմանը: 1259 թ. հայտնի պարսիկ մաթեմատիկոս ու աստղագետ **Նասիր-ադ-դին Թուսի** գլխավորությամբ Մարաղայում նա կառուցեց աստղադիտարան: Եթե պետության կառավարման համակարգում շարունակում էր պահպանել քոչվորական

ավանդույթը, ապա մշակութային կյանքի կազմակերպման բնագավառում Հուլավուն աշխատում էր ուլուսի ռազմավարչական սահմաններում ներառված մշակույթները համադրել մոնղոլականի հետ: Արդյունքում Իրանում հաստատված մոնղոլներն ստեղծեցին յուրօրինակ մշակութային միջավայր, որը տարբերվում էր մյուս ուլուսներում ձևավորված մշակույթներից:

Հուլավունի հաջորդեց որդին՝ **Աբաղան (1265-1282)**, որը շարունակեց հոր արտաքին քաղաքականությունը: Նրա օրոք ավելի սրվեցին փոխհարաբերությունները Ոսկե Հորդայի հետ: Վերջինիս գործը ներխուժել էր Կովկաս և երկարատև պայքարից հետո Աբաղային հաջողվեց նրանց դուրս քշել Հուլավյանների տիրույթներից: Արևելքում 1270 թ. Չաղաթայների ընտանիքից Բարաքը հարձակվեց Խորասանի վրա: Նա անհաջողության մատնվեց, փախավ Բուխարա, որտեղ էլ սպանվեց: Աբաղայի գործը հիմնահատակ ավերեց Բուխարան: Մոնղոլական երկու ուլուսների միջև սահմանը նախկինի պես մնաց Ամու-Դարյա գետը: Արևմուտքում Հուլավյանները շարունակում էին պայքարել մամլուքների դեմ: Այս ժամանակաշրջանում Եգիպտոսի սուլթան Բեյբարսը ներխուժում է մոնղոլների դաշնակից Կիլիկիա և մեծ ավերածություններ գործում: Մոնղոլական գործն իր հերթին ներխուժում է Ասորիք, սակայն 1277 թ. պարտություն է կրում Բեյբարսի գործերից: Վերջինս ռազմական գործողությունները չի շարունակում, այլ վերադառնում է Եգիպտոս, որտեղ էլ շուտով վախճանվում է: Աբաղան նս երկու անգամ՝ 1278 և 1279 թթ., փորձում է գրավել Ասորիքը, սակայն հաջողության չի հասնում և մոնղոլ-եգիպտական սահմանը մնում է անփոփոխ՝ Եփրատ գետը:

Աբաղայից հետո նոր իլխան ընտրվեց նրա եղբայր **Թեքուդարը (1282-1284)**, որն ընդունում է իսլամ՝ անվանակոչվելով **Ահմեդ**: Նա իսլամը հռչակեց պետական կրոն և փորձեց բարիդրացիական հարաբերություններ հաստատել Եգիպտոսի հետ: Նրա կարգադրությամբ հալածանքներ սկսվեցին քրիստոնյաների նկատմամբ: Թեքուդարի այս քաղաքականությունից դժգոհ մոնղոլ ազնվականությունն իլխան ընտրեց Աբաղայի որդի **Արդունին (1284-1291)**: Վերջինս անհանդուրժողական վերաբերմունք որդեգրեց մահմեդականների նկատմամբ: Նա որոշեց պետական համակարգը մաքրել

մահմեդականներից՝ նրանց փոխարինելով քրիստոնյաներով ու հրեաներով: Սակայն այս քաղաքականությունը խռովությունների ու ապստամբությունների տեղիք տվեց: Արդունը շարունակեց շփումներն Արևմտյան Եվրոպայի հետ՝ փորձելով հակամամյուրքյան ճակատ ստեղծել, սակայն հաջողության չհասավ: Արդունի մահից հետո իլխան ընտրվեց **Քելդաթուն (1291-1295)**, որի օրոք պետությունը հայտնվեց տնտեսական ու քաղաքական ծանր ճգնաժամի մեջ: Ստեղծված իրավիճակից օգտվեցին մոնղոլական ազնվականության ռազմական թևի ներկայացուցիչները և 1295 թ. իլխան ընտրեցին **Ղազանին (1295-1304)**: Նրան կարելի է համարել Հուլավյանների ուլուսի երկրորդ հիմնադիրը, քանի որ նրա օրոք Իլխանությունը կենտրոնից վերջնականապես անկախացավ:

Ղազան խանը ներքին ու արտաքին ակտիվ քաղաքականություն էր վարում՝ ձգտելով Հուլավյաններին վերադարձնել նախկին փառքը: Թեև Ղազան խանը քաղաքական նկատառումներով ընդունեց իսլամ, քանզի Իրանում հաստատված մոնղոլների հիմնական մասն արդեն իսլամադավան էր, սակայն աշխատում էր հավատարիմ մնալ մոնղոլական ավանդույթներին: Ներքին խռովությունների ու ապստամբությունների մի մասը ճնշելու համար նա հենվեց մահմեդականների, մասնավորապես իսլամ ընդունած մոնղոլական ռազմական վերնախավի վրա: Հուլավյանների ուլուսում առկա ներքաղաքական խնդիրներից փորձեցին օգտվել արտաքին թշնամիները: 1295 թ. Չաղաթայների գորքը ներխուժեց Խորասան ու Մազանդարան, սակայն Հուլավյաններին հաջողվեց հաղթանակ տանել և վերականգնել արևելյան սահմանը: Ավելի անհանգիստ էր իրավիճակն Արևմուտքում: Եգիպտոսի մամյուրքներն անընդհատ հարձակվում էին Կիլիկյան Հայաստանի վրա: Ղազան խանը ևս չիրաժարվեց Ասորիքը նվաճելու ծրագրից և 1299-1303 թթ. երեք արշավանք կազմակերպեց: Սկզբնական շրջանում մոնղոլները հասնում են որոշ հաջողությունների և գրավում են Հալեպն ու Դամասկոսը, սակայն շուտով մամյուրքների հարվածների տակ ստիպված են լինում նահանջել մինչև Եփրատ: Ղազան խանն ավելի լուրջ բարեփոխումներ է կատարում երկրի ներքին կյանքում: Ներքաղաքական ճգնաժամի հաղթահարմանն ուղղված մի շարք բարեփոխումների

ղեկավարումն իլխանը հանձնարարում է միջնադարյան պարսիկ հայտնի պատմիչ, աստվածաբան, բժիշկ ու քաղաքական գործիչ **Ռաշիդ-ադ-դին Ֆազլուլահ Համադանին (1247-1318)**: Վերջինս թողել է **«Տարեգրությունների ժողովածու»** հայտնի երկասիրությունը, որտեղ շարադրված է մոնղոլների պատմությունը: Նախ բարեփոխումներ իրականացվեցին գյուղատնտեսության բնագավառում, որտեղ կարևորը հողային ռեֆորմն էր, ըստ որի բոլոր զինվորներին հողաբաժին տրվեց (իքթա): Վերջնականապես հաստատվեց գյուղացիներին հողին ամրագրելու կարգը, քանզի նրանք այլևս իրավունք չունեին լքել իրենց հողակտորը: Մեծ տեղ հատկացվեց առևտրին, վաճառականներին տրվեց լրացուցիչ արտոնություններ, հաստատվեց միասնական դրամական միավոր՝ արծաթյա դիրհեմը: Ղազան խանը ծավալեց շինարարական լայն գործունեություն, մասնավորապես կառուցապատեց մայրաքաղաք Թավրիզը: Նրա օրոք տեղի ունեցած կարևոր փոփոխություններից էր նաև այն, որ պետության ղեկավար դերը մոնղոլ-թյուրքական ռազմաքաղաքական ընտրախավից անցավ իրանական ազնվականությանը և արդեն նրա մաս կազմող իսլամ ընդունած և իրանական մշակույթը յուրացրած մոնղոլներին:

Ղազան իլխանի մահից հետո գահը ժառանգում է **Օլջեյթուն (1304-1316)**, որը շարունակում է եղբոր բարենորոգումների քաղաքականությունը, սակայն ոչ նախկին արդյունավետությամբ ու խորությամբ: 1307 թ. նա մայրաքաղաքը տեղափոխում է **Սուլթանիե**: Մայրաքաղաքի տեղափոխությունը ոչ թե իլխանի անձնական նախաձեռնությունների հետ էր կապված, այլ ձևավորված այն իրողության, որ մոնղոլական էթնոսն ամբողջովին կտրվել էր հայրենական ավանդներից և ներառվել էր իսլամական (իրանական) մշակույթի մեջ, ուստի Թավրիզը, որը պահպանում էր մոնղոլական ավանդներն այլևս չէր համապատասխանում նոր խավի պահանջներին և հետաքրքրություններին: Խոսքը մասնավորապես վերաբերում է իսլամի նկատմամբ իլխանների քաղաքականության մեջ տեղի ունեցած փոփոխություններին՝ թշնամական վերաբերմունքից մինչև պետական կրոն հռչակելը: Օլջեյթունի արտաքին քաղաքականության մեջ նկատվում է նաև Իրանն իսլամի կենտրոն դարձնելու միտումներ, որն առաջին հերթին ուղղված էր Եգիպտոսի դեմ: Սուլ-


թանհեն դարձել է Արևելքում կաթոլիկության քարոզչության հիմնական կենտրոններից մեկը, որը վկայում է քրիստոնեության նկատմամբ մոնղոլների դեռևս շարունակվող հանդուրժողականության մասին: Նոր իլխանը ևս նախորդների նման ծրագրում էր նվաճել Ասորիքը, ուստի դեսպաններ է ուղարկում Ֆրանսիայի թագավոր Ֆիլիպ IV Գեղեցիկի (1285-1314) և Անգլիայի թագավոր Էդուարդ I-ի (1272-1307) մոտ: Օլջեյթուն աշխատում էր հակամամյուքյան դաշինք ստեղծել, սակայն հաջողություն չի ունենում, ուստի փորձում է իր ծրագիրն իրականացնել առանց դաշնակիցների: Նա արշավում է Մոսուլ, սակայն 1312 թ. ստիպված նահանջում է՝ պարենամթերքի պակասի ու հիվանդությունների պատճառով: 1314 թ. Չաղաթայների զորքերն արշավում են Խորասան, սակայն պարտություն են կրում և նահանջում Բուխարա:

Օլջեյթու իլխանի մահից հետո գահ է բարձրանում նրա որդի **Աբու-Մայիդ Բահադուրը (1317-1335)**, սակայն երկիրը ղեկավարում էր մոնղոլական էմիր **Չոբանը**: Այս ժամանակ Չաղաթայները դարձյալ ներխուժում են Խորասան, գործում բազում ավերածություններ և միայն 1320 թ. է հաջողվում նրանց դուրս քշել երկրից: Չոբանը հաջողությամբ ճնշում է նաև Փոքր Ասիայում թյուրքական էմիրների բարձրացած ապստամբությունները: Այս շրջանում Դերբենտ են ներխուժում ղփչաղական խան Ուզբեկի զորքերը, որոնց հաջողվում է գրավել Ատրպատականը: Արևմուտքում կրկին ակտիվանում է Եգիպտոսը և սկսում է օժանդակել Փոքր Ասիայի թյուրքական էմիրներին և համատեղ ռազմական գործողություններ են սկսում Իլխանության դեմ: Աբու-Մայիդը, չկարողանալով դիմագրավել, բանակցություններ է սկսում մամյուքների հետ և 1323 թ. նրանց միջև կնքվում է հաշտության պայմանագիր: Հուլավյանների մղած անհաջող պատերազմներն ու երկրի ներսում ծավալված ապստամբությունները սրեցին ներքաղաքական իրավիճակը: Ամենուր տարածված էր սովը, աղքատությունը, կամայականությունները, կաշառակերությունը, որոնք պետությունը տանում էին դեպի անկում: Ճգնժամը խորանում է իշխանության համար մղվող պայքարով, որը սուր բնույթ է ստանում 1335 թ., երբ Աբու-Մայիդը վախճանվում է և, ըստ էության, Հուլավյանների միասնական ուլուսը դադարում է գո-

ություն ունենալուց, իսկ իլխաններն էլ գտնվում էին այս կամ այն պետության հովանու ներքո: Քանի որ նա արու զավակ չուներ, քաղաքական ընտրախավի տարբեր խմբավորումներն առաջ են քաշում իրենց թեկնածուներին և դաժան կոիվներ մղում իշխանության համար: Այսպես, արքունի պաշտոնյաները (պալատական ընտրախավ) մեծ վեզիր Ղիյաս-ադ-դինի գլխավորությամբ իլխան են հռչակում **Արբային**, որը մեկ տարի էլ չի կառավարում: Ռազմաքոչվորական ընտրախավը (էմիրներ) առաջ է քաշում իր թեկնածուին՝ **Մուսային**: Երկու խմբավորումների զորքերի միջև ճակատամարտը տեղի է ունենում **Մարաղայի դաշտում 1336 թ. ապրիլին**: Պալատական խմբավորումը պարտություն է կրում, իսկ Ղիյաս-ադ-դինն ու Արբան մահապատժի են ենթարկվում: Հաղթանակից հետո ռազմական խմբավորումը ևս պատակտվում է և կողմերից յուրաքանչյուրն առաջ է քաշում իլխանի իր թեկնածուին: Այսպես Ջելայիրյանները պատերազմ էին մղում Չոբանյանների դեմ: Նրանց միջև տեղի է ունենում երկու ճակատամարտ (1338 թ. և 1340 թ.), որոնք ավարտվում են Չոբանյանների հաղթանակով: Փաստորեն Հուլավյանների ուլուսը վերածվեց տարածքի բաժանման համար պայքարի թատերաբեմի, որին մասնակցում էին մոնղոլները, թյուրքերը և իրանցիները: 1353 թ. վերջին՝ իլխան **Թուղա Թիմուրի (1336-1353)** սպանությունից հետո, Հուլավյանների պետությունը վերջնականապես մասնատվեց և ուլուսի տարածքում առաջացան մի շարք անկախ իշխանություններ, որոնցից հայտնի դարձան Քուրսերը (1245-1389), Մուզաֆարյանները (1313-1393), Չոբանյանները (1336-1357), Ջելայիրյանները (1340-1432):

Մոնղոլական կայսրության հիմնադիր Չինգիզ խանն էր որևէ իր ուրույն տեղի է գրավեցում համաշխարհային պատմության նյութություն: Ըստ էության, Մոնղոլական տերությունն իր վարչապետությանն ու ռազմական համալսարանով, ինչպես նաև ծրագրվող նվաճումներով, Չինգիզ խանի մտածողությունը արդյունքի էր հասնում: Խախտվելու էր նվաճումները, քննարկվում պետության սահմանները և պատգամում իր ժառանգիներին նշանակվել են նախաձեռնված ծրագրերը: Նրա գործունեության կարևոր կողմն-

Իրանի իլխանները



ԱՍՓՈՓՈՒՏ

XIII դ. սկզբին առաջացավ Մոնղոլական պետությունը, որը կարճ ժամանակաշրջանում իրականացրած հսկայածավալ նվաճումների արդյունքում վերածվեց կայսրության: Կենտրոնական Ասիայում ձևավորված Մոնղոլական տերությունը քոչվորական քաղաքակրթության կրող էր, ավելին այն ժառանգել էր տարածաշրջանի նախկին քոչվորական կայսրությունների ռազմաքաղաքական ու մշակութային կազմակերպման կերպերը: Մոնղոլական կայսրության կազմում ընդգրկվեցին զարգացման ավելի բարձր մակարդակի վրա գտնվող քաղաքակրթություններ, ուստի ժամանակի ընթացքում մոնղոլները ենթարկվեցին տարաբնույթ քաղաքակրթական՝ չինական, իրանական, թյուրքական, ազդեցությունների: Սա համարվում է Մոնղոլական տերության առանձնահատկություններից մեկը, քանզի մոնղոլները տարբեր քաղաքակրթությունները ներառելով ռազմավարչական մեկ միավորի մեջ, հնարավորություն ստեղծեցին դրանց երկխոսությանը տարածության ու ժամանակի մեջ:

Մոնղոլական տերության հիմքը զինական ուժն էր, մասնավորապես Չինգիզ խանի թիկնազորը, որն այս կայսրության կարևոր առանձնահատկություններից էր: Թիկնազորում պատրաստում էին ոչ միայն զինվորականներ, այլև պետական գործիչներ: Մոնղոլական բանակն առանձնանում էր իր տոկունությամբ ու դիմացկունությամբ, ինչն էլ կարևոր պայման է հանդիսացել աշխարհակալ նվաճումների համար:

Մոնղոլական կայսրության հիմնադիրը Չինգիզ խանն էր, որն իր ուրույն տեղն է զբաղեցնում համաշխարհային պատմության հուշվությունում: Ըստ էության, Մոնղոլական տերությունն, իր վարչաքաղաքական ու ռազմական համակարգերով, ինչպես նաև ծրագրվող նվաճումներով, Չինգիզ խանի մտահայեցողության արդյունքն էր: Նա անձամբ նախաձեռնում էր նվաճումները, ընդարձակում պետության սահմանները և պատգամում իր ժառանգներին կյանքի կոչել նախատեսված ծրագրերը: Նրա գործունեության կարևոր կողմե-

րից է քաղաքակրթությունների համադրման փորձերը և մշակութային երկխոսության կազմակերպումը:

Ինչպես բոլոր քոչվորական կայսրությունները, այնպես էլ Մոնղոլական տերությունը երկար կյանք չի ունենում: Այն դեռևս Չինգիզ խանի կողմից առանձնացված չորս ուլուսների հիմնա վրա բաժանվում է չորս առանձին պետությունների: Այս պետությունների կազմակերպման հիմնական սկզբունքը ևս ռազմական ուժն էր, որի թուլացումը տրամաբանորեն հանգեցնում էր պետության տրոհման և անկման: Մյուս կողմից, այդ պետություններից յուրաքանչյուրը գտնվում էր տարաբնույթ տարածաշրջաններում և ենթարկվում էր այնտեղ ընթացող քաղաքական, տնտեսական, մշակութային փոխակերպումներին, ինչի արդյունքում էլ անկման գործընթացները դառնում էին անխուսափելի: Մոնղոլական այս պետությունների անկման համար կարևոր գործոն էր տեղական և մոնղոլական ավանդական քոչվորական ավանդույթների բախումը, մասնավորապես հարկավոր է առանձնացնել կրոնական գործոնը: Ըստ էության, միասնական Մոնղոլական տերության պայմաններում հնարավոր էր ավելի երկար պահպանել քոչվորական ավանդույթները, հետևաբար նաև մոնղոլների գերիշխանությունը: Սակայն իրավիճակը փոխվում է, երբ առանձնանում են չորս ուլուսները, որոնք էլ ներքին փոխակերպումների ու արտաքին հարվածների ներքո դադարում են գոյություն ունենալուց:

Սկզբնաղբյուրներ

1. Արևելյի Վ., Տիեզերական պատմություն, Եր., 2001:
2. Ակներցի Գ., Պատմություն նետաձիգների ազգի մասին, Եր., 2011:
3. Գանձակեցի Կ., Պատմություն Հայոց, աշխատությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Եր., 1961:
4. Իբն ալ-Ասիր, Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Արաբական աղբյուրներ, Բ, Եր., 1981:
5. Հեթում Պատմիչ, Թաթարաց. Յեղեալ ի Լատին օրինակե ի հայ բարբառ ի ձեռն Հ. Սկրտչի աթոռակալ Վարդապետի Աիգերեան, Վենետիկ, 1842:
6. Սմբատ Սպարտապետ, Տարեգիրք, Ի Վենետիկ-Ս. Ղազար, 1956:
7. Козин С. А., Сокровенное сказание. Монгольская хроника 1240 г. «Юань чао би ши», Т. 1, М.-Л., 1941.
8. Лубсан Данзан, Алтан тобчи («Золотое сказание»), Пер., коммент. и прил. Шестиной Н. П., М., 1973.
9. После Марко Поло, Путешествия западных чужеземцев в страны трех Индий, перевод с латинского и староитальянского языков, введение и примечания Я. М. Света, М., 1968.
10. Путешествие в восточные страны Плано Карпини и Рубрука, М., 1957.
11. Путешествия венецианца Марко Поло в XIII столетии, М., 1863.
12. Рашид ад-Дин, Сб. летописей, т.1, кн. 2, пер. с персидск. О. И. Смирновой, М.-Л., 1952.
13. Родословное древо тюрков, Сочинение Абуль-Гази, хивинского хана, Пер. и предисл. Саблукова Г. С., 1906.

Ուսումնասիրություններ

14. Բաբայան Լ. Հ., Մոնղոլների վարչա-տնտեսական սիստեմը և հարկային քաղաքականությունը Հայաստանում, Եր., 1953:
15. Բայրուրդյան Վ., Իրանի պատմություն, Եր., 2006:
16. Բարսեղյան Բ., Հեթում Ա արքան միջնադարի հանճարեղ դիվանագետը, Էջմիածին, 2009:
17. Բոռնազյան Ս. Վ., Սոցիալ-տնտեսական հարաբերությունները Կիլիկյան հայկական պետությունում XII-XIV դարերում, Եր., 1973:
18. Գալստյան Ա., Մոնղոլական շրջանի հայ դիվանագիտության պատմությունից, Լենինական, 1945:
19. Զուլայան Մ. Վ., Հայ ժողովրդի XIII-XVIII դարերի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների, գիրք Ա, քաղաքական պատմություն, Եր., 1990:
20. Հայոց պատմություն, հ. II, գիրք II, միջին դարեր, Եր., 2014:
21. Մանանդյան Հ., Երկեր, հ. Գ, Եր., 1977:
22. Մինասյան Ն., Քոչվորական քաղաքակրթության տարածական կազմակերպման հիմնախնդիրները Չինգիզ խանի ընկալումներում, Անհատը պատմության հոլովությունում գիտական նյութերի ժողովածու, Եր., 2015, էջ 45-55:
23. Միքայելյան Գ. Գ., Կիլիկյան հայկական պետության պատմություն, Եր., 2007:
24. Մութաֆյան Վ., Կիլիկիան կայսրությունների խաչմերուկում, Եր., 2001:
25. Խաչիկեան Լ., Արտազի հայկական իշխանությունը և Օրծորի դպրոցը, Բանբեր Մանասդարանի, № 11, Եր., 1973, էջ 125-210:
26. Տեր-Պետրոսյան Լ., Խաչակիրները և հայերը, հ. Ա, Եր., 2005:
27. Տեր-Պետրոսյան Լ., Խաչակիրները և հայերը, հ. Բ, Եր., 2007:
28. Բазаров Б. В., Крадин Н. Н., Скрынникова Т. Д., Монгольская империя и кочевой мир, Улан-Удэ, 2004.
29. Бартольд В. В., Образование империи Чингиз-хана. Чингизхан. Сочинения, т. V, М., 1968.

30. Бартольд В. В., Туркестан в эпоху монгольского нашествия, Сочинения, т. I, М., 1963.
31. Вернадский Г. В., О составе Великой Ясы Чингисхана, Bruxelles, 1939.
32. Владимирцов Б. Я., Общественный строй монголов. Монгольский кочевой феодализм, Л., 1934.
33. Греков Б. Д., Якубовский А. Ю., Золотая Орда и ее падение, М.-Л., 1950.
34. Гумилёв Л. Н., Древняя Русь и Великая степь, М., 2006.
35. Гумилёв Л. Н., От Руси к России. Очерки этнической истории, М., 2008.
36. Гумилёв Л. Н., Поиски вымышленного царства, М., 2008.
37. Гумилёв Л. Н., Чёрная легенда. Дружья и недруги Великой степи, М., 1994.
38. Доманин А., Монгольская империя Чингизидов. Чингисхан и его преемники, М., 2010.
39. Кульпин Э. С., Золотая Орда, М., 1998.
40. Крадин Н. Н., Скрынникова Т. Д., Империя Чингис-хана, М., 2006.
41. Кычанов Е. И., Кочевые государство от гунов до маньчжуров, М., 1997.
42. Кычанов Е. И., Жизнь Темучжина, думавшего покорить мир, М., 1995.
43. Лэмб Г., Чингисхан. Властелин мира, М., 2007.
44. Почекаев Р. Ю., Право Золотой Орды, Казань, 2009.
45. Россаби Моррис, Золотой век Империи Монголов. Жизнь и эпоха, Санкт-Петербург, 2009.
46. Султанов Т. И., Чингиз-хан и Чингизиды. Судьба и власть, М., 2006.
47. Трепавлов В. В., Государственный строй Монгольской империи XIII в., М., 1993.
48. Трепавлов В. В., Золотая Орда в XIV столетии, М., 2010.
49. Филлипс Э. Д., Монголы. Основатели империи Великих ханов, М., 2004.

50. Хара-Даван Э., Чингисхан. Великий завоеватель, М., 2008.
51. Хара-Даван Э., Чингисхан как полководец и его наследие, Алма-Ата, 1991.
52. Халиков А. Х., Монголы, татары, Золотая Орда и Булгария, Казань, 1994.
53. Храпачевский Р. П., Военная держава Чингисхана, М., 2005.
54. Шамси Султан, Золотая Орда накануне распада, Казань, 2008.
55. Kwanten Luc, Imperial Nomads: A History of Central Asia, 500-1500, Philadelphia, 1979.
56. Leo de Hartog, Genghis Khan Conqueror of the World, London, 2004.
57. Lan George, Daily Life in The Mongol Empire, USA, 2006.
58. Man John, Genghis Khan, Life, Death and Resurrection, London, 2004.
59. Ratchnevsky Paul, Genghis Khan: His Life and Legacy, ed. Thomas Haining, Oxford, 1991.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Դասախոսության կառույցը.....5

Թեմա 1. Մոնղոլական ցեղերը VII-XII դարերում և նրանց հարևանները.....7

Թեմա 2. Մոնղոլական տերության կազմավորումը.....25

Թեմա 3. Պետական կարգը.....38

Թեմա 4. Չինգիզյանների նվաճումները.....46

Թեմա 5. Մոնղոլները և Կիլիկյան Հայաստանը.....64

Թեմա 6. Մոնղոլական տերության տրոհումը և անկումը.....75

- ✓ Յուան արքայատունը Չինաստանում.....76
- ✓ Չաղաթայների պետությունը Կենտրոնական Ասիայում...84
- ✓ Ոսկե Հորդա.....92
- ✓ Հուլավյաններն Իրանում.....102

ԱՄՓՈՓՈՒՄ.....111

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....113

Նելլի Արտաշեսի Մինասյան
Մոնղոլական տերության կազմավորումը և անկումը
(Դասախոսությունների նյութեր)

Nelli Artashes Minasyan
The Formation and Decline of the Mongol Empire
(Lecture materials)

Нелли Арташесовна Минасян
Формирование и падение Монгольской империи
(Материалы к лекции)

Տպագրությունը՝ թվային

Չափսը՝ 60x84 1/8

Թուղթը՝ օֆսեթ 70 գ/մ²

Տառատեսակը՝ Sylfaen

Ծավալը՝ 7,4 պայմ. տպ. մասով

Տպաքանակը՝ 200 օրինակ



Հասցեն՝ Երևան, 0070, Հ. Քաջազնունու փող., 14/10

Հեռ.՝ (+374 10) 55-48-84, (41) 55-48-84

Կայք՝ www.tirpublishing.com

Էլ. փոստ՝ tirpublishinghouse@gmail.com

Տպագրվել է «Տիր» հրատարակչության տպագրատանը
Հասցեն՝ Տավուշի մարզ, գ. Կողբ, 4-րդ փող., տուն 10
Հեռ.՝ (+374 266) 5-26-39

၄
၀-၇၁
h.၇.



SIT
အိတ်အိတ်အိတ်အိတ်